

«ՑԵՂԻՆ ՄԻՐՏԸ» ժողովածու (1910)

Ընդ եղեգան փող բոց ելաներ
ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ
(Առասպելք)

ՁՈՆ

Եղեգնյա գրրչով երգեցի փառքեր.
— Քեզի ընծա՛ , իմ հայրենիք —
Սոսյաց անտառեն էի գայն կըտրեր...
— Քեզի ընծա՛ , հին հայրենիք —
Եղեգնյա գրրչով երգեցի քուրմեր.
Ընդ եղեգան փող լու՛յս ելաներ:

Եղեգնյա գրրչով երգեցի կարոտ.
— Ձեզի ընծա՛ , հայ պանդուխտներ —
Ան տարաշխարհիկ բույսի մ՛եր ծըղոտ...
— Ձեզի ընծա՛ , հեզ պանդուխտներ —
Եղեգնյա գրրչով երգեցի հարսեր.
Ընդ եղեգան փող ո՛րբ ելաներ:

Եղեգնյա գրրչով երգեցի արյուն.
— Ձեզի ընծա՛ , սուրի գոհեր —
Ան ծլած էր մոխրի մեջ իբրև կընյուն...
— Ձեզի ընծա՛ , կրակի գոհեր —
Եղեգնյա գրրչով երգեցի վերքեր.
Ընդ եղեգան փող սի՛րտս ելաներ:

Եղեգնյա գրրչով որբ տունս երգեցի.
- Քեզի ընծա՛ , հայր ալեհեր —
Ցամաքած աղբյուրեն մեր գայն հոտեցի...
- Քեզի ընծա՛ , մայր կարևեր -
Եղեգնյա գրրչով օճախս երգեցի.
Ընդ եղեգան փող ծու՛խ ելաներ:

Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի.
- Ձեզի ընծա՛ , հայ մարտիկներ -
Գրիչս եղավ անթրոց սըրտերու հնոցի...
- Ձեզի ընծա՛ , քաջ մարտիկներ -

Եղեգնյա գրչով վրեժ երգեցի.
Ընդ եղեգան փող բո՛ց ելաներ:

ՆԱԽԵՐԳԱՆՔ

ՆԵՄԵՍԻՍ

Պաշտե՛ դահանակե աչքերով Աստվածուհին,
ո՛վ Ժողովուրդ, երբ բռնակալությունները կործանես, կործանե այլևս զինքն
ալ, և դո՛ւն բարձրացիր իր պատվանդանին վրա՝ շուշան մը ձեռքիդ մեջ:

Քերթողն հրսկա, մըրըրկավարս, հըրաչվի,
Նըվիրական արվեստանոցն իր մըտավ,
Եվ փակեց լայն պողպատ դրոներն հապըշտապ.
Ճեղքերուն մեջ մընացին
Արեգակին մագերն ոսկի, սանտըրված:
Լեռնակուտակ զանգված մ'ընտիր մարմարի
Այդ շենքին մեջ մըթընշաղ
Կը սպասեր՝ ձևն հագնելու հին դյուցազնի.
Եվ կամ գուցե կը հուսար
Որ աստղերեն իջնելով՝
Պիտի աստված մը գա իր մեջ բընակիլ:
Զանգվածը այդ ապառաժ մ'եր բարբարոս՝
Որուն մեջ դեռ կը մընար
Կիսավեր բույն մը արծվի.
Եվ խորն իր մեկ խոռոչին
Օձ մ'եր ծվարած ու կը նընջեր հանդարտիկ:
Քերթողն ինքզինք պահ մ'անհունին մեջ հոգվույն
Ըզզաց Աստված: Մոթտեց թևերը ջղուտ,
Ոսկեղեն մուրճը ափին մեջ, տըժգույն, վեհ,
Մարմարին դեմ, զըլխեբաց,
Հըսկայի պես կանգնեցավ...
Նըշմարեցին աչքերը ձեռք մ'այն ատեն
Մութին ծոցեն՝ կարկառուն՝
Որ վիթխարի բըռնած սափոր մը՝ պարպեց
Խորն իր հոգվույն լայնալիճ
Տիեզերքին ըստեղծահյութն հողաբույր:

Եվ քանդակեց, քանդակեց,
Եվ քանդակեց, քանդակեց:
Արվեստանոցին բյուզանդական զմբեթեն
Հույսի ձեթով լի սուրբի գանկ մը կախված
Կ'ըլլար ջահն իր լուսատու:
Ան կը տեսներ մարմարին շուրջը ձևված
Հըզոր երագն՝ որ միս կ'առնուր և ծալքեր:
Մըտածումն իր՝ այդ քարին կույս ծոցին մեջ

Իր արմատներն հուշիկ հուշիկ կը խըրեր
Ծառի մը պես ձիթենի:

Եվ քանդակեց, քանդակեց,
Եվ քանդակեց, քանդակեց...
Ամեն մի բուռն հարվածին տակ հաղթ մուրճին՝
Ինչպես թե ռուսը մը պայթող՝
Ուղիս մը կայծեր, քարերու հետ խուռնախիտ,
Կ'անձրևեին պատերն ի վար խավարչուտ
Պսակի պես քայքայվող:
Դուրսն ողկույզներն հասմիկին
Կը թափեին մուրճին մեն մի թընդունեն
Փեղկերն ի վար իրենց կապույտ ծաղիկներ:

Եվ քանդակեց, քանդակեց,
Եվ քանդակեց, քանդակեց.
Մինչև որ բիրտ վայրենությունը քարին
Նըվաճվեցավ, և ահա գլուխ մը կընոջ
Մարմարին մեջ թարմորեն
Ծաղկեցավ բա ըձըր շուշանի մ'հանգունակ:
Չըքնաղ էր ան, միանգամայն էր ահեղ.
Հելլենական արձաններու կուրուրյամբ
Կը հառեին խորունկ աչքերն՝ որոնց մեջ
Կարծես հոգին, անդունդն ի վեր մագըրցող
Կարիճի պես՝ կամաց կամաց կերևնար:

Եվ քանդակեց, քանդակեց,
Եվ քանդակեց, քանդակեց...
Բանաստեղծն իր բազուկին տակ կենսադրոշմ
Կը փորագրեր կարծես քերթված մ'ահավոր.
Խոր ծալքերուն մեջ կյանք առնող մարմարին
Մեն մի հարված դաշնակություն մ'էր քնարի,
Հանգ մ'էր, տուն մ'էր, և կամ շեշտ մ'օղասլաց:
Մեն մի հարված ռմբագոռ
Ըմբոստ երգ մ'էր ոսկի մուրճով երգըված՝
Որուն Աստված երկընքին մեջ կ'ունկընդրեր:

Եվ քանդակեց, քանդակեց,
Եվ քանդակեց, քանդակեց,
Ու ավասիկ ճոխ գանգուրներն այդ կընոջ
Զերդ ողկույզներ իրար խըռնված օձերու
Ուսերուն վրա թափեցան:
Կերտեց թիկունքն և թիկնամեջը շըքեղ,
Կերտեց թներն ամագոնի՝ որոնք թե՛
Կարող էին արձակել
Ոսկի փըքինը սիրո,

Եվ թե հրաշեկ կայծակը՝ տեգ մահընկեց:

Եվ քանդակեց, քանդակեց,
Եվ քանդակեց, քանդակեց...
Ո՛հ, ի՛նչ փույթ թե անցան անքուն գիշերներ
Եվ ցորեկներ՝ անդադար.
Ծիծե՛րն ահա, ծիծե՛րն ահա արձանին,
Ա՛յնքան մաքուր կըլորցըված, պաղպաջուն,
Որ անշուշտ կաթն անոնց մեջ պետք էր ըլլալ
Կամ լույս՝ սառած, և կամ արծաթ՝ հալըված:
Կողերն ահա, ահեղորեն շընչավոր,
Որոնց ներքև կարծես արյամբ մեծնային
Արդարության, վրեժի սաղմերն երկվորյակ:
Շի՛նեց ողն, հո՛ւյր բումբերն, ազդրերը ողորկ.
Շի՛նեց և՛ պորտն՝ որ զանգվածին մեջ հանկարծ
Քառսեն ծնող աստղի պես
Ճառագայթներ դուրս պոռթկաց:

Օ՛ն, հարվա՛ծ մ'ալ, հարվա՛ծ մ'ալ...
Գանկ ջահին մեջ, ձեթն ըսպառիլ ըսկըսավ.
Օ՛ն, հարվա՛ծ մ'ալ, հարվա՛ծ մ'ալ...
Եվ քանդակեց, քանդակեց...
<Եվ քանդակեց, քանդակեց...>
Կերտեց գուճերն և սրունքներ.
Կերտեց ոտքերն՝ որոնց տասնյակ մատերեն
Ժահրով, մեղրով խառնըված
Դըղըչահոս լույսի վտակներ բըխեցան:
Եվ շի՛նեց ան վերջապես
Կնոջ մեջքեն վար ահեղ
Սուր մ'երկայրի, սուր մ'անպատյան, սուր մ'անբիծ,
Եվ Աստուծո պես արդար:
Այն ատեն հոն մարմարիոնին խորշին մեջ
Քընացող օձն արթընցավ
Եվ փաթթելով զինք մեղմորեն այդ զենքին՝
Կաթիլ կաթիլ ըսկըսավ թույն մը կաթել:

Օ՛ն, հարվա՛ծ մ'ալ, հարվա՛ծ մ'ալ դեռ, և ահա
Պիտի գործն այդ ավարտի:
Քանդակագործ քերթողն հանկարծ խորշումեց
Մարգարտապսակ ճակատը ջինջ քըրտինքով.
Այդ ի՛նչ արձան, անունն ի՛նչ էր այդ կընոջ.
Գորգոնա՞ մ'էր, Հերա՞ն քինտո, թե՛ Իսիս.
Պատվանդանին վրա հըսկա
Փորագրեց.- Նեմեսիս:

Ահա երազն իր, կը շընչեր, կը խորհեր.

Իր երազն այդ մարմարեղեն՝ գոր երկար
Ատեն սրբտին հավքերուն մեջ այն կըրեց:
Արդարության և Վրեժի
Դիցուհին այդ՝ աղջիկն էր իր կորովին
Ձոր հրդացավ, ողնածուծովը սընույց
Այն օրեն վեր՝ երբ հըլությամբ հարսնացավ
Ժողովուրդին արյան հետ
Գիտակցությունն իր բեղուն:
Այլևս ի՛նչ փույթ թե մնաց թաղված օրերով
Արվեստնոցին դամբանական մութին մեջ:
Ի՛նչ փույթ թե արդ ճակատեն վար կը հոսի
Բարի քըրտինքն հոգնության,
Եվ ուսերուն և գըլխուն վրա սևահեր՝
Իբրև ըլլար ջաղացպան մ'ան կը նըստի
Ճերմակ փոշին մարմարին.
Եվ խիտ երկար թարթիչներն իր կը նմանին
Աղավնյակի մը թևերուն ըսպիտակ.
Ի՛նչ փույթ թե ան, ա՛հ, չըտեսավ կույս գարնան
Լուսակարկաջ աղբյուրներուն մեջ ժըպտիլն,
Եվ չըքամեց դեռ խաղողի ողկույզներ
Բաժակին մեջ բյուրեղյա.
Կամ չըխառնեց գանգուրներն իր ասպետի
Բըլուրներուն վրա պարող
Աղջիկներուն հողմատարիկ վարսերուն:
Ո՛հ, ի՛նչ փույթ կյանքը մեռնող,
Երբոր երազը կ'ապրի,
Երբոր երազն անմա հ է:

Մուրճը ձեռքին մեծ բանաստեղծը հաղթական
Արձանին խիստ աչքերուն մեջ կը հառի.
Եվ անոնց մեջ կը ճանչնա
Ինքզի՛նք, ամբողջ, անթերի:
Կը ճանչնա սուրբ մարմարիոնն այն՝ որ առավ
Բազկին տակ կյանք, որ այդտեղ
Եկավ զանգված մ'իր բըրտության մեջ նընջող
Եվ արթընցավ Դիցուհի .
Զերթ քարափերթ մ'ըստրուկ ինկավ մուրճին տակ,
Եվ կանգնեցավ Վրիժուհի :

Ավարտած էր ամեն գործ.
Ահա մեջտեղն էր, Նեմեսիսը, կանգուն,
Պաշտըվելու, ընդունելու ողջակեզ
Այլևրս կա զմ և պատրաստ:
Այն ժամանակ քերթողն ուրախ, գոհունակ,
Քաշեց նիզերը, բացավ
Պըղնձե դռներն հսկայական գավիթին.

Նույն ատեն լույս մը դեմեն
Երկինքն ի վար այնպես արձանն ողողեց
Որ դիցուհիվույն մարմինը շուրջն ըսկըսավ
Ճառագայթներ աձակել:
Խըտղըտեցույց ճերմակությունն իրանին
Աչքերն աղվոր օրիորդի մ'որ դեմի
Պատըզգամբին նըստած ժանյակ կը հյուսեր:
Չյունեղ ժայռ մ'եր կարծես`
Որ կը ցըցվեր արևուն մեջ` հոլանի:
Կը թափեին ուսերեն վար, կուրծքեն վար.
Շողի հազար վտակներ, հազար ալիքներ:
Քերթողն անգամ մըն ալ անոր նայեցավ.
Եվ ճակատին վրա ճանչցավ
Անգամ մըն ալ դուստրըն իր հետտ արյունին:
Տըվավ համբյուր մ'երկյուղած
Մեջտեղն անոր ծիծերուն,
Ուրկե մընաց շըրթունքներեն վար առկալի
Լույսի կաթիլ մը` վաղվան
Նոր վրեժներու արգասիչ:
Հետո նետեց ծանրակիր մուրճը ձեռքեն.
Թըր սոթոված պատվանդանին վրա դըրավ.
Եվ գըլուխն ալ թևին վրա.
Եվ իբր առյուծ մը պատկող`
Հոգնած, քըրտնած և վըսեմ,
Աստվածուհիվույն ոտքերուն տակ քընացավ:
Ժողովո՛ւրդն է, ժողովո՛ւրդն է, որ կու գա,
Ճամբաներուն, փողոցներուն մեջ Քաղքին
Գետեր են որ թըխակոհակ կը հոսին.
Հարստահարված ժողովուրդն է որ կու գա.
Անոնք տեսան Նեմեսիսի վեհ արձանն,
Եվ քուրմեր են, վրեժի քուրմեր, և ահա
Անո՛ր, անո՛ր կը դիմեն:
Գործատունեն, թիարանեն, բանտերեն
Գըրոհ կու տան: Արյունոտ են ու քաղցած:
Դեռ բեկորներ շըղթայի` գոր ջարդեցին,
Մերկ ոտքերուն հետ ընդքաշ
Սալհատակին շըռինդ շըռինդ կը հընչեն:
Ոմանք սակրով, ոմանք մուրճով են զինված.
Դեմքերուն վրա արյունոռուշտ
Կը փայլակե կատաղությունն` հեռուեն
Մերկացնելով մարգարտաշող կըրճըտումն
Ակռաներուն մարդու միսի անոթի:
Մերկ են կիներն իրենց ամբողջ ծիծերով,
Եվ մանուկներ` բոպիկ`
Որոնց տըժգույն ճակատեն
Գարունն ընդհուպ կը թափթըփի վարդ առ վարդ

Դեռ չավարտած իր բողբոջումը առույգ:
Ատելության գոռուկոչ մ'է՝ կը պոռթկա,
Կը տարածվի պողոտայե պողոտա
Քաղաքին մեջ բովանդակ:
Ամեն շրթա կը բեկտի,
Եվ կը փրչի ամեն բանտ.
Հրապարակին մեջտեղ կրակի կը տըրվի
Կառափնարանն՝ հերոսներուն արյունեն
Վարդակարմիր և ճարպոտ,
Եվ իր մեծ բոցն երկնուր
Ամբոխներուն զիտակցության կ'ըլլա ջահ:
Ամեն խըրճիթ ըմբոստ մը դուրս կը պոռթկա,
Ամեն շիրմե նահատակ մ'հաղթ կը հառնու
Նո՛ր միտով, նո՛ր ըղեղով, նո՛ր գենքերով
Ըսպառագեն: Ժողովո՛ւ ւրդն է հող կըրծող.
Մինչև մեջքն իր՝ տիղմին մեջ
Ուրիշներու դըղյակ շինող ամբոխն է՝
Որ ոտքի միակ մոլեգնադրույթ ոստումով
Նույն իր խորունկ գերեզմանին քարին վրա
Ահավասիկ կը կանգնի:
Եվ մարդկային օվկիանն այդ փըրփրագոռ
Կ'եռա խորքերն իր մըռայլ.
Եվ ալիքներն հառաջ կ'երթան մահադող.
Եվ կը թըքեն իրենց փըրփուրը հորձքի
Պալատներուն մինչև քիվերն, ու մինչև
Ճակատն արփվույն անտարբեր:
Քըրջավո՛ր են, ահավո՛ր են, բայց այսօր
Հանճարներու, դարերու
Ամբողջ մտածումն, ամբողջ վաստակը խըմող
Գաղափարին արծիվի թեն ըսպիտակ
Եկավ դըպչիլ անոնց դեռ կույս ճակատին:
Եվ անոնք ուղիս ճամբաներե հավաքված՝
Այսօր ունին վըսեմությունն օվկիանի.
Եվ կը մոնչեն, կը հայհոյեն, կ'ադոթեն,
Կը մըրմըռան բըռնության դեմ ծուփ առ ծուփ.
– Վըրե՛ժ, վըրե՛ժ, Նեմեսի՛ս:

Եվ Նեմեսիսն հո՛ն է, հո՛ն է մխիթարիչ
Քենն երկնային. ձյունափարփառ մարմինն իր
Լուսնակին պես ալիքներն այդ կը քաշե
Դեպի ծոցն իր մայրենի:
Եվ ժողովուրդն արձանին շուրջ կը դիզվի
Հետք հետքի վրա, խուռնախիտ,
Եվ կըզակներ կըռթընցըված ուսերու:
Առջևը վեհ Դիցուհվույն
Ամեն ոք իր վերքը կուրծքին կը բանա.

Պարմանիներ ցույց կու տան
 Թներն իրենց կոտրած՝ շրդթա կոտրելեն.
 Մայրերն ահա վեր կ'առնեն սև-սև քողեր
 Անոնց ծայքին մեջ բանալով գանկիկներ
 Մանուկներու՝ այրուձիին տակ ճրգմված,
 Եվ պառավներն անոր առջև կը փրռեն
 Քրդամիդները կարմիր
 Դրբժված մորթված դյուցազնական թռոններու:
 Եվ կը բերեն ամենն ալ
 Իրենց վերջին հարըստությունը՝ նըվեր,
 Եվ ծընրադիր՝ անիծախառն աղերսով
 Արտասավազին միահամուռ կը գոչեն.
 – «Ո՛վ Նեմեսիս, Անվրիպելի դ, Վրիժուհի՛ դ,
 Մեր տառապանքն, անկումը մեր կը տեսնե՛ս.
 Մեր արցունքի մեկ շիթին
 Օվկիանական անհունությունը արդյոք
 Քու ափիդ մեջ կը շռեցի՞ր:
 Բա՛վ է փառքերն ու հաճույքներն ապրեցնենք
 Մեր արյունին արյուններով ու մինչև
 Ոսկորներնուս քըրտինքով.
 Բա՛վ է սվինները պատռեն
 Մեր արգանդին մեջ հավետ
 Լուսաթաղանթն արշալույսի սաղմերուն.
 Բա՛վ է անիվը գործատան փերթ առ փերթ
 Խըլէ մեր միսն և յուղտե ճըղուղն իր.
 Բա՛վ է, բա՛վ է մեր բովանդակ կյանքին մեջ
 Խարազանված թիկունքներնուս վրա կը բերենք
 Մեր շիրմաքարն ու երթանք ա՛յսպես շիրիմ:
 Վըրեժի ժամն ա՛լ հասավ.
 Նըշկահումի ամպրոպահունչ ժամն հասավ:
 Ո՛ւժ տուր մեզի, ոգևորե՛ և մըղե՛.
 Դո՛ւ մեզ Աստված, դո՛ւ Տիրամայր, դե՛հ իջիր
 Պատվանդանեդ և ձուլե մեզ կամքիդ մեջ,
 Եվ օրենքներդ գըրե
 Մեր ճակատին վըրա արյան գըրերով:
 Քու ժողովուրդըդ մե՛նք ենք.
 Պիտ՛ ըսպաննենք մեր աստվածներն հին և նոր
 Եվ աճյունին վրա անոնց՝
 Ատտիկեի և մեհյանեդ ալ հոյակապ
 Պիտ՛ քու մեհյանըդ կանգնենք
 Պիտ՛ կործանենք ապարանքներ ու բանտեր՝
 Եվ քառանկյուն սալքարերովն իրենց հաղթ
 Պիտի բազինը՛ դ կանգնենք:
 Ամեն տարի մահատոնիդ նեմեսյան
 Ատելության ի՛նչ նըվազներ պիտ՛ հընչեն.
 Պիտի զարթնուն ի՛նչ մոռցըված մեռելներ՝

Եվ խըմելով արյունախա՛ռն գինին,
Զոր սափորով իրենց շիրմին պիտ' դրնենք,
Արևուն տակ, գոր կարուտցան, ձեռք ձեռքի
Պիտի պարեն շուրջն արձանիդ ` հանձնելով
Իրենց պատանքը հովին:
Իջի՛ր մեր մեջ, և բընակե լոկ մե՛ր մեջ.
Օ՛հ, ո՛րքան դու չըքնադ ես
Եվ ո՛րքան ալ սարսափելի. աչքերդ այդ
Արդարաբար կը սպաննեն միշտ, և ձեռքերդ
Աճյուններու մեջ պատրաստ են սերմանել
Շուշան հունտեր շուշանափայլ կյանքերու.
Գանկի մը մեջ բույնն իր դընող տատրակն ես.
Աղբյուր մ'ես դու ըՍտյուքսի՝
Որ կը բըխի գերեզմանե մը կանանչ:
Ահա քեզի կը կարկառենք մեր քաղցած
Երեխաները. թող որ քո՛ւ ծոցիդ մեջ
Մըկըրտըվին, և ծըծեն կուռ ծիծերեդ
Կաթը վաղվան վըրեժին:
Օ՛ն, Նեմեսիս, իջիր մե՛ր մեջ. մեզ ըրե
Վահա՛ն լանջքիդ մարմարե,
Սո՛ւրը թևիդ անխընա:
Զի մենք ծարավ ենք արյա՛ն,
Արյա՛ն, արյա՛ն, Նեմեսիս»:

Կ'ըսեն: Իրենց գոռուգոչումն ահավոր
Կը սասանե գահերուն վրա կայսրներ,
Եվ կ'օրորե պատվանդանին վրա նընջող
Քերթողին քունն հանդարտիկ:
Կ'ըսեն: Եվ նվե՛ր Աստվածուհվույն կ'ընծայեն.
Անոր առջև արյունլըվա ձեռքերով
Կը սըփռեն վարդ ու հասմիկ:
Կույս աղջիկներ դալկադեմ
Ասեղներե ծակծակված գիրգ մատներով
Կ'հյուսեն անոր գըլխուն համար պըսակներ:
Գյուղացիներ կ'ողջակիզուն վերջին ուլն
Իրենց թափուր և ցըրտացած փարախին:
Տըղայք կընդրուկ կը ծըխեն.
Իսկ բանվորներն ու ռազմիկները պարման
Թուրերն իրենց, մուրճերն իրենց նվիրական
Կու գան անոր կըռվանին վրա հեսանել:
Եվ ժողովուրդը բովանդակ հանկարծ լուռ
Լուսընկային տակ հանդարտող ծովու պես
Կը խոնարհի աղոթքի...

(Օրհնյա՛լ ըլլաք, հառաչանքի մեջ խեղդված
Ո՛վ արցունքներ, մազերն ի վար կայլակող

Ո՛վ արյունի կաթիլներ.
Ո՛վ աղոթքներ նախատոնին կոիվներու
Մանավանդ դուք օրհնյա լ ըլլաք.
Ձեր մեջ է որ Հույսերը մոտ հաղթության
Իբրև ճերմակ աղավնիներ՝ ամենուն
Ծոցեն արփվո՛ւյն կը սլանան):

Եթերական կրակին խորեն իրիկվան,
Դեմի սարեն զառիվայր
Այն որ կ'իջնե անչափելի քայլերով
Հերոս մըն է, պերճահասակ քրքրմապետ
Նեմեսիսին կուսական,
Եվ անձնուրաց նախախնամող մարդկության:
Արևը դեռ չըմեկնած
Ճաճանչներն իր ամփոփե է շեշտուղիդ
Անոր կուրծքին կարմրաբորբ,
Ցայտեցնելով զենուզարդեն պաղպաջուն
Ճառագայթներ՝ նման բամբջի մը զըլխուն
Ծամակալ մեծ ասեղներն:
Արյուն մ'ահա կ'այլակի տակավին
Իր գոտիին արդարադատ կեռ սուրեն:
Կու գա՛, - ճակատն իր արդեն
Շաղկապված դափնիով:
Քայլերը ծանրը՝ փառքեն,
Եվ բըռնությունը ճըզմելեն՝ տենդակոխ
Ահավասիկ կ'երկփեղկեն
Ժողովուրդն այն խոնարհած
Ատելության և աղոթքին բեռին տակ:
Նեմեսիսին ձոնելու
Ան իր նըվերը ունի.
Գըխուն շուրջեն կ'արձըկե
Դափնեպըսակը՝ զոր կույսերն որբացած
Շիրիմներուն նըստած տըրտում շուքին տակ
Իրեն համար հյուսեցին.
Կ'արձըկե զայն և ձախ ձեռքովը բըռնած
Բուրյան ճյուղին մեկ ծայրեն
Մյուսով զայն կը մերկացնե, սըփռելով
Իր սաղարթներն օդապար
Աստվածուհվույն ոտքերուն վրա անարատ,
Որոնցմե հա մ'աղվոր տերև մ'արյունոտ,
Կ'երթա, կ'իյնա արձանին տակ քընացող
Քանդակագործ քանաստեղծին ճակտին վրա,
Որ գրավված նո՛ր Տեսիլներով երագի
Այդ հըպանցումը փառքին
Ամեննի՛ն չ'իմանար:

ԲԱԳԻՆԻՆ ՎՐԱ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՈԳԻՆ

Ե՞րբ պիտի գաս. ե՞րբ մեր գետնին ույծքերեն,
Իբր հարությունն հողին խըմած շողերուն,
Պիտի պոռթկան շունչիդ բոցերն երկնապող.
Կամ մեր երկրին արյուն կաթող ո՞ր աստղեն՝
Դու պիտի՝ իջնես հրդեհել
Ջենքի տըրմուղ ժողովուրդդ՝
Որուն սըրտեն դարերն հավետ խըմեր են
Թորգոմական արյունն և ո՞ղը պարպեր,
Որուն համար մեր պապերուն ոսկրոտին՝
Հովտե հովիտ սըփըռված՝
Բաժին են լոկ գայլերու:
Ո՞վ անդրանիկ Աստվածուհի, Իսկուհի՝
Հայ ջըրերուն, կըրակներուն և կավին,
Տե՛ս. քու երկիրդ՝ որ մեր սերմին մայր ըրիր՝
Այլագգներու խըժղըժանքին մատնըված,
Այսօր, ավա՛ղ, սուգ ու արյուն կը բըխե.
Իր կործանած քաղաքներուն վրա լըռիկ
Կը նըստի կռո՛ւնկն ողորմուկ.
Հողն՝ հերկըված միայն սողովն օձերուն՝
Իր աղտաղտուկ խավերուն մեջ կը պահե
Պաղլեղ, և իր սև տափերուն վրա՝ ոքոզ.
Կը մընան մեր այգեստանները՝ առանց
Շերտափակի, և կարասները՝ առանց
Հայրենական գինիին.
Եվ մեր խոյերն ըսպիտակ՝
Չըզըտնելով խոտնոցներուն մեջ առվույտ՝
Նոթութենե մոլեգնած՝
Մըսուրներուն դեմ կը ջարդեն եղջուրնին:
Իսկ որդիները թըշվառ
Կամ հեռացած հորենական երկըրեն
Կը խառնակին ազգերու խորդ արյունով,
Կամ նույն երկրին ծոցին մեջ
Կը մեռնին լուծն ուսերնուն,
Ապրողներուն թողլով մաս
Մերկացում <ն> ողջ հայութենեն, խորդացումն՝
Որով կ'ըլլան իրարու դեմ թըշնամի
Եվ թըշնամվույն դեմ՝ ծառա:
Ո՞չ մեր դաշտերն՝ եղած արյամբ ճախճախուտ,
Ո՞չ պարիսպներն ու տաճարներ քարուքանդ
Զիրենք կըրնան գայրագնել,
Ո՞չ օտարին ծաղրանքն և ո՞չ անարգանք
Կ'արթընցընեն իրենց հոգվույն մեջ ընթարմ

Հըպարտությունն հայկական:
 Կը ծառայեն և կ'ողբան
 Եվ ողբալով ըստըրկությունն ավելի՛
 Իրենց դեմքին կը հորինեն վայելուչ...
 Եկո՛ւր, եկո՛ւր. Ժամանակն ա՛յս է. Եկո՛ւր...
 Ահա ցեղեղ մաս մ'ազնիվ՝
 Գաղափարի, գուպարի մեջ հալումա՛շ՝
 Ճամբուղ վըրա կը սըփռե
 Իր արյունին հետ նոր վարդեր, կակաչներ...
 Եկո՛ւր, եկո՛ւր. Եվ Մասիսի կատարեն
 Դյուցազներու, վրկաներու հոգիներ,
 Իբր աստղերու սերմընցան,
 Տեղա՛ բոլոր իգության մեջ մեր երկրին,
 Մեր սըրտերուն խորունկ խորքերը հոսե
 Արյունդ անբիծ, գոր շիթ առ շիթ ժողվեցիր
 Վարդաններու ռազմահարդար հետքերեն,
 Եվ ըրե մեր օրրաններն
 Արշակներու վերածընող շիրիմներ.
 Ամեն հայու լանջքին տակ
 Իր մեկ հին պապն արթընցուր.
 Եվ նվիրական, հավերժական զանգվածով
 Չանոնք խառնե և խըմորե և ձուլե
 Եվ ըստինքովդ ապրեցուր:
 Ա՛յնպես որ՝ քու մայրենի
 Ճաճավչավուխտ թև թռիչներուդ տակ ամփոփ
 Տաքնա՛ մեր հողն, և բլուրներուն վրա խայտան
 Գարուններն հին, Նավասարդները՝ լեցուն
 Մարտիկներու վահաններուն կոփյունով,
 Մեր արծիվներն ու ուրուրները՝ թողած
 Ճախճախուտները նըվաստ՝
 Կայծակներու թառերուն վրա կըռռնչեն.
 Էգ առյուծներն ու էգ վագրերը բոլոր՝
 Մայրագորով լիզումով՝
 Ըլլան կայտառ հայկականերու կաթընտու.
 Մեր ամպրոպները (լեցուն
 Ըստվերներովն երգիչներու գողթական)
 Սըրտին մեջ հայ քերթողին
 Փոխվին երգի ու չափվին
 Կայծակներու շեշտերով.
 Բանվորն հեստի՛, հեստի՛ գեղջուկն ու՝ այգուն՝
 Երբ իր քայլերն ուղղվին դաշտերն ավերված,
 Արշալույսեն արյունի հոտը առնե
 Եվ արյունի՛ ծարավի.
 Շունչիդ զեփյուռն ու ճառագայթն աչքերուդ,
 Նըման գարնան մեր տան շեմերը պըճնող,
 Թող ճամբորդեն հյուղե հյուղ,

Բնակարանե բնակարան.
Կանգնի՛ն այրերն ու մայրեր,
Ծերը կանգնի՛, կանգնի՛ տղան.
Ու ամեն ոք Ազգին սիրով լոկ արբշիռ,
Ազգին ոգով հաղորդված
Ա՛յնպես վառի, ապրստամբի, բորբոքի,
Որ Թորգոմա Տունն ըզգա
Թե իր օճախը մարած՝
Այսօր հրաբուխ է դարձեր:

ԱՆԻԻ ԱՎԵՐԱԿՆԵՐՈՒՆ ՄԵՋ
Ա

Ըլլա լացի, համբույրի,
Հիշատակի, մըտածման,
Մըռնչելու համար ըլլա, օ՛ն, մըտնենք.
Մըտնենք հըսկա քաղաքն հըսկա աճյունի,
Մըտնենք Շիրիմն հայության...

Ողջո՛ւյն, Անի, գերեզմնոց,
Ուր կը փըտին ոսկորներն հաղթ Անցյալին.
Ողջո՛ւյն, Անի, օրորան,
Ուր փլուզի տակ, կարիճի սև արյունով
Մեր Ապագան կը մեծնա.
Ողջո՛ւյն, Մեռե լ, Մա՛յր, ողջո՛ւյն.
Ահա կու գամ, ես վերջին
Նորաբողբոջ գըլուխը հայ Հիդրային,
Կու գամ կյանքիդ փառքովը մա՛հդ օրորել.
Ըսել, թե մեծ եղար դու,
Կամ մեծ խոստումը մեծության, դու եղար
Լուսակայլակ պողպատ ըստինք մ՛որուն դեմ,
Խուժդուժ ցեղերը ծըծելու դեռ անվարժ՝
Եկան նոթի լընդերն իրենց ջախջախել.
Ծեր Ասիո շեմին վրա դու եղար
Երեք դարու սիրտն՝ եթե Հույնն ըղեղն էր,
Միրտ կենսաբուխ՝ որուն աչքերն հառած պիշ՝
Նենգ Բյուզանդիոնն, այդ բոգորդին Հըռոմի
Քեզ կը դավեր լափիլզելու ախորժով:
Եվ ան դավեց և ան հաղթեց. ու ավա դ,
Երբ դրոշակն իր ցըցված տըխմար արքայիդ
Հովհաննեսի շիրմին վրա՝
Վեստ Սարգրայան կ'ըլլար խըլան խոստացված,
Քու բալլիքներըդ Վոսփորի բանտին մեջ
Երիտասարդ թագավորիդ թներուն
Կուր շըղթաներ կըղպեցին:

Բ

Ո՛վ պատուհաս. կորսըվեցար դու այլևս,
Երբ Պարսն և Հույնն, երկու ոսոխ ոսոխներդ,
Իրարու դեմ ըզքեզ ասպար կանգնեցին,
Կամ իբրև որս մ'որ արդեն իր մագիլով
Նախ իր սիրտն է խոցոտեր,
Քեզ անցուցին Մոնոմախոսն ու Տուղրիլ,
Պերոզն ու Ժանտ Ալփասլան՝
Ժանիքներե ժանիք, թաթե ի թաթուլ.
Եվ, դեմ դիմաց կզակներն իրենց ջարդելով,
Հիմնաքարերդ հանեցին՝
Որպեսզի սև դամաբանաքարդ հորինեն:
Ա՛լ այն օրեն դու իբրև շենք մ'հոյակապ՝
Ուրկե հազար կայծակ մեկեն է անցեր՝
Քայքայվեցար մարմար մարմար, ծեփ առ ծեփ:
Ու, ո՛վ ցասում, ո՛վ ամոթ,
Քեզ դեմ առ դեմ բըզըկտողները նենգժոտ
Չեղան արծիվ՝ այլ գայլե՛ր....

Գ

Արդ քարուքանդ կը հանգչիս
Եվ նըշխարներդ ինը դար է որ կ'ապրին.
Ժամանակին ձեռքը չեղավ այնքան հաղթ
Աճյուններիդ այդ մըրրիկներուն հանձնելու.
Բայց ծոցիդ մեջ ալ բընա՛վ
Սըմբատի սոս նըժույզը չի՛ խըրխընջեր,
Այն չի թոթվեր արյունթաթախ բաշերն իր
Քած ձիուն դեմ Ափշինի,
Ու կոչնակներն ու շեփորներն ոսեցով՝
Որոնց ի լուր թուրը խաչով կը ձուլվեր.
Հոն լըռած են՝ ապրեցնելով իրենց տեղ
Բուի հազար սերունդներ:
Այդ լըռության չըղջիկի լայն թևին տակ
Կ'աճի եղիճն արտասուքովն աստղերուն.
Եվ հոն բաղեղն հայրենասեր թներով
Կը գըրկե հողըդ տըրտում
Իր պատառիչ կայծքարերով միասին.
Եվ խոտ մ'հազիվ, բարձրացած
Ճամբաներուն վրա անկոխ՝
Կը ծածկե սողն օձի մ'արփվույն տակ ճեմող:

Դ

Ի՞նչ մընաց, ի՞նչ. Պարիսպներեն քարակուռ՝

Որոնք ըզքեզ գըրկած տըվին կուրծքերնին
Ասիական մըրըրկարշավ ցեղերուն.
Պալատներեդ, ամրոցներեդ, պուններեդ,
Աշտարակի սըլաքներեդ՝ ուր ծըփուն
Կարմիր դրոշակ մ'հայկական
Կ'սրբեր քրտինքն արծիվներուն ճամբորդող,
Խոյակներեդ, գըմբեթներեդ՝ որոնք օր
Մ'ամպին մեջ՝ շանթն էին մեջ բախտն հեզնելով՝
Ժամանակի բռունցքին դեմ
Կ'ըլլային կուրմ ձուլված փառքի հանքերեն,
Ջորանոցեդ, տաճարներեդ, այո՛, քու
Հագարումեկ տաճարներեդ՝ որոնց մեջ,
Դեպի հավատքն ուղղաբերձ
Մինչ բազուկներ կը հոգնեին, կ'հեղգային
Մինչ հին արյունն Արամյան
Իր հեթանոս ռազմիկ թափեն կը սանձվեր,
Եվ մինչ Հիսուսը կը ծըներ արցունքով
Լաստիվերոցին և նենգ Հուդան՝ Կիրակոս,
Այդ հագար մեկ տաճարներուդ մեջ կ'ըսեմ,
Քանդակ քանդակ, զարդ առ զարդ,
Արվեստ մը նոր, արվեստ մը հայ,
Արվեստն աղջիկ Աստուծո, քույր Բընություն,
Արվեստը հարս Տիեզերքին,
Ժող'վուրդներու և Ազգերու վախճանած
Տապանագիրն ու շիրմապսակն այդ վերջին
Իբր աղավնի մ'ոսկեղըրվագ ուրագով
Քանդակված՝ այդ գըմբեթներուդ ներքև սուրբ,
Բատուցներուդ, խոյակներուդ, մույթերուդ
Մեջեն լըռիկ, գըլուխը դուրս կարկառած՝
Դեպի երկինք, աղվոր, վեհ,
Թռիչները լա՛յն կը պարզեր...
Հիմա, ավա՛ դ, ատոնցմե,
Այդ բյուրավոր ճաճանչներեդ, ո՛վ Անի,
Ըսե՛, ըսե՛, ի՞նչ մընաց...

Ե

Կը պատե շուրջը լըռություն: Լայնարձակ
Դաշտին վըրա, լուսնակի քա՛ղցր շողով
Ավերակները կ'ողողվին: Հեռուն
Միջոցին մեջ աստղալից
Լոկ կը լըսվի սույլն հովերուն ճամբորդող:

Անին հավե՛տ կը լըռե...

Ոտքըս փըլած քարի մը վրա կը դընեմ,

Եվ ուրիշի մ'հետո, հետո ուրիշի
Մ'ու կ'ելլեմ դե՛ պի կիսաքանդ պարըսպին.
Ծերպերն որմին, ժամանակի վերքեր, ինձ
Սանդուխ կ'ըլլան. քայլափոխես փրխըրված
Կը թավալին կոշկոռներ,
Եվ մատերուս տակ ճանկող՝
Բաղեղներեն, մորմերեն
Քընաթաթախ մողեզներ վար կը թափին:
Ու ես կ'ելլեմ. հոգիս խոր
Արբշըռության մ'ուժին տակ
Զիս աստղերուն կը քաշե.
Կը շուլըվիմ, կը մագլիմ.
Կայծքարերուն դեմ կուրծքըս մերկ կ'արյունի,
Կը մնա մաս մ'ըզգեստես
Վարը փուշի մը ճանկին մեջ ավագակ.
Բայց ես կամշոտ, որսին դիմող վագրի պես,
– Եթե ազատ բարձրությունն որսն է հոգվույն –
Կուռ ու տենդոտ խոյանքով,
Մութն ու փլատակն ոտքերես վար թոթափած,
Նախնիներուս բյուր գանկերուն վըրա գոս
Հուսկ ոստումով մը խըրոխտ
Պարիսպներուն հառաչակուլ կը կանգնիմ...

Զ

Ո՛վ բնագդական դու վերելք,
Ո՛վ խոյացման գինովություն՝ նույնիսկ սև
Դամբանի վրա կամ ոսկրի,
Ո՛վ վեհ բարձունք՝ որ կը գըզվես ճիղմ հոգիս
Զիս ընելով աճյունին վրա պապերուս
Բողբոջ մ'որ դեռ կը զարդարե կոճղը հին.
Ո՛վ բարձրություն թովչական՝
Որ կապույտին և խավարին մեջտեղ զիս
Մըտածումի լազվարթ լարով կ'առկախես.
Կու տաս անցուկ մխիթարությունը սըրտիս՝
Որ վարն ոտքիս տակ գըտնեմ
Անիի մեջ ցուլքն երկընքի մեծության,
Ըզգամ թե մեր շիրմին վրա
Մուրակները դեռ զիրենք կը գըծեն,
Թե խավարն այս՝ է Խորհուրդին դեմքը վեհ,
Փլատակը՝ մե՛ դքն Հավերժին.
Անվո փոշին հարդգողն, և կամ աս շըրջմուլ
Փոսուռան աստղ մ'է չըքնաղ.
Սա գանկը հոս լուսին մըն է, ես՝ Աստված...
Ըլլալ Աստված, ո՛վ հեզություն, այս ըլլալ
Է միմիայն ծաղրանըկարն Աստուծո,

Քանի որ մեր հոգին հարճն է Բընության,
Եվ սոսկ անոր տաք ծոցին մեջ՝ բեղնավոր,
Չունենալով նույն ինք իրե՛ն սեփական
Հայրենիքի այս Ոչընչին, բոհին դեմ՝
Իբր առաջին սերմընցու
Խո սք մ'որ ստեղծե, ներդաշնակե, պոռթկալով
Փռշիներեն Անիի
Քանան մը նո՛ր և ազա՛տ:

Է

Ի՛նչ, ունենալ աչքի ներքև դիակներ՝
Որ եղած են ատենով
Արյանդ արյուն, սերմիդ սերմ
Եվ, ո՛հ, առանց հարուցանել գիտնալու՝
Այսպես դիտել լ ծալապատիկ թևերով,
Ի՛նչ, տեսնել որ խըխունջ մ'այսօր կը չափե
Հըսկա շենքերն այն՝ երկու թել լորձունքով,
Եվ խորանի խորշին մեջ լոկ կ'ապրի
Բուն, սևազգեստ ճըզնավոր,
Տեսնել, որ լուռ կը փըտին
Ավերներու տակ հերոսի բազուկներ,
Գանկեր, սըրտեր՝ որոնց արյունը եղավ
Թույն՝ իժերուն, ա՛յնչափ որ լի էր ոխով.
Տեսնել որ փլած պատվարներու, դըրյակի
Ճեղքերուն մեջ կը մեռնի
Շող մ'արևու, Անուն մը հին, Ազգ մը մեծ,
Եվ գահերու բեկորներուն վրա թափուր
Արծիվն ամպեն կը ծըրտե ...
Ի՛նչ, մինչդեռ վարը, անդին,
Այս ջընջումին հավասար
Կը ջընջըվին, կ'այլասերին հոգիներ
Խեղդըվելով նույնիսկ իրե՛նց արյան մեջ,
Կամ մալ ու կուրտ եզի պես
Ժուժով մը վատ, յուրաքանչյուր հարվածի
Ներքև ջըլատ կ'ըսեն. – Լըծե՛ : – Ո՛հ, ի՛նչ, ի՛նչ,
Առջևը այս ամենուն,
Շուրջիս այս մութ ծրփանքին մեջ դիերու,
Ոսկրներու, նըշխարներու, արյունի,
Մընալ կանգուն, մինավորիկ, անկարո՛ղ,
Եվ չը կըրնալ այս թոհրոհեն հանել դուրս
Վերածընո՛ւնդ, վերածընո՛ւնդ մ'արփագեղ...

Ո՛վ այպանք, ո՛վ նախատիք,
Ուրեմն ինչո՞ւ ապրիլ, ինչո՞ւ ընդունայն
Հայրենիքի անունն ասա՛նկ մըռընչել,

Երբոր Ողջերը թըմրած
Քեզ չե՛ն ուզեր լըսել, ոստնուլ չե՛ն ուզեր,
Եվ ռազմերգեղ՝ ահաբեկ՝
Ականջներնին ծոցերնուն մեջ դողած
Երբ գըլխուդ շա՛նթ կը մաղթեն,
Ուրեմն ինչո՞ւ, ինչո՞ւ ապրիլ...

Ը

Վարը, հոս,
Օձ մը հըսկա՝ գըլուխը փոսեն տընկած դուրս՝
Լուսնի շողով կը նայի ինձ. օ՛ն, եկուր.
Դու, որ ունիս այդ աչքերուդ մեջ կանանչ
Մահվան անուշ մխիթարությունն. օ՛ն, եկուր.
Կըրունկս քուկդ է. քուկըս տաք
Երակներս այս. իսա՛ծ ու իսայթե. թող տապալ
Գըլտրիմ վար, Ախուրյանի ողբին մեջ,
Եվ վարը այն որձաքարին վըրա սև
Ջախեմ գլուխս, ու իմ խեղճ
Հայրենիքիս փոշիներուն վըրա սա՝
Ըղեղիս խյուսը փըռեմ...

ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ

Սովամահ ժողովուրդին

– “Սով է. հա՛ց, հա՛ց...” –

Ո՞վ կ'հեծե

Շեմին վըրա խըրճիթիս ո՞վ կը հեծե:

Մերըս մարած է օճախիս բոցին հետ.

Մեջս է մոխիր, շուրջըս մոխիր. օ՛հ, ի՛նչ շահ

Մոխիրներու վըրա արցունք սերմանել:

Բան մը չունիմ, բա՛ն մը. այսօր իմ վերջին

Լումայով թույն գընեցի,

Ներսը թույնս իմ կը շաղվեմ:

Վա՛ դը եկուր գերեզմնոց, ո՛վ Անտթի,

Բուքին մեջե, կանուխ, երբոր գյուղին շուրջ

Գայլերը դեռ կը հաճին,

Վա՛ դը եկուր... պիտի ես

Շիրմիս մեջեն, իբրև հաց

Քերթողի սիրտս այդ մախաղիդ մեջ ձըգեմ.

Քերթողի սիրտս արյունդ, արյունն որբերուդ

Պիտի ըլլա ո՛րքան որ Վիշտըդ ապրի...

Վաղը եկուր գերեզմնոց, ո՛վ Անտթի:

ՄԱՐԱԾ ՕՃԱԽԸ

Այս տունին մեջ՝ որուն շեմին վայրահակ
Այսօր կու լա ուռենին,
Եռաց զըվարթ կյանք մը թորգում գեղջուկի:
Ատեն մ'եղան հոն թարմ հարսեր՝ որ լույսին
Հետ արթընցած, վարդենիի պես հագված՝
Աշխատեցան, կաթ կըրեցին սափորով,
Կամ դույլերով հորը ջուրի զընացին:
Ատեն մ'անոր դըրան առջև նըստեցավ
Ծերուկն, և թո՛ղ ծունկերուն մեջ առած,
Պատմեց զըրույցն Արտավազդի, Վահագնի,
Անոր հոգվույն տեղալով
Վերջին ազնիվ մնացորդը խոնջ օրերուն.
Կամ՝ իրիկվան՝ տեսավ անցնիլն առջևեն
Հարուստ հոտին՝ գոր իր որդին լեռնեն վար
Դեպի փարախ կը քըշեր.
Եվ ծեր ոունգերը բացած
Ոչխարներուն բուրդին բարկ հոտը ծըծեց՝
Օրհնելով թիվն ու ընտիր ցեղը անոնց:
Ատե՛ն մ'եր ան...

Այսօր ոչ ոք այդ տունեն
Կ'ելլե կամ ոտքն անոր շեմին կը դընե:
Կոտրած դըրան արյան չորցած կաթիլներ,
Ներսեն ձայներ ագռավի,
Եվ հարատև մլավյուններ
Կը լեցընեն գեղջուկին սիրտը դողով,
Որ անցնելու վայրկենին այդ փողոցեն
Խաչ կը հանե կամ քայլերն իր կ'երագե:
Կոտորածի օրեն (երբ գյուղը բոլոր՝
Կյանքն հանձնելով նենգ գայլին քա՛ն թե մարդուն՝
Դիմեց դեպի ճերմակ լեռներն հայրենի)
Այս բնակարանն այս սև խորհուրդն է հագած,
Եվ մեռելի մ'անփակ աչքին հանգունակ
Ան՝ արևուն և կյանքին
Եղած է միշտ բաց, նաև միշտ ալ զրկված:
Ըմբոստ բաղեղն և ուռենին հեզանագ
Կը ծածկեն մուտքն անոր զիրար զըրկելով:
Գավիթին մեջ կա բողբոջումը լըռիկ
Բաղըրջուկին և թավշանման մամուռին,
Որոնց մեջ մերթ կ'երևի
Կըտցահարումն աներկյուղ
Վառյակներուն դըրացի, մե՛րթ ալ հանկարծ
Փախուստն անոնց կարկաչելով դեպի դուրս:
Ի՞նչ կ'ապրի հոն, ի՞նչ գաղտնիք
Կը մեծնա այդ բնակարանին մեջ խոժոռ.
Արդյո՞ք անթաղ դիակներու ոգիներ

Հոն կը ժողովին լալու կամ դափ զարնելու,
Թե վրհուկներ ճերմակ և թավ հոնքերով
Օձ կը կըրթեն կամ կը հյուսեն պատանքներ:
Իրիկուն մ'եր – լավ կը հիշեմ – սիրտ ըրի
Այդ շեմեն ներս մըտնելու:

Գյուղացիները ետևես, գըլխաբաց,
Աղոթեցին հուսակտուր, ա՛յնքան Աստված,
Անոնց հոգվույն մեջ և հոգվույն ի խընդիր,
Սատանային սև պատկերն իր պատկերեն
Մեծ և որոշ էր գրծած:

Մըթընշաղ մ'այն գավիթին մեջ կը տիրեր,
Եվ պատերեն՝ ուր կը շըրջեր ցողկը մերթ՝
Բորբոսանքի և շիրմի հոտ մը կ'ելլար.

Կը լըսվեին գերաններուն ծերպերեն
Ճիչերը սև չըղջիկներուն սըրաթն.

Բոլոր դըռներն հոն բաց էին. չէր լըսվեր
Հավանոցեն կամ գոմեն

Ո՛չ եզներու բարի պոչունն, և ո՛չ իսկ
Բեղուն կըրկոց մը հավի.

Ամբողջ մարագը դատարկ էր, դատարկ էր
Մառանը բաց՝ ուր բուրեցին օր մը մուշկ
Սաթ ողկույզներն հայրենական այգիին:

Այնտեղ ամեն ինչ տըխուր,

Հեզ մնացորդ մ'եր կողոպուտի մը վայրագ:

Ո՛չ մեկ սյունի, ո՛չ մեկ անկյան մը ետև

Կը տեսնըվեր մարդկային ձև, կամ ապրող
Շողուն մը գույզ բիբերու:

Կը լըսվեին ձայները լոկ հարատև

Թոնրատունեն՝ ուր սարսուռով մոտեցա,

Ու մըտա ներս... Ո՛վ խեղճ տուն,

Լավ էր դու բանտ կամ գերեզման ըլլայիր,

Այդ հողդ ոսկոր փըտեցըներ. սյուներուդ

Մեջ դագաղներ փորեին.

Լավ էր ըզքեզ հորինող մեն մի կրաքար

Ծովափներուն փոշի փոշի քայքայվեր,

Քան թե կանանչ երդիքիդ տակ ծածկեիր

Մարած օճախ, մեռած սիրտ հայ գեղջուկի՝

Որուն համար կանգնելը հարկ չէ այլ ինչ

Բայց թե դամբանն իր և իր հեզ սերունդին.

Ավա դ, շինել իր ձեռքերով... Մըտա, հոն:

Մեջտեղը տան, ըստվերին տակ այն խոնավ

Նըշմարեցի մարդու դիակ մը պառկած,

Կըռնակի վրա, դեմքը ճերմակ կը հառեր

Լուսամուտին՝ ուրկե՛ր դիին վրա բուսած

Ճյուղ մ'ոլոռի կարկառուն

Մինչև ճակտին կը հասներ.
Երիտասարդ կուրծքին վրա
Կար վերք մը խոր, և թերաքամ ափին մեջ
Դաշույն մը նույն իր արյունեն ժանգոտած.
Աչքերը, բաց, միապաղաղ, կարծես դեռ
Կը նայեին փախած հոգվույն ետևեն.
Եվ թուխ մազերն իր խառնակ,
Արյութաթախ, շըրջասփյուռ,
Կը մնային պի՛նդ մածանված այն սև գետնին:

Ես հոն կանգուն կը խորհիմ՝
Թե այունն էր ինք այս հարկին, բո՛ցն օճախին,
Որ հաղթվեցավ, որ բիրտ ուժին տակ տեսավ
Ծալըվումն իր գուճերուն.
Եվ մընաց ա՛յսպես ահավոր և մինակ՝
Ըսպասելով ընդունա՛յն
Իրեններուն արցունքին,
Որոնք իր սև բախտին եղան բախտակից.
Մորթըվեցան այրերն, հարսերը բոլոր
Հանվեցան լեռն՝ հոն լալու
Ճերմակությունն իրենց մարմնույն լըլկըված.
Իսկ ծերուկ հոր հետին մոխիրն արդ գուցե
Թոնիրին մեջ դեռ կը սըրսփա ջերմաջերմ.
Իսկ իր մարմինն երկա՛ր ատեն անտերունջ,
Այսպես առանց շիրմի, առանց աղոթքի,
Կը մընա լուռ, և կեսն արդեն խաթարված.
Միայն կատուն տիրասեր,
Տան գորշ կատուն, նիհար, նոթի, անդադար
Կը մըլավե շուրջն անոր,
Եվ լի գութով մը կը սպառնա, կը վանե
Չորս դին երամ մ՛ագռավներու աղմըկոտ՝
Որ դիակին ախորժեն՝
Լուսամուտեն կը մըտնե ներս, ու հավետ
Ամայի տան ըստվերին մեջ կը դառնան:

Կը խոնարհիմ ես վայրկյան մ՛հոն երկյուղած,
Հին վըրեժ մ՛այդ հին մեռելին վրա կ՛երդնում.
Հետո առած զայն ուսիս,
Աղիտդորմ մլավյուններովը կատվին,
Կը ճեպեմ դուրս:

Դուրսը դեռ
Գյուղացիները գըլխաբաց կ՛աղոթեն:

ՕՁԸ

Իսկ ապրող Հայերն ալ՝ այսպես ապրեցան

Լերան կողին, նրման վերքի մը լայնշի
Հեղեղատն այն կը տեսնա ք.
Ջուրեն բացված, այսօր ջուրի ծարավուտ
Ան ճամբա մ'է կարմրորակ:

Տըղա կյանքիս, օգոստոսի մ'արևով,
Կ'ելլեի ես անկե վեր,
Դեպի լեռն այն, դեպ իր դաշտերն ընդարձակ՝
Ուրկե ինձի դուրին էր

Քաղել աստղեր ու անոնցմով պըսակվիլ,
Շընչել ամե՛ն երկրի հով,
Եվ հետևիլ արծիվներուն ընթացքին
Մատղաշ հոգիս պարզելով:

Ու կ'ելլեի ես այդ կարմիր ճամբայեն...
Հոն ո՛չ այուք կար և ո՛չ խոտ.
Թիթեռնիկներն այտեղ ինկած դիպվածով՝
Կը փախչեին հեհեկոտ:

Արևն էր լոկ, իմ ուղեկիցս արև՛ն էր՝
Որ մըխած գլուխն հըրաբոց
Ավազին մեջ՝ կը խըմեր հողն, ու հազար
Պատիճներովն ոսկեզօծ՝

Կը ճաթեցներ ապառաժները՝ սնելով
Անոնց ծածկած տամկությամբ:
Ու կ'ելլեի ես այդ կարմիր ճամբայեն
Շուքս ետ թողած, միակ ամպ:

Կեցա՛ հանկարծ, ու արևն հետըս կեցավ
Խարըսխըրված գըլխուս վրա.
Վերեն՝ խրամատ ժայռե մը դուրս սըլացիկ՝
Վա՛ր կու գար օձ մը հըսկա:

Ալիք այիք օղակներով իր ճապուկ
Դահանակի և լալի,
Ու շըչելով՝ իբրև եղեգ մ'հողմակոծ՝
Ան կ'իջներ, ես կ'ելլայի:

Տեսանք զիրար, կեցանք, զիրար չափեցինք...
Իր բոլոր զենքը անի
Բերանին մեջ հավաքեց, ես՝ աչքերուս,
Ես, դեռ անզեն պատանի:

Ոստում մ'ըրավ նայվածքներու ուղղությամբ՝
Զերդ շանթը դեպ լըսնուկին՝
Որուն վախճանն հորն է մաքո՛ւր և նվաճո՛ղ...
Ոստում մ'ըրավ մոլեգին,

Եվ փաթթելով ինքզինք մատղաշ իրանիս
Իբրև բաղեղ՝ վարդենվույն,
Կուրծքը կուրծքիս դըրավ, ուղղեց շըրթներուս
Կոր գըլուխն իր լիաթույն:

Ես պարուրված ոլորտներուն մեջ իր ցուրտ
Մահվան դողով դողացի.
Մինչդեռ աչքերս իր աչքերուն խըմցուցին
Թովչանքն հոգվույս մըտացի.

Դըրին անոնց բոցերուն մեջ դեղնորակ
Իմաստությունը մարդուն,
Ըղեղին լույսն՝ որ քընացուց կամ սանձեց
Բընագողը նենգ կենդանվույն:

Խայթն ամփոփեց. ու ես կյանքի, մահվան մեջ,
Կյանքի, մահվան արցունքով
Արտասպեցի: Ան բերանն իր բացած լայն
Կըզակիս տակ, անվըրդով,

Խըմեց շիթ շիթ կաթող արցունքն արտերես,
Քամեց բիբերըս բերրի,
Եվ մարեց մեջն օգոստոսի արևն հուր
Օձն այդ ծարավ արտոսրի:

Հետո շըչաց ու նոր օղակ մ'ընելով
Շուրջը վըզիս՝ զայն սեղմեց.
Մինչ պոչն իր նո՛ր քաղցով ետևը ճոճուն՝
Կը ջախջախեր քար մը մեծ:

Քընթըռնոցներն ամփոփելով իրար մեջ՝
Կոկորդըս պինդ պըրկեցին,
Ու ես վայրկյան մ'ըզգացի մեջըս փակված
Չորս ճամբաները կյանքին:

Ու ունչերես ու աչքերես բըխեցավ
Արյունըս դուրս սորսորուն,
Եվ ըզգացին, կարծես, շըրթունքըս դողդոջ
Սըրտիս ամբողջ ջերմությունն:

Իսկ ան հեցած կըզակն ուղիղ կըզակիս
Խըմեց արյունս անդեղյա:

Մեն մի կըլլված շիթ, որ կ'իջներ՝ կը գգայի
իր մարմնույն մեջ, մարմնույս վրա:

Ինչպես շողերը արևուն կը սուզին
Հին ջրհորներուն մեջ ցամքած՝
Ա՛յսպես կարծես երակներս իմ քամվեցան
Որկորեն վար թըխսպամած:

Կըշտացած էր. վիզես, մեջքես, ծունկերես
Լուծեց օղերն համբարար,
Միշտ հիշատակն իր օձ – ձևին թողելով
Շուրջն իրանիս դալկահար:

Կըշտացած էր իմ արցունքով, արյունով...
Ա՛լ, գերդ ոճիր կենդանի,
Արփվույն ներհակ, միշտ այդ կարմիր ճամբայեն՝
Ան կ'ջներ, ես կ'ելլա յի....

ԹԻԱՊԱՐՏՆԵՐԸ

Պատերազմ է հրոչակված: Թընդանոթի մը պողպատ
Ծանրը սայլին լրծեր են թիապարտներ մերկիրան.
Անհեթեթ բեռը պետք է մինչև գագաթը տանին
Սա դիմացի խրոխտ լերան՝ որ իր գլուխն է մըխըրճեր
Կապույտին մեջ արևոտ՝ իբրև հալած կապարի:
Անկե ո՛չ ես, ո՛չ գոմեջ ելավ, և ո՛չ ալ ջորին.
Սեպերեն վար սահեցան պճեղներն անոնց կըրկաճիդ.
Ծալլըվեցան ուժասպառ և դողահար ծունկերնին,
Կամ թե երբուժը անոնց հանկարծակի պայթեցավ
Բուռըն հեքեն զըսպըված թոքրենուն մե տապահեղձ:
Եվ արդ մընաց կըրելու հերոսներո՛ւն մըկնագեղ
Բեռը ձուլված արյունով, բեռը մահվամբ ծանրակիր:
Ետևեն բիրտ զինվորներ կը մըտրակեն անխընա
Թիապարտները բոպիկ, մերկ կըռնակով, գըլխեբաց,
Որոնց մարմինն՝ որ ուներ անբըծություն մարմարի,
Այսօր թուխ է իբրև պղինձ քուրա մը միշտ հըրամերձ:
Կը տոչորե անդադար սևցած հըզոր ծոծրակնին
Ամբան արևն ու հանկարծ կը կեցընե, կը խըմե
Քըրտինքի շիթ մը մարգրիտ՝ ողնաշարնեն վար սահող...
Վե՛ր, վե՛ր. Փոկերը ճարպոտ դժնե հարված մըտրակին
Կը շառաչեն կըռնակնուն, մեջքերնուն շուրջ կ'ոլորտին,
Եվ ուսերնեն վար մինչև պորտերն անոնց սողալով՝
Կը գալարվին լըզվըռտվող օձերու պես քըստմնելի.
Եվ թողված հետքը կապույտ, կաղապարով խոտորնակ,
Կամաց կամաց կը սկըսի արյան ծիլեր դուրս բըխել:
Հոլա՛, վե՛ր, վե՛ր: Ու պարանը անձոռնի, հաստաբեստ,

Մարմինն իրենց կը պըրկէ, միսերնուն մեջ կը թաղվի.
 Նյարդերու բեկտումին, ոսկորներու փըշըրման
 Աղաղակն է՝ որ կարծես իրենց ճիգեն կը լըսվի:
 Դեմքերուն վրա՝ թափված են խառնափընթոր մազերնին՝
 Որոնց ծայրեն կը թորի առատ քըրտինք մ'հողին վրա:
 Շունչերնին դուրս կը պոռթկա ընդհատ ընդհատ ռունգերնեն՝
 Եվ միացած կուռ սայլին երկրասասան դըղըրդունին
 Վայրենի նըվագը կ'ըլլա աշխատանքին այդ դաժան:
 Ահավասիկ կը կաթի խարազանված ուսերնեն
 Արյունն արդար, սուրբ գինին մարտիրոսված այդ Ուժին,
 Որով խըխում՝ կ'արբենա ամուլ լերան ճերմակ հողն
 Ուրտեղ նույնիսկ չի գըտներ գաղտնամես օձը սընունդ:
 Ո՛չ ալ կյանքն իր բաշխելու համար արևն հունտ մը էգ:
 Այդ կատաղի վերելքեն՝ անոնց ոտքի տակ լայնշի
 Հանկարծակի կը փըրթին լայնափեռեկ ճեղքվածքով
 Ժայռեն մեծղի կըտորներ. և ձորին մեջ թավալող
 Պայծառահունչ կրանիղի յուրաքանչյուր կոշտ հարված
 Ներբաններուն վիրավոր վարդագույն դրո՛շմը ունի:
 Հուլա՛, վե՛ր, վե՛ր: Այդ մահվամբ հըղի հրանոթն ուռնակուռ
 Միջօրեի անողորմ ամառնաբորբ տոթին տակ
 Ճաթելու չափ տաքցած է, շիկնալու չափ՝ հրագօծ.
 Երբ կ'ընկըղմի մերթ արևն երախին մեջ լայնաբաց՝
 Ան վիշապի մ'աչքին պես կը ժայթքե թուխ փայլակներ:
 Մինչ խարազանն անընդհատ եղեռնաբար կը շաչե՛
 Թիապարտները կարծես, գլուխնին հակած անմըռունչ
 Թանձր ու կախ հոնքերուն տակ մըտասույզ, ինքնամփոփ,
 Դեռ կը խորհին լեռներու իրենց ազատ կյանքին վրա,
 Ո՛հ, այն լայն կյանքն՝ ուրկէ շեշտ կայծակներու պես անցան
 Մահ և փայլակ դրոշմելով ամեն հինցած շենքի վրա.
 Ամեն պայծառ կյա նքն՝ որ իրենց կամքին թոխչքովը միայն
 Գաղափարին աստղալից խորաններուն կը սուրար:
 Ո՛չ մեկ մտածում պահպանող, ո՛չ մեկ հեշտանք, ո՛չ մեկ կույս
 Կըրցավ վայրկյան մ'օղին մեջ բըռունցքն իրենց կեցընել,
 Որ շեշտակի թագերուն և գահերուն վրա կ'իջներ:
 Իրենց ճակտին շողացող երկնային մե՛ն մի ճաճանչ
 Սանձակոտոր եռանդի մը փոխվեցավ մըրըկահույզ.
 Իրենց մեջ ոսկր ու արյուն դարձավ ամեն գաղափար.
 Եվ այսպետով մկանունքներուն ամեն մեկ բուռն հաղթանակ
 Մեկ հայակապ հաղթանակն էր մարդկային մեծ Մըտքին:
 Երբոր անոնք կ'անցնեին հորիզոնեն արփամուտ,
 Աշխարհ վախով և հույսով տեսավ կարմիր շուքն անոնց.
 Եվ արյունի մեջ մեռնող շողերուն տակ լըռավետ
 Իրենց գենքերը բահեր կը թըվեին՝ որոնցմով
 Խուզարկելու կ'երթային արշալույսներ նորանոր...
 Սակայն հի՛ մա. Ա՛ հ, հիմա բըռնադատված են քաշել
 Կույր հըրանոթն՝ որ պիտի վաղն արձակվի կույրերե:

Պարանն՝ որ ձիգ կրճակներն կաշկանդումով մը կ'անցնի
Կը պըրծի սուրբ ուսերնին՝ որոնք էին արժանի
Լոկ փառքը կրել մազերնուն արփվույն շողով սանտըրված:
Հոլա՛, վե՛ր, վե՛ր. Բայց ահա խրոխտ խոյանքով մը վերջին
Թընդանտ թն այն տըղըղեր լերան կատարն հանեցին
Այն թընդանոթն՝ որուն շունչը պիտ' երթա լափլիզել
Կատաղաշարժ քանակներ, կամ քաղաքներ մարմարե.
Խաղաղ գյուղեր՝ որ ցանված բըլուրներուն լանջքին վրա՝
Արեգակին տակ կ'օծվին, կամ լուսնին տակ կ'աղոթեն:
Թիապարտներն ավասիկ հառաչակուլ հևալով
Լերան վըրա լուսողող կոթողվեցան գըլուխնին վեր.
Իրենց աչքերն, որոնց մեջ արյուննին է խըռնըվեր.
Արևուն տակ, պըղինձին մութ ու կարմին փայլին պես,
Ըսկըսան շող մ'արձակել: Անոնք տեսան իրենց շուրջ
Հորիզոններն՝ որոնց վըրա բերդեր էին կառուցված,
Պատերազմի ճամբաներ՝ քանակներու իբր ուռկան,
Եվ հասկըցան՝ որ աշխարհն իրենց թողած օրեն վեր
Մընացեր է միշտ գառամ, միշտ մեղքին տակ կորակոր.
Այն ատեն դող մը անցավ ոսկորներուն մեջ հոգնած.
Մըրտերնուն մեջ հին մոլուցքն ու մըռընչուններն արթընցան,
Եվ զինվորները մինչդեռ կը սկըսեին վերստին
Դառնակոշկոճ, արյունոտ կրունկներն անոնց շըղթայել,
Անոնք իրենց չհասկըցված, հոգնությամբ լի հոգիով
Երեք անգամ օրհնեցին լերան գագաթը հանած
Ինքնափճացման կույր գործիք, թընդանտ թն այն եղեռնի:

ՎԱՂՎԱՆ ԲՈՂԲՈՋՆԵՐ

Երբ արտին մեջ երգելով,
Խաղա՛ղ հոգի, կ'աշխատեր,
Ըսպաննեցին: Տարին եզները ջուխտակ:
Վըրկա չըկար: Պիտի վրեժն ո՞վ կըշռե. Դո՛ւ,
Ո՞վ շանթ, անոնց ետենն շուտ դու հասիր,
Որ լերան վրա ամպամած
Խոժոռադեմ կը հըսկես.
Անշուշտ տեսար ամպի մը մութ բացվածքեն՝
Թե ինչպես վարը բըռնի,
Յաթաղանին տակ սըրբազան բահն ինկավ,
Եվ պոթթկաց խոնջ ճակատեն
Արյունը տաք, վարդերուն պես հունիսի:
Գայլի՛ եղեռն: Մըթընշաղին մեջ հիմակ
Ակոսներուն վըրա լուռ
Բըզիկ բըզիկ կը պատկի:
Գյուղացիի խորշոմներուն մեջ աղվոր՝
Ուր արեգակն առողջ արյունն եռեփեց
Քըրտինքը ա՛լ սառած է.

Աշխատանքի քրրտինքը սուրբ ու բեղուն
Որ մինչ այսօր, ինչպես արյունը, եղավ
Մըկըրտությունն Արարատյան մշակներուն:
Հերկէ խոնջած բագուկներն ա՛լ անգործ են.
Կուրծքը մըռայլ, թավամագ,
Դեպի աստղերը, արձակ,
Շեջ հրաբուխ մ'է որ կ'ուզէ բոց երկընքեն
Դեպ Անհունին սև սառնության ժայթքելու.
Կողը տված է հողին
Չոր մըշակեց ամբան դեղին հասկերուն
Երագանքեն ժրպտելով:
Շարժամբ աճած, աղվոր, գորեղ իր մարմնեն
Արյունը խուլ դըղըջյունով կը հոսի.
– Կարմի ր հեղեղ, սըրտի խորեն վար իջած –
Տափանն ու թին ներկելով
Կ'երթա գուղձերն ողողել.
Ակոսներուն մեջ գետեղել լիագոր
Կարողություն մ'արեգակի, անձրևի.
Թափանցել մութ ծոցն երկրին,
Իբրև ըլլար մարգարեի մըտածում,
Եվ հոն ճըռգած հունտերուն մեջ ներշնչել
Ուռչում մ'ատոք և առույգ,
Դարձընելով կյանք մ'իր առջի օրոցքին,
Նոր ծաղկումի մը համար,
Եվ հոն հըծծել նախնիքներու փոշիին
Թե – մինչ ե՞րբ իր արյամբ
Հայ գյուղացին պիտի արտն իր ոռոգե:

Կը լըռե շուրջն ամեն իր:
Լուսնին լացող աչքերուն
Ամպերը թուխ թաշկինակներ կը դառնան.
Խավարն հոժ է, սև պատանք:
Հեռուն կնոջ մ'հոգին տարտամ կասակծով
Գիշերվան մեջ կը սպասե.
Ջուխտ որդիներն ինկած ծունկին գըզվանուշ
Հույսի մը մեջ վաղամահ, գերդ ծիածան,
Հեճկըլտանքնին կը խեղդեն:
... Ահե դ հանգիստ. դիակին քով արյունոտ
Կյանք մը ծաղկի, աստղի առկայծ ճաճանչներ,
Ջույգ մը բիբեր, գույգ մ'հոգեվարք կայծոռիկ,
Արտին մեջ շունչ մ'հովերու
Մեռնող սուրբի մ'հուսկ սաղմոսին պես տըխուր,
Խորշումներուն և իր գեղջուկ լողիկին
Ծալքերուն մեջ արևու
Ջերմություն մ'հուր, երգ մը հովեն սորվեցված,
Քըրտինքի շիթ մը սարսռուն,

Հողի բույրեր, կրծու բույրեր ծոթրինի,
Այլևս անդարձ, անվըրեժ, լուռ կը մեռնի՛ն...
Ո՛չ, հանուն հայ մռունչներուն,
Թափված արյունն անմեղին չի՛ մեռնիր. Ո՛չ...
Վաղն հողը դուրս պիտ' պոռթկա
Արևուն տակ հասկեր առլի, կյանք մը նոր,
Նոր և հրակա, հրակայացած դիակով,
Բողբոջ մ'առույգ, գեղեցիկ,
Վաղն այս բարի արյունեն վեր պիտ' ելլեն
Խառնըվելով ցորենին
Նոր Սերունդի կարմիր կարմիր կակաչներ,
Որոնց արմատը կը դըպչի, պայթման մոտ,
Վարն հրաբուխի մ'ապագա...

ԿԱՐՄԻՐ ՀՈՂԸ

Գրասեղանիս վրա, սա
Սկավառակին մէջ կա բուռ մ' հող, բերված հոն
Հայրենիքի դաշտերեն:
Նվեր է ան. - Զայն ինձ ձոնողը կարծեց
Միրտն իր տըված, առանց երբեք գիտնալու
Թէ կու տար իր պապերունն ալ միասին:
Զայն կը դիտեմ . - մերթ ժամեր
Բիբերս անոր վրա հառած կը մնամ
Լո՛ւտ և թախծո՛տ, իբր այդ հողին մէջ հուռթի
Նայվածքս արմատ արձակեր : -
Կը մտածեմ . - Գուցե իր գույնը բոսոր
Չէ պարզված բնության ներհուն օրենքեն.
Վերքերու սպունգ մ'ըլլալով
Խմած է մաս մը կյանքի, մաս մ'արևու.
Եվ իբր տարր անպաշտպան
Կարմիր հող մ'է եղած, հայ հող մ'ըլլալուն:
Գուցե իր մէջ կը բաբախեն տակավին
Դարերը հին-հին փառքին,
Կայծն ամրակուռ սմբակներու որոնց գոռ
Արշավանքն օր մը ծածկեց
Հայկյան վաշտերն յաղթության տաք փոշիով:
Կ'ըսեմ . - Իր մէջ դեռ կ'ապրի
Ինքնատիպ ուժն այն որ կազմեց շունչ առ շունչ,
Կյանքս իմ, քու կեանքդ, ու տուավ,
Կարծես ձեռքով գիտակից,
Նույն թուխ աչվին նույն և նման հոգիով
Կիրք մ'Եփրատեն առնըված,
Միրտ մը կամշոտ, թաքըստոց
Ըմբոստանքի ու նան բո՛ւորն սիրո:

Իր մեջ, իր մեջ կը կայծկլտա հոգի մ 'հին՝
Հին դյուցազնի եղած փտոր մը գուցե՝
Կույսի մ 'աղվոր արցունքով .
Հյուլե մը կա Հայկեն , փոշի մ 'Արամեն,
Անանիայեն բիր մը դետ
Դեռ աստղերու ճաճանչներով թաթաղուն.
Ա՛զգ մը կա հոն, սեղանիս վրա ազգ մը հին,
Որ այսօր իր վերաշողշող այգուն մեջ,
Հողի բնատուր մարմնույն տակ ինձ կը խոսի,
Կոզեզինե - և աստղերու ինչպես ցանն
Անհունության մեջ կապույտ -
Փռչիներովն իր հրաբորբ
Հոգիս քաղցրիկ փայլակներով կ'ոռոզե:
Ու այն ատեն լարը ջղերուս կը դողա
Սարսուռով մ 'հորդ , ա՛յն սարսուռով՝ որ մտքին
Հերկերուն վրայ ավելի՛
Ըստեղծիչ է քան գարնան հովն արփագաղջ:
Ու կը զգամ անցքն ուղեղես
Նոր հուշերո՛ւ, հոգիներո՛ւ դեռ կարմիր
Խոր վերքերովն իրենց, վրեժի՛ շրթունքներ.
Եվ այդ հողն, այդ փոշին, գոր ես կը պահեն
Այնքա՛ն սիրով՝ որքան հոգիս պիտ չըներ
Եթե մարմնույս աճյուններն
Օր մը մահեն վերջ հովերուն մեջ գտնար.
Այդ պանդուխտ մասն Հայաստանի, մասունքն այդ
Մնացած մեր հաղթ պապերեն,
Բժժանքն ու ձոնն այդ կարմիր,
Միրտս սեղմած մագիլներով անձանոթ,
Երկինքն ի վեր, գրքի մը վրա, թանկագին
Ժամու մը մեջ ժպիտներու, սերերու,
Կամ քերթվածի մը ծնած վեհ վայրկյանին
Զիս հապըշտապ կը մղե
Մերթ լալու, մերթ մոնչելու,
Եվ զինելու բռունցքս, հոգիս բռունցքիս մեջ:

ՀՈՐՄ ԲԱՆՏԻՆ ՄԵՋ

Դեռ փոքր էի. եկա քեզի մինավոր,
Մութ զընդանիդ մեր այցի:
Մայրս հիվանդ էր. կը շըրջեի ե՛ս ազատ
Մեջտեղ բանտի և մահճի:

Լուր տըվին քեզ. եկար առջևը դրբան
Վանկապատ՝ որ - ոճիր-
Կը բաժներ մեր ողջագուրումը կըղկաթ:
Երկար անխոս, վըշտակիր :

Ո՛րքան նիհար էի և ո՛րքան աչքերդ
Ծարավ էի արևու.
Մորուքիդ տակ կարծես ոսկրի վրա բուսած.
Ո՛վ հայր, մեռել մ՛ էիր դու:

Նըշմարելուդ պես զիզ ժըպտիլ ըսկըսար.
Բայց այդ ժըպիտը բարի,
Այդ սուտ ժըպիտն էր նունուֆար մը ծաղկած
Լըճի մը վրա արտոսրի:

Կարկառեցիր սև վանդակին ետևե
Շըրթունքներդ իմ շըրթներուն.
Բայց իրարու անոնք, ավա՛ղ, չըհասած՝
Մեր համբույրին դողդոջուն՝

Նույն ժամանակ եղան օրքան և դագաղ:
Ո՛հ, պիտի ո՛րչափ քեզի
Բաղձայի տալ ընգրկումի մը մեջ տաք՝
Ազատ աշխարհը դուրսի,

Եվ մի փոքրիկ բիբերս քու բիբերուտ
Տեղալ երկնքին անսահման,
Մըրտես սըրտիդ պարապել բոլոր օրերս այն,
Որ արևու տակ անցնեմ:

Մութ բանտիդ մեջ գարնան վարդերը ամբողջ
Պիտի լեցնել ուզեի,
Կամ ճիղմ հասակս ու ապագան հասակիս
Պիտ՝ հոն թաղել ուզեի:

Ո՛վ տըխուր ժամ: Քեզ մի առ մի պատմեցի
Սև վիպակները մեր տան,
Հանիիս մահն ու հիվանդ մորս հազը խուլ
Լըռության մեջ գիշերվան .

Ըսի թե մեր տանիքին վրա, լուսնին տակ,
Բուերը պար կը բըռնեն,
Թե այս տարի մեր վարդենին չորացավ
Գերեզմանատան խորշակեն:

Կը լըսեիր զիզ եվ հարցում կընեիր,
Երբ հըրաման մը վայրի,
Կույր հըրաման մեկավ ըզմեզ բաժնելու . . .
Դարձա ր... առանց համբույրի . . .

Ու ես երկա՛ր ետևեդ պի՛շ նայելով,
Հա՛յր իմ, մինակ, հոն լա՛ցի.
(Մինչ կուրծքիս տակ բաշ կը թոթվեր ոխ մը նոր)
Միրտս աչքերես քամեցի:

. . . Ո՛վ կյանք սիրո, լանջ քրտինքի, սիրտ փուշի
Ցեխին նետվա՛ծ սրբություն,
Արևուն բորբ հոսանքներուն դեմ գոցված,
Ո՛վ երակներ ազագուն:

Տեսա՛ որ ձեզ հետ, ձեզի հետ սուգեցան
Եղեռնի մեջ, արտալա՛ծ,
Սուրբերն ամե՛ն կրոնքի, ամե՛ն շուշաններ
Եվ Հիսուսներ թըքնըված:

ԿԱՐՈՏԻ ՆԱՄԱԿ

Կը գրբե մայրս. «Ո՛վ իմ որոյակըս պանդուխտ,
Դեռ մինչև ե՞րբ պիտ՛ անծանոթ լուսնի տակ
Օրերդ անցնին, դեռ մինչև ե՞րբ հեզ գըլուխդ
Ես չըսեղմեմ լանջքիս տաք:

Հերի՛ք օտար սանդուղներեն ելլեն վեր
Ոտքրեդ՝ որ օր մ՛ափերուս մեջ տաքցուցի.
Հերի՛ք ալ սիրտդ՝ ուր իմ ծիծերս եմ պարպեր՝
Դատարկ սրբտես դուրս հյուծի:

Ջահրակին տակ թներս աշխատ հոգներ են.
Կ՛հուսեմ պատանքս ա՛լ ծամերովս ըսպիտակ.
Ա՛խ, քեզ տեսնեն անգամ մ՛աչքերս ու փակեն
Թող հոգիս ա՛լ իրենց տակ:

Դըրանս առջև կը նըստիմ միշտ տըխրալիր
Լուր կ՛ուզեմ վրադ ամեն կռունկե՛ որ կ՛անցնի.
Այն ճյուղն ուռի՛՝ գոր քու ձեռքով տընկեցիր,
Վըրաս կընե հովանի:

Իրիկունները գո՛ւր դարձիդ կը սպասեմ.
Կու գան կ՛անցնին գյուղին քաջերը համակ.
Մշակը կ՛անցնի, կ՛անցնի կովարծը վըսեմ.
Կը մնամ լուսնին հետ մինա՛կ:

Ավերակ տան մեջ անտերունջ եմ թողված,
Մերթ շիրիմիս, մերթ օճախիս ծարավի.

Կրայի մը պես՝ որուն աղիքն իր կոտրած
Պատյանին հետ կը կըցվի:

Եկո՛ւր, որոյա՛կ, հայրենի տունըդ շենցուր.
Դուռն են կոտրեր, մառաններն ո՞ղջ դատարկեր.
Կը մըտեն ներս լուսամուտեն ջարդուփշուր
Գարնան ամբողջ ծիծառներ:

Այն բազմաթիվ հոտեն, գոմին մեջ, եղո՛ւկ,
Մընացեր է խոյ մը միայն քաջարի՝
Որուն մայրն օր մ՝ – հիշե՛, որոյակ– դեռ գառնուկ
Կերավ ափիդ մեջ գարի:

Թեփով բրնձի և առվույտով պատվական
Մընունդ կու տամ արդ անոր պերճ դըմակին.
Տոսախ սանտրով կը սանրեմ բուրդն աղվական.
Ան գոհ մըն է թանկագին:

Դարձիդ՝ պրճնած վարդերով գլուխն իր համակ՝
Պիտի մորթեմ կյանքիդ համար ծաղկատի.
Իր արյան մեջ պիտի լըվամ, քա՛ղցր որոյակ,
Ոտքերդ հոգնած պանդուխտի»:

ԾԵՐ ԿՌՈՒՆԿԸ

Գետափին վրա, կռունկներու շարքին մեջ,
Ան իր գլուխը ծռեց.
Դըրավ կըտուցը թևին տակ, ու ծեր, խոնջ,
Նըվաղկոտ բիբով ըսպասեց
Իր վերջին սև վայրկյանին.
Երբ ընկերները ա՛լ մեկնիլ ուզեցին՝
Ան չըկըրցավ անոնց թոփչքին միանալ.
Հազիվ բացավ աչքն ու դիտեց օդին մեջ
Խըմբակին չուն՝ որ կ'երթար
Երդերեն վար կըրկռալով
Հանձնված լուրեր, բարևներ,
Եվ արցունքներ պանդուխտի:
Ա՛հ, խեղճ թըռչուն. Այդ դավկահար գըրկին մեջ
Աջնանային ցուրտ լըռության՝ կը մեռնի:
Փո՛ւճ է այլևս երագել
Գարուն մ'հեռուն, գաղջ հոսանքները օդին
Ճախրող թևին տակ գորեղ,
Կամ սրունքներով ջըլեբաց
Անցքը պաղուկ առվակներե, մեծ վըզին
Մըխըրճումները շամբերուն մեջ կանանչ,

Փուճ է այլևս երազել:
 Թները հայ կըռունկին
 Ա՛լ հոգնած են ճամբորդելէ: Ան եղավ
 Հավատարի՛մ սըրտաճըմլիկ պաշտոնին,
 Փոխադրեց շա՛տ արցունքներ.
 Ո՛րչափ հարսեր իրենց սըրտերը հըրատապ
 Իր քննքշական փետուրներուն մեջ դըրին.
 Ո՛րչափ մայրեր և որդիներ բաժնըված
 Անոր թները բեռցուցին համբույրով...
 Արդ սարսուռով մ'օրհասի
 Ան վըրայեն կը թոթվէ
 Մեծ վիշտն Ազգի մը նըժղեհ,
 Ուխտեր հանձնված, լացեր գաղտ
 Նըշանածի մ'որ տեսավ ա՛լ իր հետին
 Վարդի թոշնումը դեռ բընա՛վ չհամբուրված,
 Տըրտում օրհնենք մը մամու,
 Սերեր, իղձեր, կարոտներ
 Ա՛լ վըրայեն կը թոթվէ:
 Եվ գետափին գորշապատ
 Ամայության մեջ բանալով վերջին հեղ
 Հոգնած թոխներն ուղղաբերձ՝
 Հայ բլուրներուն, գյուղերուն վրա կիսավեր,
 Կըրկոռցովն օրհասի
 Գաղթումը ան կ'անիծե՛:
 Եվ կ'իյնա, լուռ: Խիճերուն վրա գետափին
 Կ'որոշէ իր գերեզմանն,
 Ու մըխելով կըտուցն հիր
 Քարի մը տակ, բընակարան դողոշի,
 Քարշ ձգած վիզն իր ճապուկ,
 Ալիքներուն երգին մեջ
 Դողով մը վեհ կը մեռնի՛...
 Հոն օձ մ'որ լուռ, երկա՛ր ատեն կը դիտեր
 Այդ ճըզնածամն ակընկառույց բիբերով՝
 Գետեզրեն վեր կը սողա
 Ու վրեժէ մ'հին օրերու,
 Վատ ոստումով մ'հապըշտապ
 Անոր մեռած պարանոցին կ'ոլորվի...

ՀԱՅ ԲԺԻՇԿԸ

Բարեկամիս՝ տոքթ. Ռ. Պազարճյանին

Իրա՞վ. գիտե՞ս ըսպաննել Մահը, խեղդել
 Ոսկըրներու, ջըղերու մեջ, գետեղել
 Գլուխդ հեզերուն խոթ կուրծքին.
 Հանդուզն գործ՝ ուր կա վըտանզն ահարկու
 Խաբված սիրո ըմբոստության դիպելու,

Կամ հյուձախստի մը հորձքին:

Գիտե՞ս համրել բաբախումները սըրտին,
Կյանքին քայլերն՝ որոնց ներքն կը թափին
Մեռած կրակներն այտերե:

Հին սուրբի պես դու բարի ես ու կարո՞ղ.
Զերդ մանգաղված կակաչներու ինկած շող՝
Սիրտըդ վերքե՞ր կհամբուրե:

Արդ, եկո՛ւր, ո՛վ եղբայր, ծընած՝ չըգիտեմ
Արգանդեն ո՛ր հղի վարսամին լուսադեմ:
Եկո՛ւր, թռիչքիս վրա գերդ ճայ՝
Քեզ պիտ՛ տանիմ Աշխարհ մանհո՛ւն գերեզման,
Որուն վերն կախված արփին, լուսնկան
Դամբանի միշտ կըլլան ջահ:

Հոն հյուղե հյուղ տըրտում քալես պիտի դուն՝
Բանալով խուլ ողբի դըռները գաղփուն.
Վերմակներե դուրս՝ նիհար
Թներ քեզի պիտ՛ երկըննան վերամբարձ.
Պիտի շողա մըրոտ խըրճիթը հանկարձ
Իբրև ոսկվո հանք մըլլար:

Ու առջևդ հոն պիտի տեսնես մահահոտ
Էակներու գարավոդ կույտ մ՛ հիվանդոտ,
Թաց խորշերու մեջ՝ տըժգույն
Դեմքեր վըտիտ, բիբեր ջերմի վառարան,
Որ փոխանակ արեգակին կը տեսնան
Հըրդեհն իրենց գյուղերուն.

Լանջքեր վիրոտ, վիրոտ սըրտեր՝ լի արդար
Վըրեժներով, սարսափներե խելագա՛ր,
Ճակատներ՝ ուր թըշնամվույն
Անարգ սուրերը կարձակեն բոց և ահ,
Հոն կը գըրեն – ըստ կամքի – կյանք, վաղը՝ մահ,
Ճակատագիր անկայո՛ւն...

Զարդված կողեր՝ որ կը դողդղան սվիներեն՝
Ինչպես եզ մ՛ իր անդեորդին խըթանեն.
Ցուրտի, սովի մեջ՝ դեղին
Ծյուրախտ թոքեր, աղիքներ չոր ու ցամքած՝
Որոնց միջև Քաղցն, երիզորդ մարմնաքանց,
Կը քաշե մորթը ոսկրին:

...Ահա – ո՛վ վրեժ – եղբայրներուդ այս անվերջ
Քայքայումին առջև՝ սըրտմիտ հոգվույդ մեջ

Խեղդած պաշտոնը, ընդվի՛զ, վե՛ս,
Շանթի նըման՝ որ կ'երկրննա պողպատին,
Գուցե՛, գուցե՛, ո՛վ եղբայր, դու մոլեգին
Նըշտրակին տեղ սո՛ւրն ուզես:

ԼՎԱՑԱՐԱՐՈՒՅԻՆ

Կոտորածի տարին այրի մընաց ան:
Հասարակաց փոսերուն
Մեջ ամուսինն իր կը հանգչի... կը նիրհե
Տունն իր փոքրիկը սիրուն:

Օտար հարկի տակ, ձյուն ձըմռով, դեռ կանուխ,
Ճրագին մըխտտ լույսին տակ,
Ան կը լըվա, տաշտին առջև, կը լըվա՝
Սոթած թևերն ըսպիտակ:

Դեռ մանկամարդ է և աղվոր. դեռ իր սև
Վարջամակին տակ ունի
Կըրքոտ աչքեր զինված սուգին, ժույժին դեմ,
Պատերազմող մը գաղտնի:

Սըրտին մեջ բորբ հաղթահարել չէ կըրցած
Մայրությունն իր կուսության.
Մարդը սիրո՛ կը հրավիրե, տղան՝ կաթի
Իր մատղաշ ծոցը բուրյան:

Բայց կը լըվա՛: Հանուն պատառ մը հացի
Հանուն միակ իր որդվույն
Ապագային՝ ան կը դավե հասակին
Վարդերու թարմ հեստությունն:

Առանձին է գետնահարկին մեջ խոնավ,
Իր վըշտին հետ առանձին,
Մագերն արձակ, սանդալներն իր՝ ոտքերուն,
Մերկ թևին վրա՝ երկու ծին:
Կաթսային դեմ, կաթսան գըրկող բոցին դեմ,
Փըրփուրն մեջ օձառի՝
Ուրիշներուն աղտին ըսպաս կը դընե
Սիրտն որբ, մարմինը՝ գերի:

Եվ մինչդեռ գորշ շոգիին դեմ լըվացքին
Կը ծըծեն թույն իր օրեր,
Եվ գլուխը սև (գոր պսակեցին ամուսնույն
Շիրմին բուսած եղինճներ),

Այդ սևուկ գլուխը խոնարհած կոնքին վրա,
Մինչ ամբողջ օրը լըռին
Ինք կ'աշխատի և կ'ընե կաթը՝ բեղուն՝
Քըրտինքներովը ճակտին:

Անդին, մինակ, իր երեխան արթընցած
Օրոցքին մեջ, անոթի,
Կու լա, ողի կ, ողի կ կու լա, և հուսկ խոնջ
Նույն իր լացով կը խեղդի:

ԱԼԻՇԱՆԻ ՇԻՐՄԻՆ ԱՌՋԵՎ

Ա

Քեզի եկա՝ իբր ուխտավոր մը հոգնած,
Որ կը գըտնե հուսկ փոխարեն իդներուն
Շիրիմ մը՝ հոն ծընրադրելու սիրտը բաց,
Եվ խոկալու, համբուրելու լույս աճյուն:

Հոս կը նընջե՛ս. Քեզ կը պատե լըռությունն.
Օվկիան մեւ՝ գոր կը ծածկե այդ պատանք.
Կարմիր հըրդեհ մ'որ մոխրի տակ կ'առնե քուն.
Հոս կը նընջես. Ինչպես հըրատն ամպին տակ:

Որթի ճյուղերն և ուռիներ տըխրամած՝
Դեռ արձագա՛նգը քընարիդ կը պահեն.
Հովեն՝ կ'ողբան շիրմիդ չորս դին կամ լըռած
Շեշտեղ մնացորդ մը դարձյալ քեզ կը բերեն:

Շուրջըդ ծավի Ադրիականն հար կու լա,
Ուրկե վիհեր դու չափեցիր մըտածման.
Մուրբ աճյունիդ սափորն է այդ ծովն հիմա,
Մինչ լայն ճակտիդ լայն օորորոցն եղավ ան:

Ո՛չ, մարդըս չէ, լոկ բնությունն է՝ որ հանճար
Մ'օրբել կըրնա, վերջը պատանքն իր ըլլալ.
Տիեզերքն ունի իր մարգարիտը անճառ՝
Որուն կու տա մարդ պահ մ'իր ծոցն հյուրընկալ:
Բ

Վենետիկն իր պալատներով մարմարե
Կը ձրգե վրադ ըստվերն իր լայն, միամած,
Բուրգի մը պես՝ որուն ներքն կը նիրհե
Արծիվն՝ ամփոփ՝ արևն հոգվույն մեջ բանտած:

Քաղաքն այդ խաժ ալիքներուն երեսին
Ցըցված կայմին ծայրն է նավուն ջըրասույզ,
Արյունաթորմ ծըվենն է ան խլայի մ'հին,
Տոժի մը գանկն է՝ իր փոսեն ինկած դուրս:

Դու ներշնչված, ա՛հ, այդ անգին ծրվենեն՝
Ժողովեցիր ծվենքը Աշխարհիդ խլաներուն՝
Փըլուզներու, փոշիներու ներքենն,
Եվ ծայրերեն քղանցառու ցախերուն:

Ժողովեցի՛ր, վազք մ՛առնելով դեպ խըլված Փառք,
Բիբդ՝ արցունքոտ, սիրտդ օվկիան՝ վիրամած,
Եվ սըրբեցիր՝ զանոնք ըրած դաստառակ՝
Աչքդ ու աչքե՛րը Սերունդին կեղեքված:

Քողեն մութի, մոռացումի, լըռության
Հանեցիր մեր դափնիներու թերթերն հին,
Եվ դընելով զանոնք երգի մը վրան՝
Առե՛ք, ըսիր, վիրածոր շողն Անցյալին:

Ծըռած՝ սըրտին հայ՝ սերտեցիր ու դարձար
Յուրաքանչյուր խորքն անկյունի և ծալքի.
Իջար անոր անդունդն հըրավառ
Եվ քըրքրեցիր ճընշված խորշն արցունքի:

Ո՛հ – Աստվա՛ծ իմ – ի՛նչ ըղեղ էր ասիկա,
Որ Տիեզերքին քամեց երակը համայն.
Հենած մարդուն, ճառագայթին, խաչին վրա,
Գըրկած Այրին՝ գոր կը կոչեն. Հայաստան:
Գ

Արծի՛վ, որ մռայլ ամպերն հրեղեն բիբերով
Խորտակեցիր, մութին սառերն հալեցան.
Արծի՛վ, որ մեր հոգին կարշնեղ ճապուռով
Բարձրացուցիր. չափեցիր մեր ապագան:

Զինջ հայլի մե՛ս՝ ուրտեղ ամեն մարդ կըրնա
Գըտնել դիտել պատկերն իր ճիշտ, հարազատ.
Նըվագներուդ մեջ երբեմն ես քրիստոնյա,
Զինվոր երբեմն, երբեմըն մոգ, միշտ Սոկրատ:

Եվ քու կյանքիդ ու երգերուդ մեջ ամեն
Դու բանաստեղծ Նահապետն ես հոգեհմա.
Բորք Արշալույս մես որ կելլա օվկիանեն,
Ամպեն, մութեն՝ կը սըվո՞ի Մարդուն վրա:

Այն արշալույսն որ իր մտածման հետ անանց
Մն սըքեմով մ՛ամբողջապես պատված է.
Եվ բոցե գլո՞ վաը սև գըտակ մ՛է դըրած.
Գիշերվան մեջ երկինքն և էլ չըքնաղ չէ՞ ...
Դ

Մինչ այդ կըլլա օրե օր շիթըդ լույսի
Սա ջուրերեն անդի՛ն, անդի՛ն լեռներեն.
Մինչ սերմիդ հունձքն ալիք ալիք կը նագի,
Եվ արյունով, լացով խայրի կը կապեն:

Դու կը նընջե՛ս, վինըդ՝ բարձ, փառքըդ՝ վերմակ,
Ըստվեր կընեն վրադ դափնիները շուրջի.
Եվ խաղաղ քունըդ հըսկե Հիշատակ.
Դու կը նընջե՛ս, իբրև ծըննդյանդ օրն առջի:

Ամեն նոր դար նոր պիտ՝ բերե քու անուն,
Եվ դու դարձյա՛լ պիտի ծընիս... սըրտի մեջ,
Ո՛հ, ո՛չ. երբեք չըվախճանիս պիտի դուն,
Զի կապեցիր կյանքդ արևո՛ւն հետ անշեջ:

Օր մը, գուցե, նույնիսկ քունե՛ դ ալ զարթնուս՝
Երբ հայ ճամբորդ մեկած դրախտի Երկրեդ՝ ա՛լ
Ժըպիտ բերե քեզ՝ արցունքի տեղ անհույս.
Օր մը, գուցե, զարթնուս նույնիսկ քունեդ ալ:

Եվ իցի՛վ թե. Դեռ պետք ունի Հայը քեզ.
Հայը հյուղին, բանտին, վըշտին, խավարին,
Հայն որ՝ անգետ՝ կը սայթաքի աղեկեզ,
Եվ Հայն որ՝ նենգ՝ կը սայթաքե մոլեգին:

Տե՛ս, կը սպասենք ամպածըրար, տըխրունակ.
Եթե դու չես կըրնար գալ՝ գեթ դըրկե մեզ՝
Բաֆֆիեն խոսք մը կազդուրող, լուսարձակ,
Կամ սիրո ցուլք մ՝ Աբովյանի սըրտեն հեզ:

Խոսե՛, հոգվույս շողի, հույսի բառ մ՝ հետին
Թող ցայտե գանկըդ՝ որ անհուն աշխարհ մ՝ էր.
Միթե սափորը դատարկված վարդաջրին
Բուրումի հետք մ՝ իր կողերուն չի՞ պահեր:

Բայց կը լըռե՛ս, ո՛վ մըտածման դու հըսկա՝
Որ սփինքս դարձար երազիդ հետ, անձանձիր,
Ա՛լ չես խոսիր, մատը փառքի բերնիդ վրա
Կարծես կըսես խաղաղ ճակտով. «Հեռացի՛ր»:

ՋԱՐԴԸ

(1895-1896)

Ա

Հրամա՛նը, օ՛ն: Քարոզին մեջ Պիլայի
Կը ցըցե Ռիսն ահա ցուլի եղջյուրներ.
Մըզկիթներու բակերուն մեջ ժիրաժիր,

Մահակներն ա՛լ կը հըղկըվին, կը հուսվին
 Խարազանները թունավոր օձերով.
 Յաթաղաններն հատու են.
 Եվ Ալիսի ու Ճորոխի, Եփրատի
 Ափունքներուն վրա դահիճները կըկզած
 Կը հեսանեն կայծքարերով կացիններն.
 Հրամա՛նը, օ՛ն: Ալ բավական է մեծցավ
 Արծիվներու համբույրով
 Թորգում վիշապն օրոցքին մեջ Մասիսի,
 Եվ բավական է, որ իր վեհ գոռումով՝
 Սան-Ստեֆանի և Պեռլինի հողին վրա՝
 Թըմրած սըրտերն համակրության խըթանեց,
 Եվ վերքերն իր կորյուններուն շըղթայված
 Թըվեց թըվովն աստղերուն:
 Արդ կը տեսնե՞ք ճիրաններն իր լուսաբուխ
 Որոնց խըրած տեղերն հերձ
 Կը ճեղքվին արշալույսներ, արևներ.
 Նոճիներուն մեջ Վոսփորին կը լըսե՞ք
 Սև մրըրկումները վիթխարի իր պոչին...
 Հրամա՛նը, օ՛ն:
 Օր մը սև.
 (Այն օր աստղերն ամբողջ թույն կաթեցին.
 Եվ բուրեցին ոսկրի հոտ
 Վարդերն ամեն հովիտներու) – օր մը սև,
 Ելլալըզ-Քյոշկի անկյուններուն մեջ սընած՝
 Սուլթանական գանկե դուրս,
 Որջին բերանը լըրտեսող գայլի պես
 Այդ սև հրամանը պոռթկա ց...
 Բ
 Լա՛ց, Հայաստա՛ն. ո՛վ թըշվառ կին, ու փետե՛
 Վարսերդ սև. Այդ գըլխուդ վրա դըրժըված
 Ցանե տաք տաք մոխիրներ:
 Լա՛ց ու պատռե ծիծերդ ըզմեզ մեծցընող
 Երակներեդ թող հոսե թույն մ՛ոխության
 Ու Թեյմըզի, Հըռենոսի, Վոլկայի
 Ակերն ամբողջ լեցընե ժահը, սևցընե,
 Զի հոն լվացին քեզ դատող
 Պիղատոսներն իրենց ձեռքերն ու հոզին,
 Երբ հույսերուդ Արշալույսին տակ բոսոր,
 Առանց խըղճի, ամոթի,
 Քեզ նյութեցին խոր Լըռություն՝ ւնը մատնիչ:
 Լա՛ց, – ավասի կ կը տեսնեմ,
 Որ քու սա նեղ վայրկենիդ
 Բարեկամներդ քայլերին կը դարձնեն.
 Եվ ճակտիդ դեմ փակելով
 Դեսպանական իրենց դըռները՝ կընեն

Մեմերեն ներս, նույն քու մահվանըդ վրա
 Ճառեր ծափով ընդունված,
 Ծըրագիրներ համակիր
 Որոնք հետո տապանագիրըդ եղան:
 Քեզ կը թողուն մինավոր
 Մինչ կամպոտին հորիզոնները չորս դիդ,
 Եվ լրջության մեջ ճամբաներուն կը լըսվին
 Կըճըրտումներ ատամներում թաքթաքուր.
 Հազար բուեր ճամբա կելլեն դեպի քու
 Մարերըս սև և գուժկան
 Ոգի միր թուխ թները շուրջ կը պարզե,
 Եվ Տավրոսեն Մասիս, Մասսեն Չամլըճա,
 Մեռելության մը մեջ խոր
 Կոտորածի փողը տըխտ ւր կը հընչե...
 Գ
 Փակե՛ որջերդ, Հայաստա՛ն,
 Արևուն դեմ մի՛ բանար
 Դըռները լայն փապարներուդ՝ որոնց մեջ
 Ես կը տեսնեմ դեղին աչքեր գազանի:
 Ծոցըդ փակե՛, որ խորթ գավակ մեծցնելու
 Եղավ սովոր և հուռթի.
 Երկու գեղուն ծիծերդ, Եփրատն ու Տիգրիս,
 Թող պահ միրենց մեջ խեղդեն
 Բարբարոս տոհմը շեյխերու, պեյերու:
 Օ՛ն, երախներըդ խըցե՛.
 Ի՛նչ, չե՛ս տեսեր՝ որ որդիներդ հարազատ,
 Դեռ անպատրաստ և անզեն,
 Լոկ մուրճերու, սըղոցի
 Ձայնին կըլլան ունկնդիր.
 Տըրեխնություն վրա իրենց
 Արյունի տեղ կալերու ցեխն է դեղին.
 Ի՛նչ, չե՛ս լըսեր՝ որ սաղմուսի՛ մեջ միայն
 Գիտեն կանչել արշալույսներն հեռավոր.
 Արորներուն վրա հոգնած
 Իրենց կուրծքին մազերը դեռ կը բուրեն
 Խո՛ւնկ փոխանակ վառողի:
 Օ՛ն, Մա՛յր իմ, Մա՛յր, սա վայրկենիս խեղդե՛, օ՛ն,
 Մեջըդ ամեն խուժդուժ, ամե՛ն դահճապետ...
 Բայց չե՛ս ուզեր դու ինձ լըսել, և կամ չե՛ս
 Կըրնար վրայեդ ըզգետնել
 Քաղաքներուդ ավերակներն՝ որոնց տակ
 Զըմռաբույր մարմինըդ կես կը թաղվի.
 Ու կը թողուս որ ըլլա ժա՛նտ Մահը քեզ
 Բազուկներու մեջ Ղուրանի ճետերուն.
 Կը թողուս լո՛ւտ, անկարեկի՛ր,
 Եվ ես ահա կը նըշմարեմ՝ որ անոնք

Որջերեն դուրս ազատ ճամբուն վրա կոստնուն:
 Միսի գրրգռիչ ախորժակեն կանչըված՝
 Կը հավաքվին ոհմակ ոհմակ, ոռնաձայն.
 Իրենց գրլխուն աստղեն ամբողջ կը դեղնին.
 Եվ կակաչներն հազարավոր բլուրներու
 Սարսափահար բաժակներնին կը փակեն:
 Արյունի քաղցն ու հին փափաքն ավերման
 Թներն անոնց կը սոթտե,
 Թներն անոնց կը զինե...
 Կը հալածեն Հայորդիներն անպաշտպան,
 Հայորդիներն որոնք հազիվ վերցուցած
 Իրենց գրլուխն աշխատանքի կարկահեն՝
 Ըղեղներուն մեջ կըզգան
 Սուլերը տաք գրնտակին.
 Կը բարձրացնեն ճիշը կյանքի ծարավուտ.
 Եվ գոհական եզներու գերդ խումբ մօրհնյալ՝
 Որոնց մինչև գոմը հասած է հրրդեհն,
 Ուղեկորույս, խլազոչ,
 Կըթոտ ծունկով, բիբերով դուրս կըկոցված,
 Կը փախչըտին շըփոթ, թասուն, հուսահատ.
 Մահվամբ լեցված նայվածքով,
 Ծերեր, կիներ, տըղաներ,
 Արձակ մազով, ձեռքերուն մեջ սանդալնին,
 Փողոցներե փողոց, լեռնե լեռ, մուր.
 Կյանքի՛ն, կյանքի՛ն, քաղցըր կյանքի՛ն կը վազեն:
 Դ
 Հոն, կը տեսնեմ քեզ, ո՛վ վայրագ դու Ոգի.
 Անզեններուն, տրկարներուն ետևե,
 Մըրըրկելով փլատակներուն մեջ փոշին,
 Ճերմակ ձիուդ վըրա դեռ քեզ կը տեսնեմ...
 Ապարոշիդ մեջ կանանչ,
 Իբրև իժի ծըվարում.
 Ալփասլանի հոգին ըզքեզ կը պսակե.
 Պարեգոտդ այդ պատանքներուն պատանքն է,
 Եվ քու ձիուդ գորշ ըսթարին ծուպերեն,
 Հավերժական բըխումով,
 Արյուն մը գաղջ կը կաթի...
 Եվ դու ինայել չես ուզեր
 Բուր անոնց՝ որոնք թախձող թներով
 Ճամբուդ վըրա իրենց արև ը կուզեն:
 Անձավներե անձավ միայն, վերևեդ,
 Կը հընչե բառն ագռավներու կըռինչով.
 – «Հառա ջ, հառա ջ»:
 Եվ քու ճորտերդ ավազակ
 Կը հետևին մահ սերմանող արշավիդ...
 Կուրծքերե կուրծ լյարդաբորբ կը մըխան

Իրենց սուրեն արյան ակեր բանալով.
 Կը թավալեն երիտասարդ գրլուխներ՝
 Որոնց մազերը սև, մազերը խարտյաշ
 Ցեխերու մեջ կը պլըշկին,
 Եվ ծերերու կոկորդներն պինդ բռնած՝
 Գանկերն անոնց պատերուն դեմ կը ջարդեն.
 Կը բանան մեր մայրերուն
 Ծոցերը սուրբ՝ որոնցմե
 Կը թափին դուրս եղբայրներ դեռ անանուն,
 Հայեր առանց դեռ ձևի.
 Կը տըրորեն, կը փըշրեն
 Գարշապարի, բիրի, պայտի տակ կողեր,
 Գանկե՛ր, գանկե՛ր, անթիվ գանկեր, լեցնելով
 Սալհատակի ճեղքըվածքները բոլոր
 Ողնածուծով, ըղեղով...
 «Հառա՛ ջ, հառա՛ ջ»:
 Ո՛վ բարբարոս դու Ոգի,
 Անցքիդ վըրա, ձայներն ոսկրի փըշրումին
 Մինչև երկնի խոր անձավներն հըրեղեն
 Կը հընչըվին... Անցքիդ վրա կը խեղդե՛ն
 Երեխաներն իրենց մոր սև ծամերով,
 Ու մեր հարսերն հարաշխատ,
 Վավաշ կըրքով մընդգըճած,
 Ջըրհորներու պարաններով կը սպաննեն.
 Եվ կը գոհեն ո՛վ գիտե ի՛նչ չար դևի
 Տաճարներու ցուրտ սյուներուն փաթորված՝
 Սուրբ կուսաններն հերարձակ.
 Իսկ արտերուն, ա՛խ, արտերուն մեջ չըքնաղ
 Ուր Հայուն կյանքն արև՝ կըմպե և արևն
 Հոգիին մեջ կը մեռնի՝
 Վաստակաբեկ դիակներով կը կանգնեն
 Գողգոթանե՛ր, Գողգոթանե՛ր սըրբագան,
 Եվ բոլորն ալ, լի գանկ միբենց ձեռքին մեջ՝
 Միահամուռ կը խըմեն
 Արյուն ծերի և մանկան,
 Արյուն կընոջ, և արյունն
 Արարատին վըրա խաչված Հիսուսին:
 Ու կը կըկնեն դեռ ագռավներն հարատև.
 «Հառա՛ ջ, հառա՛ ջ»:
 Ո՛վ բարբարոս դու Ոգի,
 Այս Մասունն, Տավրոսն այս, Պրոպոնտոսն,
 Սմենայն տեղն՝ ուր Հայն հունձքին մեջ կանգուն
 Հակճիռըս միշտ գալուստիդ՝
 Կը խընամե գուցե գարին վաղորդյան
 Ձիուդ՝ որուն սըմբակին տակ կը դառնա
 Կյանքն հող և հո՛ղը մոխիր:

Ա՛լ տըրորված՝ իր վագրին տակ կը կաթեն
 Վարդերն արյուն, և ողկույզներն արտասուք.
 Իր գոռ դափրերն անտարբեր
 Ինկածներուն գանկերուն մեջ կը ճըխան.
 Ա՛լ կը մաշին պայտերն ոսկրի փըշրումեն,
 Եվ իր բաշին վրա կարմիր
 Անգըղներն հիռ կը դառնան...
 Այլևս ահա ամեն ինչ
 Փըլատակ է, կողոպուտ է, դիակ է,
 Որոնց վրա կը փաղփի
 Հըրդեհն աչքեն արյուն ու բոց հոսելով.
 Հըրդեհն (իսլամ ցեղերու հի՛ն վըրիժակ)
 Վարսերը շուրջ կը թոթվե
 Եվ վիշապի մըռունչներով կը վազե
 Կալերեն գյուղ և գյուղերեն քաղաքներ.
 Երկար թներ բոցերու
 Տուն տուններու կը շըղթայեն, կյանք՝ կյանքի,
 Ու ամեն տեղ, մոխրին վրա
 Մեր պըղծըված Պատիվը լոկ կը սպառնա.
 Բոցերուն մեջ գերդ շեկ Ոգի մը կանգուն
 Կը մըռընչե, և մըռունչով կը պոռթկա
 Դեպ արևու համբույրին՝
 Վըրեժի սերմն անդրանիկ.
 Մեինչ ոտքերուն ներքև
 Խանձումն ու հոտը մարմնի
 Մեր սերմերեն, օրոցքներեն դեպի վեր,
 Դեպի երկինք կը ճենճերին՝ որոնց դեմ
 Իրենց պինչերը բացած՝
 Ալլահն ամպին մեջե, Սուլթանը ցեխին
 Հոտոտելով փոխն ի փոխ՝
 Կը ժըպտին հաշտ իրարու,
 Եվ Եվրոպան դեմքն իր ետև դարձուցած
 Կոպերը թաց կը շըփե –
 Մեր ծուխեն աչքն իր բոզի
 Կըսկըծելո՛ւն համար լոկ:
 Ե
 Կեցի՛ր, կեցի՛ր, ո՛վ բարբարոս դու Ոգի,
 Ելլեսպոնտի եզերքին վրա ա՛լ կեցի՛ր.
 Սա սև ժայռին՝ ուր ծովն իր բանտը կու լա,
 Թող ձիդ խըրչտած Մեռնողներուն հոռնոյունեն՝
 Գերմարդկային գուրթի մահեղ սարսուռով՝
 Իր պինչերեն, իր բաշերեն, ազիեն
 Բոլո՛ր, բոլո՛ր մեր արյունները թոթվե:
 Կեցի՛ր ու հեղ մը հետքիդ վրա ընկըրկե՛.
 Տե՛ս. ավասիկ ամեն ինչ
 Կը գալարվի, կը ճարճատի, կը մեռնի,

Ծուխ է, մոխիր և ավեր:
 Արյան ծովու մալիքներեն կը ծրփան
 Մարդու ահեղ դիակներ,
 Դիակ կույսի, դիակ աստղի և վարդի,
 Դիակը մեր Ազգին և մեր Աստրծույն...
 Տե՛ս. Աճյունի, արյունի
 Կարմրածուփ լույծ անապատ մէ՛քու առջև,
 Որուն մեջէ ծանրաբեռնված ավարով՝
 Ըսպանիչները գազան
 Կը հեռանան լիզելով
 Արյունաքամ սուրերն՝ որ լերդ կը հոտին:
 Զ
 Կու գան ցիները հեռավոր լեռներէ,
 Եվ անգրդներն հոտառու
 Կու գան իրենց ձագերուն կեր տանիլ մեզ,
 Հայ դիակին մաշքին կըտուց մըխելու
 Կհասնի Արծիվն այն հըսկա
 Նոթի Արծիվն այն որ գուցէ օր մամպեն
 Վեհածողովը պիզմարքյան կը հըսկեր.
 Շուներն ուրախ պոչերով
 Բակերէ դուրս դիակէ դի կը հածին
 Եվ ծույլ լեզվով մը կը լիզեն արյուններն
 Մերթ կասկածոտ կենալով
 Կիսամեռի մաշքերուն
 Հանկարծական բացումեն:
 ... Հետո կու գան Մայրերը ո՛րջ մընացած
 Ու ողջ հարսերն ու բուր
 Մեր ողջ քույրերը խելահեղ կանչերով:
 Նոճիներուն մեջեն խումբն հեզ կը վազէ,
 Արձակ կուրծքով ու բոպիկ
 Դեպ մեռելներն հոշոտված՝
 Որոնց արյան տարբեր հոտն
 Ըստ սերերու տարբերության կը կանչէ
 Ջիրենք այն մեծ Ջայլին՝ որուն վըրա դեռ
 Ապագաներ պիտ ջայլեն:
 Ամեն իրենց մեռելներն հոն կը գըտնեն,
 Կիյնան իերնց մեռելին քով ծընրադիր,
 Եվ լաչակներն ու կըրկնոցներն ըսպիտակ
 Չարթնող սուրբի պատանքին պես ետ նետած,
 Մերկ ծոցերով, աղաղակով, ողբանքով
 Ծունկերն իրենց կը ծեծեն,
 Կը փեթըռտեն մազերնին,
 Իրենց կուրծքեն կը ժայթքի բառ մը ոխով,
 – Անէ՛ծք... ու սև՝ շիրիմներուն մեջ իսլամ
 Բոլոր ոսկրերն իրարու դեմ կը ջարդեն.
 – Անէ՛ծք... ու թո՛ւրք մայրերուն մութ ծոցին մեջ

Բոլոր ոսկրերն իրարու դեմ կը ջարդեն.
 – Անե՛ծք... ու վե՛րն, Երլտրզ-Քյոզկի երդին վրա
 Բու մը հրսկա կը դընե բույնն իր հրսկա:
 Լացե՛ք, լացե՛ք, ո՛վ հեգ Մայրեր, հեգ հարսեր,
 Աստղերե ա՛ստղ ձեր ողբանքը ձրգած՝
 Այսօր մեր սև հողին վրա
 Մա մորթըված Արշալույսները լացե՛ք...
 Թող ձեր բիբերն ինկածներու վրա հազար
 Արտասավելեն իրենց լույսեն դատարկվին:
 Վերջին լացն է. հա՛ պա, խածեք ըստինքնիդ.
 Հուսհատորեն դագաղներուն վրա ծըռած՝
 Թողեք մեկտեղ կափարիչ տակ գամվին
 Ծայրերը ձեր մազերուն,
 Եվ խոշտանգված ձեր իգությունն իր հետին
 Տրկարության մեջ փըշրի:
 Օն, հառաչ մալ, արցունք մըն ալ. վերջի՛նն է.
 Ջի ավասիկ, ահավասիկ կը տեսնեմ
 Արգանդներուն մեջ ձեր լայն՝
 Նոր Սաղմեր նոր Որդիներու ըստեղծիչ:
 Իրենց մըռայլ ձևին ներքև կը պահեն
 Հրգոր ճեմքերն Առյուծներու ապագա.
 Ձեր աչքերեն իրենց աչքերը փոքրիկ
 Կը բացվին պիշ աստղերու հորդ շողերուն.
 Եվ մերթ թագչած խորհուրդին մեջ աղիքի
 Կը թափառին, մեծնալով,
 Ավերին մեջ իրենց վաղվան ժառանգին.
 Իրենց շըրթունքն, ո՛վ Մայրեր, ձեր շըրթունքեն,
 Կայծակներու ծարավով,
 Դեպ ամպերու երակներուն կերկննան,
 Կերկննան դե՛պ ի հայկական արյունին
 Գերաստվածային հաղորդության՝ որուն մեջ
 Հայրենիքի Սերը վեհ
 Կրոնքը կըլլա հազարավոր կրոնքներու:
 Ու վա՛ դը, վա՛ դն, ո՛վ հեգ Մայրեր, լըսեցե՛ք,
 Ձեր արգանդե՛ն մի առ մի
 Պիտի ելլեն անոնք հրսկա և հերոս:
 Մեծ պիտ ըլլան. Մըրրիկն իրենց մազերուն
 Պիտի սարսե վերն աստղերուն մեջ Աստված.
 Պիտի հագնին արծվի մաշկեղ թըռիչներ՝
 Շանթերն իրենց վըրա կրելու միշտ պատրաստ.
 Գլուխնուն վրա Ազատության արաղչինն
 Ուլունքի տեղ պիտի հյուսվի աստղերով:
 Օ՛ն, լըսեցե՛ք, լըսեցե՛ք այս, ո՛վ Մայրեր,
 Վաղն երբ անոնք թամբեն իրեն նըժույզներն
 Ու անոնցմով, գերդ պողպատի ջըրդեղում,
 Վըրեժին մեջ մըկըրտվին.

Երբ թուրք արյան բարկ ծարավեն մոլեգնած՝
Լեռներուն վրա մըռընչեն,
Ո՛հ, այն ատեն, այս օրվան
Մեր Մեռելները բոլոր
Միահամուռ ոստումով
Պիտի կանգնին գերեզմանին մեջ իրենց,
Ու անհամբեր հեռո՛ւն, հեռո՛ւն ակնապիշ
Պիտի սպասեն վարդահեղեղ գալուստին
Արշալույսի մ՛Արշալույսի մը որուն
(Հավատացե՛ք ինձ, Մայրեր)
Ես ոտնաձայնը կ'առնեմ...

ԴԻԱԿԻ ՍՍՅԼԸ

Իրիկվան դեմ փողոցներեն ամայի,
Սայլ մը կանցնի ճողնչելով:
Ձի մը աշխետ գայն կը քաշե, ետևեն
Կերթա զինվոր մը գինով:
Ջարդվածներուն դագաղն է ան՝ որ կ'ուղղվի
Գերեզմանատունը Հայոց:
Արևն հետին իր շողերով կը սըփռե
Վըրան պատանք մոսկեզօծ:

Ձին նիհար է. Հունձն այդ իր ժա՛նտ տերերուն
Ան հազիվ հազ կը տանի:
Ականջներն իր կախած, կարծես խորասույզ
Կը մըտմըտա թե քանի

Դարեր պետք են ժամանելու համար հուսկ
Մարագն հընձված սուրբերուն...
Եվ շըրջակա պատերուն պոչն իր տատան
Կը սըրսկե մի՛ շտ, մի՛ շտ արյուն:

Եվ արյունն է որ կը կաթի հարաբուխ
Անիվներուն հեցերեն,
Սայլն իբրև վարդ կըրեր, իբրև թե ըլլար
Արշալույսին կառքն հրեղեն:

Հոն են դիերն, իրարու վրա, որդին մոր
Գանգուրներով պատանքված:
Մին խըրած է իր ամբողջ բռունցքը մյուսին
Տաք վերքին մեջ լայնաբաց:

Դեռ ծերունի մը ծընոտով ջարդուփշուր
Կհառե աչքերն երկընքին,
Որոնց մեջ սև անեծք մ'աղոթք մ'իրարու

Նույն վրբեժով կը խառնեն:

Մեկուն կուշտեն աղիք մը վար սահմըռտկած՝
Սայլին ճեղքին կ'առկախի.
Շո՛ւն մետնեն կու գա և գայն քաշած դուրս
Լափլիզելու կը զբաղի:

Ո՛չ ձև ունին, կամ ոչ գըլուխ. կը կըրեն
Հազար տեսակ գենքի խոց:
Արդեն իրենց մարմինն եղբայր է հողին.
Կերթան ահա գերեզմնոց:

Անոնց վըրա ո՛չ ոք կու գա արտասվել
Կամ լալ ողջույնը վերջի.
Քաղքին լռության մեջ արյան հոտը միայն
Զեփյուռին հետ կը շըրջի:

Բայց մութին մեջ պատուհանե պատուհան
Ահա մոմեր կը վառին.
Մամերն են որ գաղտագողի կ'աղոթեն
Վըրան կարմիր դագաղին:

Եվ այն ատեն պատըզգամբի մը վըրա
Կույս մը կելլե գեղանի,
Ու կը նետե արտասվաթոր բուռ մը վարդ
Սայլին վըրա՝ որ կանցնի:

ՀԱՅՀՈՅԱՆՔ

Լերան վրա, լուսնին տակ,
Հալածվածները նախճիրեն կու լային.
Պառավ միանկարծ ասոնց մեջտեղ կանգնեցավ,
Ու մեկ ձեռքով հենացուպին կըռթընած՝
Մյուսը՝ ջըղոտ բռունցքով ցըցեց դեպ երկինք.
Հետո ասանկ ըսկըսավ.
– Աստվա՛ծ, Աստվա՛ծ Լուսավորչի, Ներսեսի,
Աստված Նենգո՛ղ, Աստված արյա՛ մբ մարմնաբույծ՝
Ինչպես Պյութոն մանապատին մեջ պառկած...
Այսօր ահա կընդվզիմ
Ութսունամյա հավատքիս մեջ ջերմեռանդ,
Եվ մայրությունս ու հայրությունս՝ որոնց հար
Մրտիս մեջ թո՛ւյն ջամբեցիր,
Իբրև երկու խայթ խըղճի
Կայծակնահյուս կողերուդ մեջ կը մըխեմ.
Դու որ մատղաշ տարիքիս
Հարսանեկան քոդս արյունով ներկեցիր,

Եվ թույլ տըվիր՝ որ թներուս վրա ջարդեն
 Լուրթ քողեքներըս բընիկ հողով թըրծըված,
 Դու որ այս ծեր տարիքիս մեջ տակավին
 Երիկամունքըս լոկ քաղցով լեցուցիր
 Եվ սըրբագան ցուպը մեկնող հասակիս
 Թաթախեցիր արյան մեջ,
 Դու որ Որդվույդ Խաչն ողբալեն բըլշակնած
 Իմ աչքերս այս սահմանեցիր դեռ լալու
 Մորթըված յոթը գավակ,
 Դու՝ գերդ Վիշապ երկնածին
 Երկու թաթերդ երկու ամպի վրա դըրած,
 Ծըռե՛ և տե՛ս. Ողորմությանդ սըտությունն
 Հոն վարը, տե՛ս. գյուղե՛ր, գյուղե՛ր և գյուղե՛ր
 Կը հըրդեհվին, և բոցն իրենց կը հասնի
 Արարատեն բարձրը և բա՛րձրը քեզմե.
 Ահավասիկ դաշտերուն մեջ խանձոտած
 Հազարավոր խոցվածներ
 Իրենց ջարդված կողերն ընդքաշ կը տանին.
 Մեր ոսկըրները կրակին մեջ ճերմըկցած
 Կը պատրաստեն այլուրն ահա նշխարքիդ,
 Եվ մեր արյունն հորդաբուխ
 Կու գա մինչև քու ըսկիհներդ լեցնել.
 Ճամբաներուն վըրայե
 Կը լըսվի ճըռի՛նչը թըշնամի սայլերուն՝
 Որոնց մեջ մեղրն ու կաթը մեր կը կըրեն,
 Արյունը մեր արեգակին, կյանքին հողին
 Եվ արծաթները Մեղանիդ նըվիրված:
 Վար նայե, հո՛ն. մեր թոնիրները բոլոր
 Իրենց զըվարթ բոցին վըրա կը փըլչին,
 Եվ կը մարի ծուխն հայրենի ծըխանին,
 Եվ կը լըռե մըշակներուն երգն հանդարտ.
 Ամեն հասկ իր քիստերեն վար կը կաթե
 Արյուն, ամեն աղբյուր անցած ճամբուն վրա
 Կը լըվա վերք մ՛ու ամեն
 Հովազ դիակ մը դեպ որջն իր կը քաշե.
 Իսկ կիներն հոս իրենց ծունկին վրա կու լան
 Երիտասարդ գըլուխներ.
 Եվ մանուկներն ահաբեկ,
 Երեխաներն անոթի
 Չը գըտնելով մոր ծիծերուն մեջը կաթ՝
 Ջերդ նըշենվո ծաղկած ճյուղերը կիսաբեկ՝
 Կը մեռնին չոր ըստինքներե վար կախված:
 Աստվա՛ ծ, Աստվա՛ ծ Լուսավորչի, Ներսեսի,
 Ուրեմն ա՛յս էր, փոխարենն ա՛յս էր միթե
 Մեր աղոթքին, մեղրամովին, կընդրուկին...
 Արդ ունկընդրե՛. Բնության հազար փապերեն,

Մեղաններեն գոհերու
 Զինչ աստղերեն կամ սրբոտերեն մանկական՝
 Ուր քեզ դողով կը պահեն՝
 Ինձ ունկնդրե՛. Հանո՛ւն այն
 Ժողովուրդին՝ որ քեզ սիրեց և առանց
 Քու օգնությանդ խաչվեցավ,
 Հանո՛ւն անոր՝ որ ողջակեզ ըրավ քեզ
 Ոչխարներեն ամենեն կույսն, ամենեն
 Լըծընկեցն իր ցուլերուն,
 Եվ իր գինին խըմորած
 Սափորներու մեջ պորփյուր
 Քու արյունիդ սահմանեց.
 Հանուն անոր՝ որուն սըրտին վրա, դարեր,
 Իբր աղամանդ կըռվանի
 Կայծակնացուլ ոտքըդ դըրիք, ուզեցիր
 Որ կըրունկիդ տակ փըշրելով
 Եղջուրներն իր դիմամարտ՝
 Սըրբարանիդ մարմարներուն վրա միայն
 Հույսին ձեթերը վառե.
 Եվ հետո ա՛լ իր պաշտումեն՝ կըշտապինդ՝
 Զայն, իբր Հիսուս մ'ամպերու մեջ թողլըքած,
 Է՛լի լամա... ըրիք քացախն իր՝ թունոտ,
 Կողին նիզակն՝ հաստաբուն,
 Հանուն այդ հեզ Ժողովուրդի՛ն կ'ըսեմ ես
 Սա մըթընշաղ ժամուն մեջ ո՛ւր որ ըլլաս,
 Ո՛ր աստղին մեջ և կամ ո՛ր
 Թուխ ամպին վրա շանթ ի բռին,
 Իմ կըռուփս ըզքեզ կը գրտնե
 Եվ բերանս իմ կ'հայհոյե՛...»:
 – Ըսավ: – Իր շուրջը տըղաներն ահաբեկ՝
 Գլուխնին ծածկած թներուն տակ իրենց մոր
 Ըսկըսան լալ, և կիներն ալ ադոթել.
 Իսկ գազանները հեռավոր լեռներեն՝
 Արարչին սուրբ Անվան համար վրեժխընդիր՝
 Լուսինն ի վեր եկա՛ր երկա՛ր ոռնացին...
 Չը լըսեց ան, կամ չուզեց
 Ոչինչ լըսել: Մոտենալով դիվահար
 Լայն անդունդի մ'առլեփին,
 Մըրթմըրթալով, հուսահատ,
 Ինքզինքը վար արձակեց...

ԿԻԼԻԿՅԱՆ ՄՈՒԽԻՐՆԵՐՈՒՆ

Օտարակա՛ն, բարձրանանք սա դիմացի լերան վրա՝
 Որուն քովեն կը հոսի եղեգներուն մեջ լալով
 Միհոնն՝ ուր վաղը կարմիր քըղամիդներ պիտ' լըվան

Մայրերը մեր ցավագին: Օտարակա՛ն, ըշտապե,
 Զի մերկ ոտքերըս կ'այրին մոխիրներուն վըրա տաք
 Եվ ըսկըսավ քու երկար պարեգոտիդ քըղանցքն ալ
 Ճապաղիքի մեջ թըրջիլ: Օտարակա՛ն, ըշտապե՛...
 Կիսայրյաց ցուպըս խոսքիս ուղղությամբ ցո՛ւյց կու տա քեզ՝
 Ահա քաղաքն ու գյուղերն ու արոտներն ու ափերն՝
 Ուրկե անցավ Կրակի Ցեղն Ատտիդասի ձիուն վրա:
 Ծուխերն են հոն և բոցե՛րն՝ որ տակավին բլուրեն վեր
 Հովին շունչով ալեծուփ կը սողոսկին, կ'ամփոփվին,
 Հետո նորեն լեզվի պես կատարն ի վեր կ'երկըննան:
 Կը վառի հողն իսկ, նայե՛, բորբ հորիզոնը մեր շուրջ
 Հըրափողփող պըսակ մ'է՝ որուն կեդրոնը կանգուն
 Մենք կը դողանք սըգավոր ոգիներու պես օտար:
 Կը լըսե՛ս ձայնն հեռավոր եղեգներուն բըռնըկած՝
 Որոնց միջև կ'ածխանան հավերժհարսերն անտառին:
 Նարընջենի ճյուղերու ի՛նչ խընկաբույր ճարճատյուն,
 Ի՛նչ մոխրացող այգեստան, տատրակի ի՛նչ վուվուներ:
 Բոցը կ'անցնի, ու քամին գալով անոր ետևեն
 Խանձած սեզերը առած սարերեն վեր կը մրըրկե.
 Ո՛վ դողահար մերկություն խըլուրդներու խուղերուն՝
 Որոնք նըման ոգնիի արտերուն մեջ կ'հայտնըվին,
 Ո՛վ ավերակը բլրան վըրա շինված հյուղերուն՝
 Ուրկե կ'ելլեր հայ գեղջուկն առավոտյան աղոթքով
 Արարչությունը հողին արթընցնելու բահին տակ:
 Օտարակա՛ն, կը տեսնե՛ս ինչպես այսօր տնակներն այդ
 Փըլա՛ծ ու լո՛ւռ կը սպասեն սուգի առջի գիշերին՝
 Որ լուսնին տակ արտասավեն աճյունն իրենց թանալով:
 Տանիքն անոնց փըլցուցին ներսը վառվող ճրագին վրա.
 Դըռներն հլու, գոր գեփյուռն իսկ իր շունչով կը բանար,
 Ինկան ջախջախ խուժանին բիբերուն տակ արյունոտ:
 Եվ արդ պատերը ժոռատ ծընոտի պես կը ցըցվին,
 Որոնց մեջեն խույս կու տան հոգիներ բույլ բույլ երկինք:
 Արտերուն վրա մոխրակո՛ւյտ, իսկ դիակնե՛ր ճամբուն վրա,
 Այն ճամբուն վրա ըսպիտակ՝ ուրկե ժիր ցեղն Արամյան
 Արևմուտքի աստվածներն, հարաճուն միտքն Եվրոպին
 Ջորիներուն բեռցուցած տարավ բաժնել Ասիո:
 Աղբյուրներուն քով գոհե՛ր, ակոսներուն մեջ գոհե՛ր.
 Եվ հոն, դիմա՛ցն, ուր ահա արևը մայր կը մըտնե,
 Մեպ ժայռին դեմ խաչեր են յոթը այրեր մերկանդամ.
 Արյունն իրենց մազերեն (օտարակա՛ն, կ'աղաչեմ,
 Փակե՛ աչքերդ ու միայն եղիր ձայնիս ունկընդիր),
 Արյունն իրենց ձեռքերեն և ոտքերեն բևեռված
 Հողին վըրա կը վազե վիմուտներն այն ներկելով.
 Կարծես մեկնող արեգակն հուշիկ հուշիկ կ'ընկըղմի
 Մեծ աչքերուն մեջ իրենց՝ սարսափեն բաց մընացած:
 Դահճապետեն հեռացեր են խավարին մեջ արդեն,

Խաղաղություն, Օվսաննա՛ քարձուքներուն վրա կարմիր...
 Ո՛հ, ծընոտներս ի՛նչ սարսուռ կը կափկափե. դարձիր ա՛ջ,
 Եվ տես քաղաքն՝ որ նըստած դաշտերուն սա սուգին մեջ՝
 Դեռ իր սըրտեն կը մըխա մարդագոհի հնոցի նման:
 Ազատության արշալույսն անոր ճակատը կըճյա
 Հազիվ էր դեռ բոսորած՝ երբոր իր հաղթ հիմերուն
 Ներքն վիշապի Համիտյան սասանեց տուտն ու թիկունք.
 Բարբարոսներն այն ատեն արևուն դեմ թըքնելով՝
 Մահվան սերմերը բըռնած մեծախնձիղ արթնցան.
 Եվ քաղաքին մեկ կեսն ալ կործանեց կեսը մյուս:
 Յաթաղանին, բըրոցին, եղեռնավոր բոցին տակ,
 Ինչ որ հանձարն էր կանգներ, զայն մոխրակույտը կըլլեց:
 Արդ տաճարները ո՞ւր են՝ որոնց բուրյան գըմբեթին
 Ներքն ծիծառն հազիվ հազ գարնան աղոթքն էր ըրեր.
 Ո՞ւր վարժոցներն ու պալատն ապագայի լույսերուն.
 Մանուկներու ողջակեզ սըրտեր հոն խունկ կը մըխան:
 Ո՞ւր բաղնիքները հըստակ, ջինջ մարմարներն որոնց մեջ
 Ցոլացին կույս աղջիկներն իրենց լոգցած ժամերուն.
 Ո՞ւր շիրիմներն հոյակապ, ո՞ւր կոթողներն հինավուրց
 Որոնց վըրա Հեթումներն հաղթանակներ գըրեցին...
 Մա՛հ և մոխի՛ր. Թըխայրյաց պատեր միայն ավասիկ
 Իրիկվան մեջ կը ցըցվին բվիճակներ կանչելով:
 Օտարակա՛ն, հիմակ այս Երկրին անցյալն արթընցուր
 Հուշերուդ մեջ, և ուրիշ Ցեղի մը դարը ավսոսա,
 Խորիե թե օր մ՛ըստորոտը Տավրոսի բնակեցավ
 Ժիր ժողովուրդ մ՛որ կյանքին աստվածացումը երգեց:
 Իր կարավա՛նը անցավ, և Տարսնի գոհարներն
 Աստղերու պես թափեցան բամբիշներուն գոգին մեջ.
 Եվ այն ճամբան լեռնդմեջ՝ ուրկե Գանգես արշավեց
 Երիտասարդ Մակեդոնն իր շավդին վրա կանգնելով
 Բագիններ՝ ուր պաշտվեցավ գեղեցիկ Միտքը Հելլեն
 Աթենասի արձանին լուսակառույց ձևին տակ,
 Այդ ջինջ ճամբան Ռուբինյան գավակներուն շինարար
 Տեսավ սայլեր ճըռընչող Արևելքեն Արևմուտք,
 Որոնց վրա բեռցուցած էր Հայ վաստակն աննըվաճ
 Մարմարն հուրթի լեռներուն, այգիներուն հորդ գինին.
 Ո՛վ նախասնունդը երգող և քանդակող ազգերուն:
 Անցա՛վ հիմա բոլոր այդ գեղեցկությունը կյանքին.
 Կըրակի Ցեղը, ավա՛ դ, ժամանակեն ավելի՛
 Եղավ քանդող, ժանտախտեն ևս ավելի կոտորիչ,
 Ան կը սիրե տերվիշի պես միշտ նըստիլ գոհունակ
 Քարի մը վրա փլատակի և կըրծել ոսկրն իր շոպած:
 Լըսե՛, քաղքին պատվարին մեջե ձայներ մեզ կու գան.
 Դահիճ Ցեղն ալ կը տոնե իր հաղթանակն արյունառուշտ:
 Կիներ, տղաներ մորթելու հաղթանակն իր վատոգի:
 Հեզ ոստանին, որուն վրա լուսինն ահա կ՛արտասվե,

Մեկ մասն է արդ գերեզման, հանդիսավայր մասը մյուս.
 Տաճիկն ահա բրդնկցուց իր խարույկներն հրրճվանքի,
 Հեծեճագին կրմախներ հանդիսաբար կը վառին.
 Շուրջը սոթոված թներով խուժանն ուրախ պար կու գա.
 Արյունագարդ քրդդուհին հինայագեղ մատներով
 Կը զարնե դափ, և Իսլամն, օտարակա՛ն, առջի հեղ
 Այսօր գինի կը խըմե մոխիրներուն ի պատիվ:
 Կիսայրյացները անդին խավարին մեջ կը հեծե՛ն.
 Բայց վիրավոր մ'ավասիկ կը կոթողվի մութին մեջ,
 Հետո ծունկի վրա ընդքարշ կը մոտենա խուժանին,
 Եվ հեզնորեն, քրքջալիր արյունտողիք կը թըքնե
 Խարույկին մեջ տոնական: Կ'անցնին հովերն ողբագին
 Դիակներուն վըրայեն և վըրայեն փլատակին,
 Եվ արյունի սերմերով, մոծիրներով հրդեհի
 Կ'երթան հեռու աշխարհներ գարուն մ'ուրախ ծաղկեցնել:
 Օտարակա՛ն, հովերն այդ ահա ծովուն վրա լուսեղ
 Առագաստները նավուդ գոգացուցին փըքուռույց,
 Ա՛լ մեկնե սա դառն Երկրեն դեպի խաղաղ ափունքներդ,
 Զի տատրակները մեռա՛ն, և դեղձենին խամրեցա՛ վ:
 Երբ նավդ անհուն սարսափով պատռե ջուրեն ու փախչի՝
 Հետապընդված միշտ կայտոուն դըլփիններեն՝ որոնք մեր
 Ծովախորշերն արգավանդ եկան փընտռել դիակներ,
 Երբ թիկնոցիդ մեջ ծածկած դեռ նայվածքներդ ահաբեկ
 Գիրկը հասնիս ոսկիի եղբայրներուդ,– որ չըմոռնա՛ս
 Անոնց ըսել թե ինչպես Կիլիկիան մորթեցին
 Ազատության դափներուն նըվագին մեջ դավաճան.
 Գիտեմ թե այդ եղբայրներդ մեծագոգ նավերով
 Գալ պիտ' ուզեն... օգնությա՛ն... ո՛հ, ո՛չ... մահվան մնացորդին.
 Պիտ' ուզեն գալ լոկ մեր կույս, ատոք լեռները պեղել,
 Եվ մեր ծոցվոր հանքերեն կըթել մետաղն հրաշափառ,
 Կըթել մետա՛ղն ու իրենց եսին կուռքերը կերտել...
 Օտարակա՛ն, ա՛լ մեկնե: Կ'իջնեմ ես ալ ավասիկ
 Այս բարձունքեն, ու փաթթված տառատոկիս մեջ տըրտում՝
 Նորեն կ'երթամ թափառիլ քաղաքին մեջ զոհերուն:
 Մեռելներն հարկ է թաղեմ, և ողջակեզն օճանեմ:
 Վիրավորի մը զըլուխ որձաքարին կը հեծե՛...
 Աղբյուրին քով քույր մը, ո՛հ, կ'ոգեվարի անտերունջ...
 Պետք է փորեմ այս գիշեր գերեզմաններ անհամար,
 Եվ լուսեղեն պատանքներ հենում մինչև առավոտ.
 Պետք է կերտեմ շիրիմներ, հուշարձանները կանգնեմ,
 Եվ մարմարին վրա երգերս տապանագիր քանդակեմ:

ԿՐԿԵՄԻՆ ՄԵՋ

ՎԵՐԱՇՆՈՒԹՅՈՒՆ

Ա՛յսպէս երգեց Վերածնունդին՝ երբ բացավ
 Թներն ուղիղ դեպ երկինք,
 Երբ մատներն իր մըխըրճեցան մեղմորեն
 Կապույտին մեջ լուսածոր.
 – «Կ՛ելլէ՛ մ, կ՛ելլեմ. նախճիրներու ծընունդ եմ.
 Կըրակին չափ գերահըգոր, գերբնական
 Ինչպէս մարդուն գիտակցությունն. Ու կ՛ելլէ՛ մ:
 Վայրկյան մ՛ալ դեռ և ահա
 Վարդի թերթե ծընած ոգվո մ՛հանգունակ
 Ա՛լ կ՛ազատեմ ոտքերս արյան քողերեն:
 Զիս հըղացող արգանդեն
 Եվ այն ծոցեն որ խուճապներս օրորեց
 Մեծցած կուսան՝ կը հառնեմ
 Վե՛ր, դեպի վե՛ր, լըվալու,
 Գլուխս աստղերու ալիքներուն մեջ հրաբորբ:
 Ոտքրես ա՛լ վար կը թոթովեմ մըզանքներս
 Եվ խանձարուրս և պորտընկերս և մըթարս
 Եվ ամպերն կը դիտեմ
 Զիս իբր աղիք պատող փողերն հրացանին,
 Ծո՛վն արյունի դիակներով խարակված՝
 Որ բուսատպսակ մարմար ճակատս ողորկեց
 Եվ օծանեց մայրորեն
 Մազերըս լի՛ մըրրիկներու համբույրով.
 Կը դիտեմ մեծ հոգիներն հայ Հանճարին,
 Որոնք իրենց գանկին թասով ըղեղնին
 Զամբեցին իմ շըրթունքներուս մանկական.
 Կը դիտեմ գոռ պայթած ռումբերն հրակոկոն,
 Այդ կըճեպներն իմ սըրտիս
 Որոնց բոցերն արյունս հուռթի կ՛ընեին.
 Կը դիտեմ վարն նաև մեռած եղբայրներ
 Նույն արգանդի մեջ սընած,
 Որոնց, ինծի հավասար,
 Մեր Մայրը կյանք չըտըվավ,
 Չը կամեցավ իր սիրտը լայն և աստղերն՝
 Իրմե գանոնք մոլեբար դուրս վիժելով.
 Գուցե մեր Մայրն այդ լավ գիտնար՝ թե անոնց
 Սև սաղմին մեջ կը լայննան
 Եղբայրակուլ անդունդներ,
 Եվ թագչած իր աղիքներուն խորքին մեջ
 Վաղվան համար նենգաբար
 Կը դարանին սըղոսկումին մատնըչի:
 Մե՛ծ պիտ՝ ըլլամ, հավերժական պիտ՝ ըլլամ.
 Զիս տաքցընողն, ո՛վ Ազգեր,
 Զեզ տաքցընող ճաճանչի նույն թափը չէ՞.
 Մոխիրն հըսկա պապերուս

– Արևու շեջ մընացորդ –
 Օր մը նըվա՞գ միթե եղավ ահավոր,
 Կամ միթե ան՝ մատյաններու մեջ այսօր
 Դեռ չի՞ սըրսփար, չի՞ հուսար:
 Մե՛ծ պիտ՝ ըլլամ, հավերժական պիտ՝ ըլլամ.
 Զարկիս ներքև կը բաբախե գարկն հուժկու
 Մըշեցիի, Վանեցիի.
 Մարմարեղեն բագուկներուս թափն ըմբոստ
 Փայլակն աչքիս, կույս հոգվույս մռունչն անվեհեր.
 Կ՛ըսեն թե ներսըս կ՛ապրի
 Սիրտ մը մատակ առյուծի,
 Սիրտ լի պղնձե սիրով, վրեժով քինահույզ,
 Որ կը խոտե վարդերն հարսի վավաշոտ,
 Եվ հանգըստի անկողնույն մեջ տեսնա
 Մեկնաբույր շըրթունքներով Ցոփությունն
 Որ կը խեղդե համբուրելով: Կը ճանչնա՞,
 Կը ճանչնա սիրտն այդ՝ թե հըգոր է ինք միշտ,
 Ինչպես Ապրիլն՝ հըղի առոք գարունով,
 Ինչպես մըրրիկն՝ ազատությամբ հոլաթն.
 Գիտե որ մեջն հաճարե լո՛ւյս է ծորած.
 Բոց է, և է բոց ապագան. ան գիտե
 Որ հավատքով գաղափարին խարըսխված՝
 Պիտի բանա կայծակով դուռն Դրախտին»:

ԱՊՐԻԵԼ

Ո՞ր քարայրեն մութ, ո՞ր մութ խըրճիթեն
 Ելավ, չեմ գիտեր. դեմի հովիտեն
 Կը վազե կուգա: Բիբերով հըրճիգ՝
 Կարծես լի դողով մը նոր եղեռնի,
 Սև մազերն հովին, ոտքերով բոպիկ,
 Ամայի դաշտին մեջտեղ կը կանգնի:

Վերածնունդին է, լեռներո՛ւ աղջիկ,
 Մըրրկին պես գորեղ, վարդին պես գողտրիկ,
 Իր հույնով գըծված շըրթունքին աղու
 Կա համբույր մ՛հուռթի, արևու քըթթում,
 Եվ կ՛այրի հոգին տենչով մը՝ տալու
 Խոցելով՝ ծաղիկ, մահով՝ ըստեղծում:

Կը գոչե. «Հերի՛ք սառույցե կըճյա
 Գերեզմանը ձեզ արթընցե՛ք, ահա
 Բերած եմ լազվարթ երկինք, օդ ջերմին,
 Կուռ ծիծերուս մեջ ծաղկի անուններ.
 Ձյունեն դուրս, ցցուն վիզով դեպ արփին՝
 Ապրստամբությո՛ւն եմ ձեզի բերեր»:

Կ'ըսե: Իր հմայիչ գոռ ձայնեն ըսթափ՝
Աղիքներն երկրին նոր կյանքով մ'հրատապ
Կը սրկսին թընդալ. և լուռ կը սողա
Ակոսներուն մեջ շոգի մ'հուր, ծավի.
Մերկ անտառներուն, մերկ բլուրներուն վրա
Կանանչ պատմուճան մը կը ծըրագըրվի:

Հոն, կանգնած գեղջուկն հյուղի թաց շեմին՝
Ուր կը մնա ձյունեն մաս մը տակավին՝
Կ'աճոե բըժոտ աչքն երկինք նայելով,
Գոմեշներն արբշիռ տաք հողին հոտեն
Մութ գոմերեն դուրս կարկառուն վիզով՝
Աղջըկան դեմքին, գոհ, կը պոռոչեն:

Բայց Ան կը խըթե, կու տա կըռուփներ
Անոնց՝ որոնք ծույլ կը հորանջեն դեռ.
Ամպրոպի մ'հանգույն կ'անցնի անտառեն.
Եվ աչքերեն բորբ, սերմի աղբյուրներ,
Կը տեղա օդին փոշի մ'ոսկեղեն,
Հովերուն մեջ՝ երգ, սըրտերու մեջ՝ սեր:

Կոճղեզներուն մեջ և սըրտուկներուն
Կը մըղե ավշի մ'ալիք մընչուն.
Կը ճեղքե ամեն պըտուկ, բուն, դըժնիկ,
Ոստերուն ծիլ ծիլ վառելով բուծին
Եվ իր շունչին տակ, գեփյուռ անդրանիկ,
Թուփեր կը խընկեն, կը ծաղկի նըռին:

Կը լայննա կապույտն. ամպեր կաթնորակ,
Իբրև կարավան մ'ուղտերու ճերմակ
Կ'երթան տա՛ր աշխարհ, դանդաղ, լըրջահոն,
Ու երբ կը մընա երկինքն ազատ՝ Ան
Կը լեցընե բյուր ծիծեռնակներ հոն,
Օրհներգու մոգերն իր արարչության:

Հետո խոնջ, մըխած իր սև մազերուն
Վարդ մը, առջինն՝ կը դեռ վարդերուն,
Կ'երթա. Փութալով մարգին մեջե ճոխ,
Հոն վարը հանդարտ ծաղկած նըշիի
Մը լայն շուքին տակ լուռ մունջ երագող
Բանաստեղծի մ'հուր գիրկը կը հանգչի:

ՊԱՏՎԵՐ
Դերենիկ Ճիզմեճյանին

Ահա քղամիտդ ըզգեցար և ճամբորդի ցուպդ առիր.
Կը բաբախես սիրտդ արդեն հայրենիքի կարտուն:
Քանի մ'օրեն պիտի մեր հողն համբուրես սիրալիր.
Պիտ' համբուրես հարսնացող քույրդ իր անեղծ նարտուն:

Ընկե՛ր, պատվեր մը ունիմ քու հոգիիդ հանձնելու.
Հայրենակոխ ոտքերուդ սիրտ մը ունիմ.
Ճամբուդ վըրա, Ալիսի ջուրերուն մոտ այցելու,
Ուռինագարդ գյուղ մը կա. նե՛րս մըտիր. ան գյուղն է իմ:

Տըղեկ մ'ուշիմ, և բոպիկ, առաջնորդե պիտի քեզ
Տունս հայրենի՝ շինված ջինջ գով առվակի մ'եզերքին,
Որուն քիվին կը մընչեն աղավնիներ տարփակեզ,
Եվ պատերուն երկայնքին վառ կակաչներ կը ծաղկին:

Գուցե զըտնես դրան առջև մայրս ըզբաղած կըկոցին,
Եվ քովը մեր ծեր կատուն գաղջ արևին տակ պառկած,
Կամ պարտեզն հոգ կը տանի ան մեղվաշատ փեթկնոցին,
Մեղր շինելու օրինակ տալով իր սիրտն անկասկած:

Ըսե՛ կընկանն այդ դողոց, եղած արդեն մոխրագես,
Որ իր պանդուխտ գավակե՛ն կու գաս՝ գոր ան կը պաշտե,
Եվ մըտիր տունս հայրենի, լվա՛ ճակատդ արփակեզ,
Ուղևորի քու այդ հին փոշոտ թիկնոցըդ թոթվե:

Նըստե տոհմիկ սեղանին առջև շատոնց ամայի...
Սիրակաթ մայրըս քեզի պիտ' բերե թա՛ն, լավաշ հաց,
Եվ պըղպըջուն հին գինին՝ որ միշտ զըվարթ կը նայի
Կանանչ կուժեն՝ մեր հըզոր արևուն տակ թըրծըված:

Երբոր ճամբուն տաժանքեն բուժի հոգիդ հեղձուցիկ՝
Բաց տարերկրիկ հուշերուդ ծըրարն՝ որ քու ճոխ գանձն է,
Եվ նամակն այս՝ գոր կը դընեմ գոտիիդ մեջ ավասիկ,
Պանդուտ օրերս արցունքին շիթովն համրող մո՛րս հանձնե:

Հանձնե մորս իմ և ըսե՛ որ օրհնե գայն իր ձեռքով.
Զայն թող օժե իր աչքին արտոսրներովն աղոթկեր.
Եվ գըլխուն սև քող առնե, բայց սիրտն առնե թող կորով.
Զի, ընկե՛ր, այդ նամակին մեջ կարմիր Ուխտս եմ զըրեր:

ԿՌՎԻ ԵՐԹ

Երթա՛նք, երթա՛նք, Հայուհի՛,
Դու, ո՛վ արծվիկ, հեղեղատին բոմբյունով
Լերան կողին օրորերգված և մեծցած,

Երթանք արդար բախումին:
 Անդի՛ն անդի՛ն կը մորթեն
 Կյանքն արտին մեջ, և գաղափարը՝ գանկին.
 Դեռ արուն շողը սերմին չըհասած՝
 Անդի՛ն անդի՛ն կը մորթեն:
 Ո՛վ սևաչվի, ավելի բորբ սիրով քեզ
 Պիտի սիրեմ եթե մեկտեղ տըրտփեն
 Քու գամբիկդ, իմ խարըստիս:
 Կըկոցը թո՞ղ, որուն շաչող ոլորտներ
 Ներշնչեցին քեզ երգն հանդարտ սըրտերու.
 Այլ թո՞ղ երդիքն՝ որուն վրա
 Կ՛ուռճանայիր գարնան արձակ հովերեն,
 Մերթ ըլլալով սըրտաթունդ
 Վառյակի մ՛հեզ ճըվոցեն՝
 Ջոր ցինն արտին մեջ կըտցահար կը խեղդեր:
 Հիշե՛ այն լեռն՝ ուր քեզ առջի հեղ տեսա
 Նախ վարդի թուփ կարծելով,
 Մենք գիշերվան մեջ անկե վար պիտ՝ իջնենք
 Նըժույզ հեծած, զուգահետ,
 Խավարակուռ դաշտին մեջ
 Դաշույնիդ ցուրտ փայլին հետ, ո՛վ մարտկուռիս,
 Շանթերն աչքիդ ցայտած վրեժի երկընքեդ՝
 Ռազմի ճամբան պիտ՝ ցույց տան:
 Մազերդ արձակ պիտի նետես ուսերուդ՝
 Թողլով որ գոռ մըրրիկն անոնց երգե
 Բարբարոս երգը բնության:
 Եվ երբ ասա՛նկ ընթանանք,
 Երբ նըժույզիդ ամեն մեկ խրոխտ ուստումին
 Մըկանունքներըդ ցունցերեն գորեղնան,
 Երբ այն ծաղիկն՝ որ լանջքիդ վրա պիտ՝ բուրեր՝
 Մըմբակի տակ ճըմլըվի,
 Ես այն ատեն գըզվանքի տեղ փափկասուն
 Պիտի դիմեմ փոթորկատիպ, կորովի
 Եվ մեղրածոր համբույրի դ:
 Ի՛նչ, երբ տեսար գրասեղանիս միշտ առջև
 Այս իմ մըռայլ հոգիս, ով կո՛ւյս, կարծեցիր
 Թե պիտի հե՞ղ մընա միշտ.
 Ի՛նչ, կարծեցիր թե չե՞մ կըրնար ես ես ընել
 Գըրիչըս դաշույն և կաղամարըս՝ կարմիր
 Սիրտ գագան ոսոխին:
 Ես շատ, շա՛տ լավ կըրնամ Երազը փոխել,
 Մերկացնելով իր զեփյուռե ըզգեստեն՝
 Աստղեր ցընցող մըրրիկն անոր հանգընել:
 Երբոր անդին միշտ կու լան
 Զի կը մեռնին, ու կը մեռնին զի կու լան՝
 Ինձմե հեռո՛ւ թուղթ և գիրք.

Տանդեն բոցին ես կը նետեմ,
 Գերեզմաննոց կը նետեմ ես
 Դուրյանն՝ որ ա յնքան ժամանակ սիրեցի:
 Աղվո՛ր աղջիկ, ուրիշներու արցունքին
 Գիտե՛ս թե ո՞րչափ աշխարհս է անտարբեր.
 Մենք իր քունով չընիրհենք.
 Իր վերմակին տակ՝ տըռփոտ՝
 Աստղիկն անուշ կը բոզնա, ու լըլկված
 Թեմիսը հոն նոր Բագոսներ կը ծընի:
 Բըզիք, բըզիք, արյունվա,
 Հոն վարը մեզ կը սպասեն.
 Ես կապարճիս մեջ դընելու չըմոռցա
 Հրաշեկ շանթերը Արեսի երկընքին.
 Հիմա սիրո նայվածքե մ'իսկ ուժեղ եմ,
 Եվ անհողդողդ՝ ճակատագրեն ավելի՛՝
 Քանի որ կո՛ւյսն է ընկերս,
 Ու սերն հրաթն ռահվիրաս:
 Դու, ո՛վ վարդ կույս, հոն լափողբոց պիտ' ըլլաս.
 Դու, ո՛վ տատրակ, կարշնեղ արծիվ պիտ' ըլլաս.
 Քանի որ այրն է ընկերդ,
 Ու գաղափարն ռահվիրադ:
 Ես թերևս հոն պիտի մեռնիմ, իցի՛վ թե,
 Երկա՛ր ատեն բաղձացի
 Արյունն ինձի վերմակ ընել, բարձ ընել
 Կողը ձիուս՝ ընկած վերքի խըրխիհնջով:
 Մեռցընելե վերջ վերջ մեռնիլ
 Երկա՛ր ատեն բաղձացի:
 Լուսնին վրկա նայվածքին տակ, քանի մ'հեղ
 Լեցընելե վերջ ոսոխին արյունով
 Մեծ սաղավարտը Հայկին՝
 Հոգ չէ թե ա՛յսպես իյնամ.
 Երբ օր մ'հեզիս լայնախոց
 Հայրենական հողին մեջե արթընցած
 Պիտի տեսնեն որբն հագ և հագն՝ ապահով,
 Մըշակն անվախ արտին մեջ՝ արտն՝ անավեր,
 Կյանքը ազատ, ազատությունն՝ հառաջադեմ,
 Հոգ չէ թե ա՛յսպես իյնամ.
 Գիտեմ որ իմ շիրմիս քով
 Պիտի երբեք օձ չըստղա, պիտի միշտ
 Կապույտ մընա անմոռուկդ, ո՛վ Հայուհիս,
 Եվ հաղթական առյուծ մ'հոն թաթը դըրած
 Բորենիի մը կուրծքին
 Աստղերն ի վեր, լիաթոք,
 Պիտի հավետ մըռընչե՛ ...

ՀԱՅԿԱԿՆԵՐՈՒՆ ՕՐՈՐԱՆԸ

Շինված է ան նոճիով՝
Եվ արյունով ներկրված.
Կ'երգեն բուերն իրեն քով.
Կ'օրրե մըրրիկը կատողած:

Կամարեն վար կը կախվին
Կապույտ կապույտ ուլունքներ.
Արցունքներն են երկընքին՝
Ինկեր ցուրտեն հոն սառեր:

Խոնավության մեջ, մուրին,
Որով խըրճիթն է լեցուն,
Լուռ կը ճոճի օրոցքն հին,
Հին վրեժին իմ հոգվույն:

Անդունդն է մ'է ան՝ ուր հայն իր
Վիշապներն հեստ կը ծընի,
Ուր համբույրներն, վարդերն հիր
Կը բուրեն հոտն արյունի:

Ոչ մեկ գիրգ ծոց ծնողական
Հոն կը բանա իր երկինք.
Խավարներն հոն մայր կ'ըլլան,
Եվ կայծակներն ալ՝ ըստինք:

Ու ճիչերու մեջ, լացի,
Տըժգույն տրդան կը մեծնա
Բարեկամի, դիպվածի
Ձեռքերուն մեջ կը մեծնա:

Եվ գուցե վաղն ան ըլլա
Ռազմիկ մ'հրաչյա, շանթող ամպ.
- Մեզ մտուրն Հիսուս մը կու տա՝
Իսկ հայ օրոցքն՝ Ապըստամբ...

ԱՐԾԻՎՆԵՐՈՒ ԿԱՐԱՎԱՆԸ

Է կարավանն արծիվներու. կը ճախրե
Աշտանակված գաղափարի քաջերեն:
Շառաչ մը գոռ թըռիչքի
Կը ճեղքե սև ամպերն ու լայն կը բանա
Կապույտ ճամբա մը ազատ:
Ակընկառույց կը դիմեն
Նըպատակին՝ իբրև լերան մ'ադամանդ:
Վեհ հոգիներ են անոնք,

Ռազմիկի վեհ հոգիներ.
 Անոնք հազար գարուններե ավելի
 Են երգեցիկ և կարող:
 Իրենց աչքին մեջ, Արեսի՛ ասորուշան,
 Երիտասարդ կյանքը առույգ կը ժրպտի:
 Միրողնե՛ր են. և սե՛րն իրենց սովրեցուց
 Ըսպանությունն ըստեղծիչ.
 Եվ այսպես խրոխտ ու ազատ,
 Վարն ետննին թողուցած
 Աղաչավոր մայրեր, հարսեր արցունքոտ,
 Կ՛երթա՛ն, կերթա՛ն կապույտի մեջ լողալով.
 Արծիվներուն լայն թռուխչի բախյունեն
 Աստղերը շեկ կ՛արծարծին.
 Եվ անոնց դուժ կրոնիչներեն, վրհասույգ,
 Մըռայլ տարմերն ագռավներուն կը թագչին,
 Եվ ռազմիկներն արբշիռ, սարսռուն (ավելի
 Գուցե զիրենք Աստուծո մոտ ըզգալեն)
 Շարան շարան կը սուրան.
 Կ՛ըմպեն շիթ շիթ կապույտեն՝
 Իբր ան ըլլար բանաստեղծի մը հոգին.
 Ամպերեն դուրս կը փետեն
 Կայծակներն հուր և անոնցմով կը պսակեն
 Ճաճանչավուխտ ճակատնին.
 Իրենց արյան մեջ կը խառնեն մըրրիկներ.
 Կ՛ըլլան բնության և վրիժագոռ աղոթքով
 - Ըմբոստներու շարական-
 Աստված իրենց գանկերուն մեջ կը բանտեն,
 Հառա՛ ք, հառա՛ ք:- Բայց կար՛վանն ա՛լ կը կենա
 Սա ժայռերուն կարմիր, սա սև ժայռերուն:
 Կ՛ելլե գաղջ հոտ մ՛արյունի՛՝
 Ծոթրիններու բուրումներեն՝ հաղթական.
 Կը բարձրանա հովիտներեն խեղդուկ լաց
 Մ՛որուն մեջ լա՛վ կը զգացվի
 Մարդու հոգին կապտըված նույնիսկ, ավա՛ղ,
 Արտասվելու մեծ բարիքեն կենակից:
 Հոն կար՛վանն ալ կը կենա:
 Եվ արծիվները ճերմակ
 Բաբախելով թևերնին՝
 Կըտուցներով ժայռերը կուռ կը ծեծեն,
 Եվ ռազմիկներն, ընձառյուծներ դարանած,
 Ըսպասելով ահեղահունչ վայրկյանին
 Լերան կողին կը մուլեզնին, կը սպառնան,
 Մինչդեռ անդին զիշերվան մեջ, կասկածոտ,
 Լուսնին Մահիկը ցըրտադող սարսափով
 Տավրոսին վրա կը դեղնի :

ՀԱՅՐԵՆԻ ԼԵՌՆԵՐ

Լեռնե՛ր, լեռնե՛ր հայրենի, անմահական դրշխոներ՝
Որոնց արփին կը դնե թագ և մըշուշն ալ պատմուճան.
Լեռներ սառե ծոցերով, գըլուխներով ձյունահեր՝
Ձոր կ'օծանե լուսնկան:

Ձեր ճակատները կույս են լոկ Աստուծմե համբուրված,
Թըխակարկատ ուսերնիդ կը լվա կապույտն երկընքին.
Վիհերու մեջ ուր լիճեր կը քնանան մենակյաց,
Աստղերը սոսկ կը ծաղկին:

Քարայրներեն՝ որոնց մեջ հովը գայլի պես կ'ոռնա՝
Գետեր բըխած գարնան դեմ կը գահվիժին փըրփրահեր,
Եվ կ'երթան ձեր ոտքերուն սըփռել գորգեր միշտ ծաղկյա՝
Ուր կը նըստին հովիվներ:

Կը սողա շանթն օձի պես ձեր գըլխուն շուրջ կրանիտե,
Որմե բորնկած կը մըխան եղնիններ օրերով.
Արծիվն այդտեղ աստղերեն միայն իր կուտը կ'ուտե,
Կը խըմե ջուրն ամպեն գով:

Օրհնյա՛լ ըլլաք, ո՛վ լեռներ, օրորոցներ աղամանդ,
Ուր մեր պապերն առջի հեղ իրենց աչքերը բացին,
Եվ վագրի մորթ մ'ուսերնուն իջան դաշտերն արգավանդ,
Կըրթեցին եզը՝ լուծին:

Փայլակնաբիբ ամպրոպին մեջե (երկնի գոռ գագան)
Մեր արքաներն որսալու ելան փախչող սատրապներ.
Իրենց ձիուն խըրխինջեն՝ անդունդներուն մեջ սուգան
Ժայռին մրափող վիշապներ:

Օրհնյա՛լ ըլլաք դո՛ւք՝ որ սովիք գըրկերը ձեր շաղածին
Անակորդվույն, Տըրդատին պատըսպարան և անդույր,
Որոնք քաշված այրերու մեջ՝ լուսնին տակ կարդացին
Ժամագըրքեր խընկաբույր:

Դո՛ւք որ տեսաք փապարի մեջ կույսերու ոսկըրներ՝
Ձոր հետո լույս մ'երկնային փոխակերպեց շուշանի,
Դո՛ւք որոնց մեջ ճըգնագգեստ քուրձերով են վախճաներ
Արքաներ նման տիտանի:

Արծաթն, ոսկի՛ն կ'եռան ձեր արգանդներուն մեջ հրագանձ,
Որոնցմով հայ տիկիներն իրենց գարդեր շինեցին,
Հայրապետներն ըսկիհներ, և ասպետներն հերապանձ
Նետերն իրենց մահածին:

Ձեր մայրենի ծոցին մեջ կաթը մարմարն է առատ՝
Ջոր կըթեցին մեր հայրերն օր մը ձեռքով ժըրաջան,
Ու կերտեցին աստվածներն ու բազիններն անարատ,
Ուր տատրակներ մորթվեցան:

Կառույց Երվանդ իր քաղաքն ու Երվագն ալ իր մեհյանն.
Հըսկա սյուներ խոյազլուխ Մասիսի պես շողացին,
Ու ձեր մարմարն արփացոլ հագավ ձևերը տիտան
Մեր պապերուն հանճարին:

Արշակ կապեց կամուրջներ Եփրատին վրա դիվաձայն՝
Որոնք այդ խեռ դիցուհիվոյն ճապուկ մեջքը պարուրող
Եղան գոտի ալեւանձ՝ որոնցմէ վար կախվեցան
Մորմենիներ աղամող:

Քանդակվեցան ձեր կուճով դամբարաններն Անիի
Եվ սափորները լեցուն Արշակունի աճյունով՝
Որոնց մեջէ ծըլեցավ իբրև ընձյուղ կաղնիի
Բագրատունին մարտախռով:

Լեռնէ՛ր, լեռնէ՛ր, սև՛ լեռներ, այլևս ավա՛դ թափուր եք
Շողապըսակ փառքերեն, հերոսներեն հինօրյա.
Դիտսի տեղ ամպ մ'այսօր՝ զերդ քողն այրի կընոջ մ'հեզ՝
Կը նըստի ձեր գըլխուն վրա:

Թող ձե՛զ դառնա նոր Մերունդն, ըլլա դրացի արևուն.
Իրեն դրոյակ թող ընէ իր հայրերուն օրորանն.
Արծվի թևերն իր վըրա՛, իր վրա՛ երկինքը անհուն.
Թող շանթերո՛վ զինվի ան:

Փըրկությունն ա՛լ ձեր մեջ է, ձեր փապերուն մեջ մըթին,
Մեպերուն վրա՛ է՝ ուր այժն ելած վիհին կը նայի
Հող ջըրվեժներն՝ որոնց քով վարդենիներ կը ծաղկին՝
Կու տան հրավեր պայքարի:

Թող ձե՛զ դառնա նոր Մերունդն, աստղահամարզ ըլլա գորք,
Թըշնամվոյն դեմ բերդ եք դուք, դյուցազներու՝ ապարանք.
Լոկ քաջերո՛ւն համար ձեր ժայտերը լալ, ջրողորկ,
Կ'ըլլան գահեր ոսկեզանգ:

Եվ թող տրոփեն վեհորեն լոկ քաջերո՛ւն ոտքին տակ
Հըրաբուխներն ըսքողված, ձեր սըրտերն այդ ծըմբաեռ.
Եվ վաղը թող շինվին ձեր մարմարներեն ըսպիտակ
Հերոսներու արձաններ:

ԱՌԵՎԱՆԳԻԶԸ

Լերկակարկառ և ամայի լերան վրա
Ինչպես արծիվը՝ օձին,
Հանդիպեցա ես անոր
Եվ, ճապոռոեն, ձեռքով ուսն իր պըրկեցի.
Գըլխուս վերև նախանձեն
Անգղը երեք հեղ թներն իր բաբախեց:
Մինչդեռ պատվեն գորացած
Բազուկիս տակ լիրբ թըշնամիս դեռ հոխորտ
Կը գալարվեր՝ ես բարկասաստ մոռնչեցի.
– «Գանկդ իբրև գուշ կը ջարդեմ.
Ե՛տ. ե՛տ դարձուր հափափած կույսըդ աչեդ»:
– «Այտերն առած՝ ծընտոր քեզ կը բերեմ»:
Ընդվըզեցավ: Ըզգացի
Որ ճակատես վեր խուժեցին բարկության
Վառ երակներս ինչպես հալած կայծակներ,
Եվ բարկասաստ մոռնչեցի.
– «Ամեն մեկ ո՛սկրըդ գատ շան կը նետեմ.
Ե՛տ. ե՛տ դարձուր հափափած կույսըդ աչեդ
Զոր սիրտս արբշիռ կը ցանկա»:
– «Տո՛ւր, դաշույնս իմ սիրտըդ իրեն կը տանի»:
Ընդվըզեցավ: Մոլեցա:
Եվ հակընդդեմ իբրև երկու կայծակներ
Մեր դաշույններն ընդհարեցան բոցաթափ.
Մաքառեցանք. Սուրբ է սո՛ւրբ
Մաքառումն այն՝ ուրկե ժայթքած արյունն հիր
Արդարության ոտքերն զղվոր կը լըվա:
Մեր կըրունկներուն տակ թընդաց
Լեռն իր բոլոր ընդերքներուն խորերեն.
Մաքառեցանք. ձորե ժայռ,
Ժայռերե ձոր ելևէջներ գործեցինք:
Մեր սըրտերուն խորը ամպրոպն էր նըստած
Եվ բռունցքներուն վըրա՝ շանթ:
Դեմքն իր արյամբ ներկեցի՝
Հեղելով դուրս կարմրությունն իր ցըռուկին՝
Ուր, ո՛վ Սատան, գուցե հարվածս ըսպաննեց
Համբույր մ՛երկա՛ր լըկումներով ըստացված:
Զայն մըղեցի, մըղեցի,
Ըսպասելով կեր ընել
Տարտարոսի մ՛ավելի խոր: Գըլխուս վրա,
Արեգակին շողերուն մեջ քողարկված
Հոգին կույսի մ՛անձանոթ
Ուժերուս ուժ կը բարդեր,
Երակներուս մեջ կը ծորեր, շիթ առ շիթ,
Քըրտինքս արյան վերածած:

Զայն մըղեցի, մըղեցի զայն: Ձեռքերեն՝
 Բուռն հարվածի մը տակ, իբրև ընդոստ իժ,
 Վիհ մը դաշույնն իր կըլլեց:
 – «Ա՛յ, քեզ անե՛ծք...» – մըրմըռաց.
 Եվ մեկ զարկիս տակ կարշնեղ
 Սահմըռոկելով ինչպես կըրոնք մը խարդախ
 Մութ արնունդի մ'արգանդին մեջ, ա՛յ անդարձ,
 Թավալզլոր, արյունոտ, խոր, վիժեցա վ...
 Հոն վարը. Ես լըսեցի.
 Զիս օրհնեցին. Ես լըսեցի. վա՛րը հոն:
 Հայուհիներ հափափված՝
 Որոնց համար գեղեցկությունը եղավ
 Մագնիսը պիղծ ոճիրին,
 Քըրքում կույսեր, վարդ կույսեր՝
 Որոնք բըռնի տըռփանքներու ենթարկված
 Տեսան որ ծոցն իրենց փեթակը դարձավ
 Պիծակներու թունալից,
 Շուշանագգեստ նոր հարսեր՝
 Որոնց ճերմակ քողերն եղան պատանքներ
 Կուսածըպիտ երագներու. և կիներ,
 Տժգույն աստղեր ճահճի մեջ ցոլացած,
 Կիներ գերված, կիներ խեղճ,
 Թագըստոցի, քարայներու ներքենն,
 Հավատարմության հավտարիմ,
 Անձնասպանի երագներով՝ դակահար,
 Եվ, ո՛վ Սարսափ, պըղծըված՝
 Մեր պապերուն նըշխարքներուն վրա քինոտ,
 Շըղթայված էզ առյուծներ,
 Խոժոռ, ահեղ, մոռնչելով զի՛ս օրհնեցին...

ՎԱՀՄԱԳՆ

Ո՛վ Աստվածն իմ հայրերուս,
 Կը մոտենամ ահա բագնիդ, և ինձ հետ
 Իր պախուրցեն քաշելով
 Կը բերեմ ցուլ մ'հովիտներեն Տարոնի:
 Տե՛ս պարարտ է զոհս իմին.
 Երբուծին մեջ կաթնաթույր
 Հողին ամբողջ կյանքը կա.
 Պարանոցն իր մըսուրն ի՛նչ է չի՛ գիտեր.
 Ան սընած է արոտներուն մեջ ազատ,
 Ու ակռաներն իր լըվացված են միայն
 Հացյաց Դրախտի աղբյուրին մեջ նվիրական:
 Երբ կը հևա՝ իր հըզոր շունչն առջևեղ
 Կը վանե հողն ու ավագները գետնեն,

Եվ կու գա սև ռունգերեն հոտը ամբողջ
 Դաշտային թաց կանանչին:
 Տե՛ս, գոհս իմին գեղեցիկ է և վսեմ.
 Գըլխուն վըրա կոր եղջյուրները խարսյաջ
 Փառքի պսակն իր կ'ըլլան.
 Կը բորբոքին աչքերուն մեջ ամեհի
 Հըզորության սև խունկեր.
 Եվ թավամագ իր ազին
 Իբրև լորտու կողերուն շուրջը հարասող
 Գոռեխներեն, բոռերեն.
 Մարմինն անբի՛ծ, մարմինը սո՛ւրբ կը պահե:
 Ո՛վ դու Վահագն, աստվածահա՛յր գորության,
 Ո՛վ Տիգրանի սերմին մեջ
 Դու մարդացած Արեգակ,
 Լըվա հոգիս, ճառագայթով մը օծե
 Շըրթունքներս այս, զի ավասիկ կ'համբուրեմ
 Բագինդ սուրբ և առած մուրճը ահեղ՝
 Ըսպասարկու հաղթ բազուկով կը ջարդեմ
 Ցուլիս ճակատն և իր արյունն հորդավեժ
 Կը նըվիրեմ ծունկներուդ:
 ... Արդեն ահա կը մըխա
 Նըվիրական խարույկն առջևդ ճարճատուն.
 Կը շըրջի բոցն ոստերուն մեջ ձիթենվո,
 Եվ գինուն հալած խեժեն արբեցած
 Կ'ոստնու ուղիղ, և կ'երգե
 Վերափոխումն իրերուն ջինջ հոգիին:
 Ա՛ռ. Արյունոտ ասոնք կողերն են գոհիս.
 Ցըռուկն է այս, ասոնք ճարպոտ զիստերն են,
 Ահա ըղեղն՝ որ ուղղեց բնա՛զոն ու շընչեց
 Եղջյուրներուն խեռություն:
 Ահա ջերմ սիրտն՝ որ տակավին կը սըրսփա,
 Եվ իր լեղին՝ գոր ազդրին վրա կը դընեմ
 Հույսով մ'որ ան պիտ' տոչորի ամբողջ. ա՛ռ:
 Եվ բոցն որ արդ նետած պսակն իր ծուխի
 Վըճիտորեն կը բարձրանա. կը տանի
 Ցուլը ճենճեր առ ճենճեր
 Վերն, ապարանքըդ երկնային խընկելու.
 Ո՛վ դու Հըզոր, ընդունե
 Նըվերներս իմ՝ գոր մաքրափայլ սափորով
 Կըրակին վրա կը հեղում:
 Ահա գինին. Պինչերըդ բա՛ց ու շընչե
 Քաղցրաբույր հոտն, և հաշտվե՛
 Աստվածային գինովությամբ մը զըվարթ՝
 Այսօրվան քու ժող՛վուրդին հետ կրոնափոխ:
 Ահա հոման.– առջևդ գայն կը թափեմ
 Մաքո՛ւր, անո՛ւշ և առա՛տ,

Ինչպես թափեց ծառն իր կուրծքեն վիրավոր
 Իմ յոթ անգամ լրվացված
 Թակույկներուս մեջ շըքեղ,
 Ջայն ընդունե, համարե
 Ինչպես արյունն երեխայի մը՝ անմեղ,
 Ինչպես քըրտինքն հըղիներու՝ թանկագին:
 Ո՛վ վեհ, գո՞հ ես, տըվի քեզի ի՛նչ որ կար
 Խըրճիթիս մեջ և հոգիիս, քեզ տըվի
 Թըշնամին ի՛նչ որ մոռցած էր այսօրվան
 Այրիացած Հաշտիշատիդ մեջ ամա:
 Արդ մեր տոհմին իբրև վերջին Վահունի
 Բագնիդ առջև ծունկի կու գամ երկյուղած
 Կը համբուրեմ հողն ուր քու
 Հոգիեղ մաս մ'արմատ կու տա շոճերուն,
 Եվ վերցուցած քեզի՛, քեզի՛ կարկառուն
 Սա սոթտըված թներս՝ որոնց արմուկեն
 Ցուլին արյունը տակավին կը կաթի,
 Ո՛վ դու Վահագն, ո՛վ աստվածն իմ հայրերուս
 Կ'աղոթե՛մ ես... կ'աղոթե՛մ...
 Ուժի՛ն համար, կրոնքի՛ն համար բագուկիդ,
 Որով դու օր մը պատռեցիր բերաններ
 Վիշապներու, երկընքին մեջ սըփռեցիր
 Ջերդ արևու հունտեր, աստղերն Հարդգողին.
 Ո՛ւժին համար՝ որ թըռիչն է և հոգին
 Արարչության անվախճան,
 Որուն անհուն համբույրին տակ կը ծընի
 Աշխարհներեն մաս մը ծաղիկ, մաս մը բոց,
 Կ'ապրի սկըզբունքն Անմահության հուլին մեջ
 Եվ ըղեղին և կամքին,
 Որուն հըզոր մատին տակ
 Կը ճեղքըվին սերմերն, ավիշն երգելով
 Կաղնիներուն մինչև գագաթը կ'ելլե.
 Ուժի՛ն համար՝ որ կը լեցնե ստինքներ,
 Կ'օրորե մեր օրրանն, ու մեզ, մահեն վերջ,
 Մինչև աստղերը կը տանի, ու մինչև
 Երկրորդ կյանքի մ'արարչագործ պատճառին,
 Որ կը կանգնե Ազգ մ'ինչպես խումբ մ'առյուծի,
 Բագուկդ անոր բագուկին մեջ կը հեղու,
 Եվ գերդ հրեղեն վարագահավ՝ իր լուսեղ
 Թըռիչներուն ամփոփման տակ կը թըխսե
 Մեր մայրերուն ծոցին մեջ
 Դյուցագուննե՛ր, հանճարնե՛ր,
 Այդ սուրբ Ուժին համար կ'ըսեմ՝ որուն դու
 Իմացական աղբերակն ես հորդահոս,
 Ո՛վ դու Վահագն, ահա քեզի կարկառած
 Բագուկներս իմ արյունոտ

Կ'աղոթե՛մ ես... կ'աղոթե՛մ...

ՊԱՊՍ

Ջրմերային հրապույրով ծեր մ'է շրքեղ,
Մերկացուցած են տարիները մեջտեղ
Իր գանկին
Իր լուսափայլ մազերը շուրջ կը պատեն
Անոր պըսակ մ'որ կը հասնի ճակատեն
Ծոծրակին:

Ջինջ պըսակն այդ կարծես դափնի մ'է տըժգույն
Մնած ամենե՛ն ճերմակ շողովն արևուն.
Ան չունի
Բիծերն արյան կայսերական թագի վեւ.
Մաքուր կյանքի մ'արտաբըխումն է, ինչպէս
Ձյունն երկնի:

Ճակտին վըրա խորշումներ ծալ ծալ կ'իջնեն.
Մինչև անոր թավ թավ հոնքերը գըլխեն
Կը շարվին
Շատ մ'աշխարհներ, շատ մ'աշխարհներ գանազան
Երկար կյանքի մը սյուքերուն, և որոտման,
Աշունին:

Կորաքամակ և հեքոտ ան կը քալե.
Ա՛լ չի տեսներ երկինքն. երկինքը մեջն է
Հոգվոյն տաք
Ու երկիրս ալ աչքին ներքև ըղձական.
Նըպատակն է գըլխուն վըրա, իսկ ճամբան
Ոտքին տակ:

Երբեմն իր հետ կը պըտըտինք սիրասույզ,
Եղած ես իր խոնջած մարմնույն, ինքն՝ հոգվույս
Հենացուպ.
Ու ան վըրաս ձըմեռ, գարուն ես իր տակ,
Կը հառաջենք միշտ իրարու հակառակ,
Միշտ ալ հուպ:

Երբոր իրեն այսպէս կու տամ թիկունքն իմ,
Կը զգամ թե վրաս արմատն ամբողջ կը տանիմ
Մեր ցեղին:
Կը զգամ եղած փըթթուն խեչակ մ'ուռենի՝
Որ հազիվ հազ ա՛լ կը վերցնէ հայրենի
Դրան կաղնին:

Ո՛հ, ո՛րքան ինձ քաղցր է ըլլալ միշտ իր քով,
Զինքը դիտել՝ երբ Խորհուրդին մեջ հոգվով
Կը սուզի,
Լըսել՝ երբ ուշ ատեն նըստած մեր բակին
Զըրհորին քով՝ Աստուծո հետ առանձին
Կը խոսի:

Մըտածումներըս շատ անգամ կը մագլեն
Դեպի վե՛ր իր տարիներուն աստղերեն,
Բայց չընչին
Թիթեռնիկս իմ չըհասած իր արևուն՝
Կ'ուժասպառի. թերթելեն գիրքն իր անհուն՝
Կը խոնջիմ:

Մերթ կը պատմեմ թե մըղած է ի՛նչ պայքար
Մարդուն դեմ նենգ, և այս հողին դեմ համառ,
Եվ գերդ հին
Զինվոր մ'որ պարծ՝ կը թըվե իր ըսպիներ՝
Ան ցույց կու տա իր կընճիռներն ու մազեր
Չյունային:

Ես երկյուղած կը համբուրեմ մազերն այդ՝
Որոնք այսօր իրենց ներքն անարատ
Կը սքողեն
Այլևս առանց մըրրկի օվկիան մ'ամփոփված,
Եվ շուշաններն են բարության՝ մընացած
Անցյալեն:

Եվ կը դըպչի ճակատս իմ իր ճակատին
Եվ անդամներս անգիտակից կը սարսռին,
Զի ընդդեմ
Հանդըգնորեն կ'հանեմ Խորշս իր անհունին,մ
Եվ տասնևինս ութսունին հետ միասին
Կը չափե՛մ...

ԱՌԱՔՅԱԼԸ

Ա

Պիտի մեկնի: Ուսին մախաղ մը լեցուն
Իր հոր այգվույն թըզերով.
Քեմուխտ գոտին կը պընդե մե՛ջքն առնական
Կրոնքի մը պես ջերմեռանդ.
Տրեխներն հագա՛ծ է և ձեռքին մեջ ունի
Ցուպը կըտրած թըմբենիե մը աղվոր.
Հին մարգարե մը ասա՛նկ

Պիտի Սիոն ճամբորդեր:
Պիտի մեկնի: Չի գրթար
Նըշանածի մ'որ ցորենին դեզին վրա
Ինկած կու լա մանգաղը դեռ ձեռքին մեջ.
Ոչ ալ հիվանդ մայրը փաթթված իր վրզին
Աղերսներով զինքը կըրնա ողորել:
Գաղափարն իր վրճոյի թնե՛ր է հագած.
Եվ իր հավատքն աչքերուն մեջ երկնագույն,
Աստղի մը պէս հեռավոր,
Անհունով լի և անհունի խոստումով,
Հանդարտածո՛ւփ կը ժըպտի:
Ու ան կ'երթա...
Կ'անցնի լեռներն ամպածրար
Եվ հեռվէն մըշակներուն կը թըվի
Թափառող լույս մ'անդունդներու զարթուցիչ.
Ոտքին տակ մեր հողը հին
Կը սարսըռա, կը խորխորի, կը կըլլէ
Կարծես թէ կէսն արևուն,
Եվ վերածնիչ քիրտովն կը թըրջէ
Իր շըրթունքներն՝ ուր կակաչներ կը բացվին:
Ան կը նըստի՝ գիշերով՝
Խարույկին շուրջն հովիվներու հետ բարի
Ու անոնց պարզ հոգիներուն կը բանա,
Իբրև ուրիշ խարույկներ,
Հին փառքերն այդ մեր լեռներուն սըգավոր.
Կը հուզէ այդ Երկընքի մոտ մարդերուն
Արծըվային բընագոյումներն, ու խոսքն իր
Կըտուցն անոնց կը սըրէ:
Երբ կը մեկնի՝ գոռ գամփըռները հոտին
Դարվարին վրա կը հալածեն զինքն ու սուրբ
Մաս մ'ըզգեստեն կը պատռեն:

Բ

Կալերուն մեջ, կամին վըրա մերթ նըստած
Աշխատանքներ կը մեղմէ,
Եվ մերթ շուրթն տակ որայի դեզերուն
Ան կը ժողվէ շուրջն իր տղաները ջըլեբաց,
Կիներ հեքոտ, այրեր՝ որոնց կոպերուն
Հարդի փոշին կը մատնէ դառն աշխատանք,
Ու կը խոսի. «Ո՛վ Հոգնածներ, լըսեցեք,
Ազատության արեգակին տակ միայն
Քըրտինքը ձեր կը սերմանէ ադամանդ,

Եվ մանգաղին տակ հունձքը ձեր կը փոխվի
Ճաճանչներու. օ՛ն, լըսեցէք թե ի՛նչ բան
Ակոսաբեկ խոփերուն տակ ձեր՝ կ'ըսեն
Նըշխարներն հաղթ մեր պապերուն.
Ի՛նչ Աստղի, ի՛նչ Հավատքի ձեզ կը կանչեն՝
Որուն լուսեղ սեղանին վրա վաղը դուք
Պիտի գոհող ըլլաք և գոհ նվիրական.
Եվ ձեր կամերը կայծքարով զինագարդ
Վաղը քըշէք պիտի դուք
Ոսկըրներու վրա ոսոխ...
Ո՛վ Հոգնածներ, լըսեցէք այս, լըսեցէք»:
Կ'ըսե, և զերդ խորհրդոյանիշ ըմբոստման,
Ոսկեհատիկ գարիներու կույտին վրա
Տերութենեն դըրված կնիքները տուրքի
Գավազանովն իր կ'ավրե:

Գ

Հետո դարձեա՛լ լեռներ, դարձեա՛լ դարափներ...
Ի՛նչ փույթ թե գազը ոգնիի փուշերով
Տրեխներն անոր կըցելու,
Կամ թե ճամբուն վըրա արնն հեղձուցիչ
Սարերուն տակ կը չորցընե աղբյուրներն.
Ան կը հասնի գյուղերն՝ և մուտքն իր կ'ըլլա
Անուշաբե՛ր, նըման սյուքի մ'որ կ'հեղու՝
Բաց դըռներեն շինական՝
Համեմն ու խունկը հեռավոր թուփերուն:
Եկեղեցվո գավիթին մեջ՝ ուր ամբոխն
Աղոթքեն վերջ կը ժողվի
Աստուծո մոտ խորհելու իր բախտին վրա՝
Կը տեսնըվի Ան, Առաքյա՛լ և Վըհո՛ւկ,
Գլուխը փոշոտ, դեմքն արփակեզ, աչքերն հուր
Ճառագայթե ցանց մը կարծես կը նետեն
Ամենուն վրա՝ և կը գրավեն, կը գերեն:
Ան կը խոսի, և խոսքն իր
Կը բուրե մերթ մեռոն և մե՛րթ ալ արյուն.
-«Ո՛վ եղբայրներ, պատրաստ եղէք, զի ահա
Խըմեցին մեր դաշտերն ա՛լ
Արյան հետին կաթիլն Հայկի Երինջին.
Անհունության մեջ մեռավ
Հետին պոչունն աստղերն ի գութ շարժելով:
Պատրաստ եղէք, - յուրաքանչյուր վիհի մեջ
Այս իրիկուն պիտ' կանգնի

Հայրենական ըստվեր մ'ու վրեժ պիտ' գոչե.
Այն ատեն թող ձեր սըրտերուն մեջ ըլլա
Յեղին կորովն և ցեղին թույնն արթընցած,
Ձեր հյուղակները փոխվին
Մարտկոցներու, և մամերն ալ երգելով
Հենասանտրին առջև նըստած թող հյուսեն
Ձեզ կամ դրոշա՛ կ, կամ պատա՛նք:
Պատրա՛ստ եղեք Արշալույսին՝ որ կու գա
Ձեր կողին վերքը լըվալ.
Պատրա՛ստ Խաչին, Ձիթենիին, Դափնիին»:
Այսպես կ'ըսե, երբ կը զգա
Կըրունկներուն լուսաբուխ
Ոստիկանի կամ լըրտեսի մը անարգ
Գելոցներուն սեղմումը ցուրտ...

Դ

Ո՛հ, ի՛նչ փույթ
Թե իր սուրբի անբիծ մարմինը կ'երթա
Դառըն համա՛ր տալու հոգվույն գործերուն,
Թե կը տանի թըշնամին
Վաստակաբեկ իր միսին վրա հաղթանակ,
Ի՛նչ փույթ թե բանտը խավար
Ծարավ լույսի՛ լույսն աչքերուն կը խըմե,
Թե կը թունե տամկությունն
Իր ողնածուծն և խոռոչները թոքին,
Ան կը մընա հավատքին մեջ՝ աննըվա՛ճ,
Վագրերուն պես իր երկրին:
Իսկ եթե օր մ'ալ ազատի, ու նորեն
Շընչեն ռունգերն հովն հայրենի սարերուն,
Պիտի առնե՛ ապահով՝
Դարձյա՛լ իր ցուպն ու դարձյա՛լ
Վըսեմ պաշտո՛նը լույս և բոց սըփռելու.
Սակայն, ավա՛ դ, կոշկոճ մարմինը պիտ' ա՛լ
Անհունությունն հոգվույն կըրել չըկըրնա
Եվ պիտ' կոտրի խընձորենի մ'ինչպես իր
Պըտուղներուն ճոխության տակ կորակոր...
Թափառելո՛վ, թափառելո՛վ ընդերկար
Փոշվույն, տապին, անձրևին մեջ երբ դեղնի
Դեմքն, ու հոգնին ոսկըրներն,
Երբ նոթությունն երակներն իր ցամքեցնե,
Ջերմը թեքե ծունկերն՝ հեղլով ըղեղին
Արհավրալի խուճապներ,
Երբ կուրծքին տակ արթըննա
Անգույթ հյուծախտն ու ա՛լ խեղդե հույսն հետին,

Հետին ծաղիկն երիտասարդ տարիքին,
 Ան պիտ' հասնի գուցե, այո՛, պիտ' հասնի
 Մայրամուտքի մը ժամուն
 Գըլուխը բաց, ոտքերը բոկ, արյունվա,
 Ըզգեստներով փոշեղից
 Հո՛ն, ուրկե օր մ'առողջ, տոկուն, մեկնած էր...
 Բայց, ո՛հ, ոչ մէկն իրեններեն գրկաբաց
 Պիտի գա զինքն ողջագուրել ճամբուն վրա.
 Հայրենական տան դուռը բաց պիտ' գրտնէ,
 Ջրհորին քովի ուռնի ծառը չորցած,
 Բակն ամայի, օճախն ամբո դջ ավերակ...
 Ա՛խ, այն ատեն, դողդոջուն,
 Ցուպն իր առջևը հողին մեջ պիտ' խըրե
 Ու պիտ' նըստի, դըրան քով,
 Գերեզմանին վըրա իր մոր (հարդարված
 Հոն ով գիտե որո՛ւ գըթոտ ձեռքերով)
 Եվ դալկահար շողերուն մեջ իրիկվան,
 Մեռելի դեմքն իր կախ ձրգած կուրծքն ի վար,
 Պիտի հագա՛, պիտի հագա՛ դառնորեն,
 Եվ բիբին մեջ արցունքի շիթ մը սառած
 Պիտի հատնի՛...
 Բայց հայրենի հողին մեջ
 Խըրած ցուպն իր, Արշալույսին, ըսկըսի
 Պիտի առջևն իր՝ ծաղիկնէ՛ր արձակել:

ԴՅՈՒՑԱԶՆԻ ՄԸ ՍՈՒՐԻՆ

Երբ գենքերով թաթաղուն գոտիեդ դուրս քաշես գայն՝
 Ամպին ծոցեն սըլացող կայծակին պես կը փաղփի:
 Երկաթն ի վար ցոլցոլուն կը վազե լույս մ'հրահոսան
 Նայվածքներուդ տակ արփի:
 Անոր մետաղը Վրեժին ճոխ հանքերեն են պեղեր:
 Գեհենական հաղթ դարբին մ'է կըռեր գայն փողփողէջ,
 Հետո հըսկա հասակովն աստվածաբար ջըրդեղեր
 Արդարության լույսին մեջ:
 Իր փըղոսկրե դաստապանն է ո՛րքան պերճ ու փարթամ,
 Շուրջն են հեռեր մարգրիտներ արցունքներու պես պայծառ.
 Զայն բուռդ հազիվ թե սեղմե՛ աչքերուդ մեջ կը կարդամ
 Մահվան վըճիռն անաչառ:
 Ո՛հ, իր սայրին նըրբավարտ, աներևո՛ւյթ իր սայրին՝
 Որուն վըրա ճաճանչն ալ նույնիսկ թառիլ չի՛ կըրնար.
 Ադամանդ իսկ լուսակուռ, մըտածումն իսկ մարդկային
 Ան խազերու ունի հնար:
 Շե՛ղբը հետո պաղպաջուն, իր շեղբը մերկ և արու,

Որուն կարծես կիսակոր կաղապարին ձևին մեջ
 Լույս մ'է սառեր, աղոտ լույս մ'արյունահեղձ կյանքերու
 Քերովբեի կրովեդ վերջ:
 Ես կը պաշտե՛մ Սուրդ արդար՝ մահիկին դեմ լուսնային,
 Ժամերով ծունրը դընող սուրբ հընդիկի մը նըման.
 Ազատ մարդուն պատասխանն, հովվացույն է Յահվեին.
 Ան ցուրտ լեզո՛ւն է Մահվան:
 Փայլակնաթափ հարվածն իր՝ թագերուն վրա ոճիրե
 Կ'երգե հանգի՛ստ գոհերուն, գերիներուն՝ ավետիս.
 Հին արյունով նոր օրենք դարերուն վրա կը գըրե...
 Ան հավա՛ տքն է իմ սըրտիս:
 Հերո՛ւ ընկեր, մոտեցիր իմ այդ հավատքըս պողպատ
 Ես քըրմորեն վար կախեմ գոտիեդ այդ կարմրավերտ,
 Սուրդը կախե՛մ, դըրած իր պատյանին մեջ թավշապատ
 Համբույրիս հետ իբր ողջերթ...
 Դարձյալ քանդել ըսկըսան բարբարոսները դըժխեմ.
 Կացիններուն տակ նորեն կ'արյունին մեր մարմարներն.
 Հերո՛ւ ընկեր, մոտեցիր, մոտեցիր Սուրդը կախեմ...
 Ան ըսպաննե թող եղեոն:
 Արշալույսին կառքն արդեն կը սպասե մեր դըրան քով.
 Պէտք է մեկնի՛ լ: Սակայն հոն խառնուրդին մեջ հարվածի
 Չըմոռնաս որ Սուրիդ վրա իմ ոսկեղն հերյունով
 Ես «Կյանք կա՛մ Մահ» գըրեցի:

ՄԱՏՆԻՉԸ

Բավակա՛ն է. գընտակ մ'առած կը մեռնի,
 Դեմքը՝ գետնին, իբրև հողին սըրբության
 Ներքն թաղել ջանար իր մեղքն հոլանի,
 Իբրև ճընշեր մեծ Դատավորն իր վըրան:

Զինքը չի լար ո՛չ ոք, ո՛չ ոք չի սըգար.
 Ավելորդ է: Հըրեշ մ'եր ան անդունդի
 Նետեց հոգին, հոգին նետեց դեպ խավար,
 Ինչպես տըզրուկ մ'արյուն ծըծած կը պայթի:

Փոսի՛ն, փոսի՛ն. Արևը թող իր վըրան
 Չը պըղծըվի. շողն անկեղծ է, անձնվեր է.
 Իր համբույրին մեջ թույն չապրիր մատնության,
 Հողին, սերմին մեջ կյանք, արյուն կը ծորե:

Փոսի՛ն, փոսի՛ն. և թող ըլլա փոսն այդ խոր,
 Խո՛ր՝ անդունդեն, խոր՝ դըժոխքի պարույրեն.
 Լույսին տարափն հոն չըսուզի հեշտածոր,

Եվ ձայնն հովին, և կամ արցունք մ'աստղերեն:

Փոսի՛ն, փոսի՛ն. մեծ է վարձքն, ո՛վ մարդիկներ.
Վերցուցեք օձն՝ որ կը թուներ թագնըված,
Հեռացուցեք լիզողն օտար կոշիկներ,
Կամ մեր այն շունն՝ որ մեր քղանցքեն էր խածած:

Ո՛հ, ան շատե՛ր լացուց, լացուց ուղիտրեն,
Իր բացած լայն վերքերը դեռ կը ցավին
Հյուղակներու և բանտերու խորերեն...
Իր սիրո ավին ելունդ թողուց ավին:

Մեր արցունքով արյունով հացն է խմորած,
Եվ մեր ոսկրեն ոսկրը ջիղեն ջիղ էր ան.
Մընված մ'էր լոկ մեր հյուծանքեն գոյացած.
Մեր կառափտեղն էր խընջույքի իր սեղանն:

Եղբայր մը զինք ընդգրկեցինք. Կայե՛նն էր:
Մեր պորտն իրար կը գողեր մոր մեկ աղիք.
Կը հանգչեին նույն խաչին վրա մեր շըրթներ.
Մատնեցին մեզ այդ շըրթունքներն ավասիկ:

Ազատության գըլխարկին տեղ փոյուզական՝
Ջոր ընդվըզումն արյուն թելով է հյուսեր,
Ան Սուլթանին մահիկն ընտրեց լանջքին վրան.
Մըզկիթ գընաց, Նեմեսիսն՝ իրավ փեյղամպեր:

Առաջնորդեց հոտառու շան մը նըման
Թըշնամին մեր հյուղերուն մեջ, ռումբի բով.
Հետո պառկած մեր բանտերուն շեմին վրան՝
Հըրճվանքի երզն ոռնաց կարմիր ցըռուկով:

Խածավ պատռեց ըստինքն այրի իր մորկան.
Ուրկե ծըծած էր ումպ առ ումպ իր օրեր.
Եվ կոտրեց զինք մեծցընող այն օրորանն՝
Ուր մեր և իր Վաղը տըժգույն կը նիրհեր:

Դիակ մ'է արդ, խորիս՝ գոր թողուց օձ հոգին.
Միրտը ժահրի թակույկ մ'է ալ խորտակված,
Ափին մեջ պինդ՝ գոր կը սեղմե տակավին
Արծաթը թեփ և ոսկին հող է դարձած:

Ոչի՛նչն է ան. Ժողված գանկին թասին մեջ
Հյուլեններն իր մըսին, տառերն իր անվան՝
Թողեք իջնե մոռացման վիհը անվերջ,
Թող մեր անե՛ծքն իրեն ըլլա լոկ դամբան:

Չըլաս, ո՛վ կին, դու, որ պիտի չըտաս ալ
Արգանդ հրեշի մ'որուն սերմն է իժի թույն.
Չըլաս, ո՛վ կույս, չըլաս հոգին այդ մըռայլ.
Հայրը հայր չէ՝ երբ դահիճ է շատերուն:

Մոռցի՛ր սերն իր, ըսպաննէ՛ այդ արյան սերն.
Հոգիիդ մեջ ճըզմե հունտերն իր համայն.
Իր վիզն անցուր երկար մազիդ խոպոպներն
Եվ սուրբ վրեժով, ո՛վ կույս, խեղդե՛, խեղդե՛ գայն:

ԴԵՐԵՆԻԿԸ

Դուռը կը բացվի. Դերենիկն, ահով,
Իբրև թե այծյամ մ'ըլլար նետահար,
Մորը թևերուն մեջ կ'իյնա լալով.
-«Ի՞նչ ունիս տըղաս... ըսե՛ շուտ... մի՛ լար.
Օ՞ճը քեզ խածավ, թե աքացեց ձին»:
-«Գըլուխը՛ս պատռեց դըրացի Ալին...»:

Եվ ան ցույց կու տա սև գանգուրներուն
Ներքև վերք մ'ուրկե բըխելով արյունն
Հայ գըլխիկն այդ՝ թո՛ւրք ոխով կը թըրջե:
Քաջ մորն հոգվույն մեջ վիհեր կը բացվին
Լեցված ամոթով. գըզվել կըրթի՞ չ է
Սըրտի վրա՝ հաղթված ճակատն երկչոտին:

Պահ մ'իր գուրթին խուլ՝ կը մըղե ի բաց
Կուրծքեն գըլուխն այդ իր փոքրիկ վատին.
Եվ կը գոռա. «Դո՛ւրս... մինչև որ հաղթած՝
Արյուններդ անոր արյամբ չըմաքրին՝
Այսօր տուն չես գար: Մատնի՛չ խնամքներուս,
Միթե վարսակի հացո՞վ սընար... Դո՛ւրս»:

Տըղան ամոթեն շիկնած՝ կ'առարկե.
-«Բայց, մայրի՛կ, Ալին թուրքի գավակ է.
Աչքին մեջ հեռ կա և մեջքը փալա»:
-«Իսկ դու ալ հայ ես, և մեջքդ ըլլա՛
Թող իմ մըկրատս, իլս, ի՛նչ որ կ'ուզես... Դո՛ւրս»:

Դերենիկն այպեն գետին նայելով
Կը մեկնի անձայն... Հոն ծառի մը քով
Զինքը կը տեսնեմ լույսով լուսնակի.
Մեծ քար մը ձեռքին, ջլաձիգ, դավկահար,
(Մինչ արյունն այտեն վար կը կայլակի)
Թըշնամվույն շեմին կը սպասե, երկա ր...

ՎԻՐԱՎՈՐԸ

(Հայ-թաթարական կոիվներուն առթիվ գրված)

Այստեղ ինկավ. ազատության ճամբուն վրա,
Խոցը կուրծքին, զենքն ափին
Այստեղ ինկավ, երբ հոգնած

Վերջին կաթիլն իր քրտինքին ըսպատեց
Իր վերջին սև գընտակին հետ: Վերքն է խոր.
Հրաբորբ արյունը՝ ուրախ
Գըտած ազատ իր անցքեն
Դուրս կը վազե: Կարմրած ծոցին մեջ մագոտ
Մեզի համար նոր Արշալույս մը կ'եփի:
Դեռ չէ՛ մեռած. և եթէ վարն՝ ալքին տակ՝
Իպլիսի թուխ բազուկն իրեն կը մըղե
Մոռացոնքի լայն գերեզման մ'հուպ ընդհուպ,
Իր սուրբ անվանը համար
Մեր սըրտերուն մեջ կը հյուսվին շանթերով
Անմահության օրոցքներ նոր և կարմիր:
Դեռ չէ՛ մեռած. վերջին անգամ վեր կ'առնե
Թըխահեր գլուխը բանվորի, հերոսի,
Որուն մեջ բույնը դըրավ
Կովկասի վրա աստղերեն հար լույս խըմող
Ազատության արծիվը վեհ ու կարշնեղ,
Եվ կը նայի, շուրջը կ'նայի թե արդյոք
Իր արյունեն նունուֆարներ պիտ' ելլե՞ն,
Կամ պիտի օր մը ծըլի՞ն
Հեստ բաղեղներ ցախերը սև ընդունող:
Կը դիտե դրոշն և ծուխն հրագոռ վառողին՝
Որ կը մըխա գանկերե դուրս՝ շընչելով
Իր ռունգին կյանք և գըրգիռ:
Կը նայի վերն աշտարակին վրա թառած
Նոթի անգղի մ'աչք աչքի
Եվ կը խորհի գուցե տարված իր սըրտին
Կամ աղիքին մասերը դե՛ պի ամպեր,
Դեպի աստղերն ու Աստված:
Կը պըշնու վարն հորիզոնին՝ գըտնելով
Ռազմի դաշտին երկինքը շա՛տ մոտ իջած.
Հետո կ'հառին աչքերն հըսկա նոճերուն՝
Որոնց թագուն արմատներեն դեպի վար՝
Որոնք իսկամ իշխաններու բըռնավոր
Գերեզմաններ կ'ակոսեն
- Ո՛վ պատուհաս հոգեվարքի - կը հոսե
Սև անեծք մ'իր արյանը հետ ֆըշացող:

Ի անդի՛ն, անդի՛ն կգակ կըգակի, հույս հույսի
 Բախվող ռազմին, սակըրներուն, բռունցքներուն
 Եվ բոցափթիթ ռումբերուն մեջ, ո՛վ սարսուռ,
 Կանանչ ոստի՞ մը արդյոք,
 Աստղի՛ մը նոր՝ որուն շողն հերձ պիտ՛ լայնե
 Ծիրն աշխարհիս և մարդուն,
 Բառի՞ մ՛հրաթն, Մեսիայի՞ մ՛ըսպասված,
 Ո՛հ, ո՛վ գիտե. ան վերջին ցուրտ դողումով
 Հանդարտորեն, անհունորեն կը ժըպտի՛ :
 Ժըպտե՛ , ժըպտե՛ . ո՛վ եղբայր,
 Մեծ՝ ինչպէս մեծ է խավարումն արևու,
 Սուրբ՝ Նըշխարին նըման բեկվող. դէ՛հ, ժըպտե՛ :
 Ժամն է որ քաջ հայ մարտիկներն ա՛լ ժըպտին.
 Զի մենք իրենց և քու վրեժիդ ի խընդիր,
 Մենք, ռամիկ Ուժ գիտակից,
 Թարմ բողբոջներ շըղթաներու, գերիներ
 Ապըստամբած՝ որոնց ճակտի՛ն տակ այսօր
 Իբրև բոց պորտն Ապագային՝ գետեղեց
 Աստված իր աստղը փըրկիչ,
 Մենք, բաց կուրծքեր, մազոտ կուրծքեր, սոթտըված
 Բագուկներ, մե՛նք, սուրբ Գործին
 Ընտըրվածներ, պաշտվածներ
 Գաղափարեն նոր և լայն.
 Մենք, Ժողովո՛ւրդ. պըղընձակերտ աստվածներ
 Ըաֆֆիներու, ... մենք զինված
 Հրացաններով, բահերով,
 Եվ մուրճերով, հավատքով,
 Դիիդ առջև, կուտ մոլուցքով մը սնցած,
 Ավասիկ վեհ, ոտքի՛ , ոտքի՛ կեցեր ենք:
 Եվ կ՛երդնո՛ւնք քեզ, կ՛երդնո՛ւնք քեզ,
 Որ երբ դագաղդ ուղղվի դեպ ի գերեզման՝
 Պիտ՛ սալարկեն անցած ճամբան իր ամբողջ
 Սուրերը մեր ծանրակիր
 Թըշնամիին արյունշաղախ գանկերով.
 Թափորիդ ջահ պիտի ըլլան, դեմ դիմաց,
 Հըդեհն անո՛նց տուներուն՝
 Որոնք իսլամ ժանիքը մե՛զ ուղղեցին:
 Եվ կ՛երդնու՛նք քեզ, ընկե՛ր, կ՛երդնու՛նք որ այսօր
 Մինչ հազար՝ վաղն աստղերու չափ պիտ՛ ըլլանք.
 Վաղը, այո՛ . երբ մենք՝ իբրև կարմիր փունջ՝
 Շիրմիդ ոտքին մեկ ցիցի վրա նիզակենք
 Գլուխը Ցարին կամ Սուլթանին. Բըռնությունն.
 Մեր որդիներն հա՛ դթ, զըվա՛րթ,
 Պիտի սնարիդ դընեն վարդե պսակը ծանր
 Ազատության: Կ՛երդնո՛ւնք, ընկե՛ր, կ՛երդնո՛ւնք քեզ:

ԱՐՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿ

Բըռնակալն էր նըստած գահին վրա բոսոր՝
Շիրմաքար մ'իր պատվանդան, ա'մպ մ'հովանյակ...
Հարձերո'ն հետ ան իշխելու էր սովոր
Ժողովուրդի մ'որ կը ծնաներ նահատակ:
Շուրջն իր հավետ կը բարձրանար ծով մ'արյան՝
Ջոր կը խըմէ՛ր: «Հպատակներու սըրտի'ն մեջ
Ամենահին գինին կ'եռա»: Կ'ըսէր ան.
Եվ կը սըրբէր ծիրանիով կլափը գեջ:
Կը բարձրանա՛ր միշտ արյունն: Ան կը զբոսնուր
Հերձելով տաք հեղուկն ոտքով գերդ քեղի:
Հոն խեղդվելու ամեն կասկած էր իգուր.
Թագն արքայի մ'համար դըդում չէ՞ լյուղի:
Բայց գոհերուն արյունն հըզոր, ժըրաջան,
Գահին հիմերն կը փըտեցներ լըռակյաց.
Եվ օր մ'ալ գայն տապալելով՝ կըլլեց ան
Բըռնակալն իր ծիրանվույն մեջ քընացած:

ՀԱՂԹՈՂԸ

Ահագնադոհինչ բացվեցան պըղնձե դըռները Քաղքին.
Պատերազմի տաք փոշին դեպ ներս խուժեց մըրըկագին՝
Որուն միջն իր ձիուն վըրա Հաղթողն երևցավ,
Ու հառաջեց փառապանծ: Գերիներու շարք մ'անբավ,
Ասորիներ և մարեր, պարսկուհիներ թխագանգուր,
Վիզ վըզի հետ շըղթայված օղակներով ոսկեկուռ՝
Ետեն լոկի գային ծախվելու վաղն աճուրդի:
Ահա սայլերն ավարին՝ լի հակերով արծաթի,
Ահա թագերն անոնց մեջ և գահերու բեկորներ,
Գերի բերված աստվածներ, նախնիներու ոսկորներ:
Եվ Հաղթողն ի'նք – առջևեն - միշտ ըսպիտակ ձիուն վրա
Անոնց կ'իշխե, կը բերե գանոնք Քաղքին իբր ընծա:
Արդեն կըռվի դաշտին մեջ գորքերը զինք պսակեցին.
Երկու թարմ ոստ դափնիի շուրջը գըլխուն դեռ կ'աճին.
Սուրն իր կուշտեն կը կաթե արյո'ն ծորան առ ծորան.
Ճոշանին վրա կը փայլի խոժոռադեմ Գորգոնան,
Եվ իր հասակն հերոսի կը ցըցվի ա'յնքան հըսկա՝
Որ արևն իբր ադամանդ սաղավարտին կը շողա:
Քաղքին մեջ սով կար երեկ, այսօր խրախճանքն է համակ
Փողերն ահա կը հընչեն աշտարակե աշտարակ,
Չյուն տատրակներ օղին մեջ կը դառնան հիռ և հոլով՝

Գիրգ փետուրներ լանջքերեն կույսերուն վրա թափելով:
 Հաղթողին դեմ կը խուժե ամբոխին ահա գերդ ալիք.
 Կը թողու հյուսն իր սրդոց, ջաղացպանն իր աղորիք.
 Ջահրակ դարձնող պառավները կը վազեն դողդոջուն՝
 Դեռ մազերնեն չըմաքրած բուրդի ծվենները կառչուն.
 Կու գան կույսեր վարդերով և Աստղիկեն կը ցանկան
 Հաղթողին քով կըրվող գե՛թ զինվոր մ՛իրենց սիրական.
 Քուրմերն ահա կը վառեն արձանին դեմ Վահագնի
 Նըվիրական խարույկներ ու կը գոհեն կենդանի.
 Կը խոշոշեն հովիվներն անոր անցած ճամբուն քով
 Քառսուն ոչխար դեռ հրդի քառսուն ջուխտակ գառներով.
 Տըղաք արմա՛վ են բըռներ և աղջիկները հիրիկ՝
 Որոնք դեռ փոքր՝ արյան տոնն այդ կը կարծեն հարսանիք.
 Քողերն իրենց կը փրռեն հարսերն անոր անցքին վրան.
 Կիներ բերած սափորներ՝ զինիի մեջ կը լըվան
 Ձիուն տըղմուտ սըմբակներն ու լայն երբուծն հըրատապ:
 Ան, լուռ, կ՛անցնի բյուրավոր կամարներեն ծաղկակապ՝
 Ուրկե վըրան կը թափե թերթերն հրագույն վարդենին.
 Ամբոխին վրա կը նայի ինչպես արևն օվկիանին.
 Նայվածքն իրեն՝ կը քաշե ալիքներն այդ թըխաթույր՝
 Որոնք այսօր կը խայտան, կը մորնչեն վաղը կույր,
 Ի՛ր արփվույն բիծերը լըվալ չըկըրնալեն՝ վրիժատուն՝
 Դեպի անոր կը թըքնեն սարսափն ամբողջ վիհերուն:
 Ու ամբոխն հար կը հորդի, կ՛հորդի ամբոխն արբեցած.
 Դույլին մեջ ա՛լ կաթ ունի, տաշտին մեջ ա՛լ ունի հաց.
 Եվ կը հենու ծիրանի, կը հյուսե թագ-մարգարիտ.
 Կը գոչե. «Փա ոք քեզ, Հաղթող, համբո՛ւյր կարմիր քու սուրիդ.
 Դու՝ որ զինվոր մեկնեցար, վերադարձար դյուցազ հաղթ,
 Մեզ Քաղաքս այս պաշարող թըշնամվույն դեմ եղար լախտ,
 Դու՝ որուն ճոշն արևն է, և կայծակն է՝ իր գեղարդ՝
 Ջոր Հեփեստո սն է դարբներ սալին վրա ուռնահարդ,
 Դու՝ որ բեղուն ըրիր մեր դաշտերն արյամբ, բերիր մեզ
 Թագուհիներ՝ աղախին, և իշխաններ՝ ծառայ հեզ,
 Փա ոք քեզի, ո՛վ Հաղթական, համբո՛ւյր կարմիր քու սուրիդ,
 Հառա ջ անցիր, մենք ըզքեզ կ՛ուզենք արքա լուսամիտ:
 Ո՛ւր որ նիզակդ հասնի՝ հոն իրավունքիդ ըլլա զիծ.
 Մեզ դատավոր դո՛ւ միայն, լոկ քեզ Թեմի՛ս գահակից.
 Պիտի միշտ մեր դաշտերուն մեջ սերմանենք հոգնաշխատ
 Ճակտիդ համար բրաբիոն, և բանակիդ հացն առատ:
 Հառա ջ անցիր, ո՛վ Փըրկիչ, ձիդ հըրապարա՛ կը վարե.
 Քեզ ոսկի գահ ենք կանգներ պալատին մեջ մարմարե.
 Քառսուն կույսեր նվիրված Անահիտի մեհյանին՝
 Գիշեր ցորեկ կը հյուսեն գոհարով քու ծիրանին.
 Քու գավազանդ ենք կըտրեր անտառներեն սուրբ Սոսյաց՝
 Որոնց միջև սարդը պիդո՞ ոստայնն երբեք չե՛ կապած.
 Եվ թագըդ քու մարգարտե՝ սաղավարտիդ պես հըսկա՛

Ինքն Արամագո երկրնքեն պիտի դրնե գրլխուդ վրա:
Փա՛ռք քեզի, ո՛վ Հաղթական, համբո՛ւյր սուրիդ այդ կարմիր,
Արքա կ'ուզենք մենք ըզքեզ, գահը դ դեպի Բարձրացիր»:
Հաղթողը լուռ ունկընդրեց՝ աչքերն հառած հորիզոն,
Հետո իջավ նըժույզեն, դըրավ թամբին վըրա հոն
Դափընեպսակն հանելով իր ծեր ճակտեն դյուցազնի,
Տըվավ ճոխ սանձը խարտյաշ տըղու մը ձեռքն արքենի՝
Որ կեցած էր հոն ձիուն Բաշերուն տակ աղեբեկ.
Եվ ըսավ խոլ ամբոխին. «Իմ գյուղըս զիս դըրկեցեք»:

ԱՎԵՐԱԿՆԵՐՈՒ ՏԻԿԻՆԸ

(Օսմանեան Սահմանադրության առթիվ)

Պողպատ սալեն՝ որուն վըրա դարբնեցին
Ազատությունն երիտասարդ բազուկներ՝
Հանկարծ վարսամ մ'ելավ ու վե՛ր խոյացավ:
Բոց մազերեն անձրնելով կըրակներ
Սավառնեցավ հորիզոնե հորիզոն.
Մերթ իջնելով տըվավ համբույր մայրենի
Ըստրուկներուն բերաններուն և ճակտին.
Մըրըրկումին մեջ կայծաբորբ էության
Կարծես երկինքն երկրիս վըրա թոթափեց.
Եվ ձյունի նման, օշարակի հանգունակ
Լույս մը ծորեց ամբոխներուն աչքերեն
Մինչ սըրտին խորն անոնց:
Այն ատեն շոինդ մը շըղթայի շառաչեց՝
Որ վար կ'իյնար առհավետ
Հոգիներուն և վիզերուն վըրայե,
Եվ Թուրքիո լայնապեղ կուրծքն անսահման
Ուրախության ժայթքեց անա՛նկ աղաղակ
Մ'որ շիրիմներ հըսկող բուերն իսկ դյութված
Պահ մ'ըսկըսան տատրակներու պես մընչել:
Ո՛վ Բըռնավոր, նըստած ոսկրե գահույքի,
Փակե՛ աչքերդ, աչքերդ փակե՛ ափիդ մեջ.
Ամբոխն է՝ որ կ'արթըննա
Դրանն առջև պալատիդ:
Ո՛վ Բըռնապետ, սվիններուն ծա՛յրն է այսօր՝
Որ փըռյուզյան գըլխարկը վե՛ր կը ցըցվի...
Ազատության տոնն ահա՛ .
Ժողովուրդներ կանանչին վրա Վոսփորին
Եղբայրության խըրախճանքին են նըստեր.
Երկրնքեն վար Տոթաբերի արեգակն
Հար կը լեցնե բաժակներուն մեջ անոնց

Արյուն մը հին հերոսներու մորթըված:
 Այն ժամանակ Կին մը կապույտ աչքերով՝
 Որ դարերով նըստած էր
 Ավերակի մը սյունին վրա թավալած,
 Որ կ'անիծեր, կամ կ'աղոթեր, կամ կու լար.
 Քուրձ կը հագվեր, մոխի ը կ'ուտեր,
 Եւ մայրորեն ծիծերն ափին մեջ բըռնած՝
 Անմահությունն իր անոնց մեջ կ'օրորեր,
 Հանկարծ լըսեց հըրավերն
 Ամբոխներուն ծովածուփ.
 -«Տիկի՛ն, Տիկի՛ն, եկուր կարմիր խընջույքին.
 Աքսախները Վոսփոքի ափերուն
 Ամեն գարուն ուսերուդ վրա կոշկոճված
 Պիտ՝ անձրևեն ծաղիկներն իրենց քաղցրաբույր.
 Պիտի գա ծովն համբուրել
 Մինչե՛ ծունկերդ ըսպիտակ,
 Եվ վիհերեն քեզ գոհարներ պիտ՝ բերե.
 Սիրենաներ՝ քեզի նաժիշտ պիտ՝ բերե.
 Տիկի՛ն, Տիկի՛ն, եկուր ճերմակ խընջույքին:
 Քեզի քացա իս, քեզի լեղի՛ խըմցուցինք.
 Ներե՛ մեզի. ոտքիդ առջև կը փըշրենք
 Նիզակն ահա և փուշպըսակը գըլխուդ.
 Ներե՛ մեզի և եկուր,
 Եկուր կարմիր խընջույքին»:
 Նոյն ատեն աստղ մ'ահավոր
 Փռեկելով ժողովուրդներն ապշահար՝
 Եկավ և հինգ անգամ դարձավ գըլխուն շուրջ
 Ավերներու Տիկինին,
 Եվ փըշըրված, հանկարծակի, ուղիտրեն,
 Մազերն ի վար հոսեցավ
 Հալած մեղրի հանգունակ:
 Եվ կինն հիասթափ հավատաց
 Ազատության և անսահման խինդերու:
 -«Ո՛վ իմ հնագանդ աղախիններս, ըսավ ան.
 Աղախիններըս թըխացած թներով,
 Դուք որ երկար դարերու մեջ հըսկեցիք
 Ոտքիս առջև. ձեր մազերով սըրբեցիք
 Կուրծքիս արյունն հարաբուխ,
 Եվ ձեր շըրթունք ըրիք ըսպունգ քնքշական
 Սըրտիս վերքին, օ՛ն, մեհևանդ բերեք ինձ,
 Ավերներուն մեջ արցունքես բողբոջած
 Մեծ ծաղիկնե՛րը բերեք:
 Կ'ուզեմ այսօր դըշխոյի պես զարդարվիլ.
 Կ'ուզեմ որ միսըս թարմորեն սըրսըփա
 Ինչպես ծաղկած դեղձի ծառը մատղաշ
 Անձրևեն վերջ մայիսի:

Կը լսեմ բոլոր հովիտներեն որ կ'ելլե
 Որդիներու ծիծաղն, և ա՛լ չեմ կրնար
 Մներ հագնիլ և ողբալ սև արցունքներ:
 Թող բերվին ինձ պատմուճաններս հինօրյա.
 Սա ծանրը ծա՛նրը վարդերով պսակը, օ՛ն,
 Դըրեք շուրջը վեհ գըլուխիս, դըրեք վարդ
 Գոտիիս մեջ, մեջքիս վրա.
 Եվ գինդերս իմ, ապրանջաններս ու մատնիս
 Ջետեղեցեք... այսպես, ահա՛ ... ա՛լ երթանք
 Դեպի Վոսփոր, կարմիր ճերմակ խընջույքին»:
 Ժողովուրդները հոն էին, քով քովի,
 Մեկ արևու տակ նըստած:
 Ավերներու Տիկինը երբ երևցավ՝
 Բոլոր դափնի և ձիթենի նետեցին.
 -Դըշխո՛, դըշխո՛, կոչեցին,
 Իր կողերուն լայնության վրա հիանալով՝
 Անոնց մեջ օր մ'օրորված
 Հերոսներուն անվան ըրին գովասանք:
 Ան նըստեցավ ամենուն հետ միատեղ,
 Ամենուն մեջ. և կերավ՝ մերթ ծիծաղկոտ՝
 Եղբայրության աղը ձյունի պես ճերմակ,
 Եվ ան խըմեց, խըմեց գինին հընձանված
 Ափերուն մոտ Իռիսի,
 Եվ ան խըմեց, խըմեց գինին կարմրաբորբ:
 Ո՛վ խոլություն կնոջական,
 Ո՛վ այնքան սուրբ վրեժներու,
 Եվ ահավոր վիշտերու
 Լըռիկ, մընջիկ տապալում:
 Ըսե՛ Այրի, ըսե՛ Դըշխո, ըսե՛ Մայր,
 Պիտի հրաբուխդ ա յսպես լեռն իր պայթեցներ:
 Ու ան խըմեց, խըմեց գինին կարմրաբորբ...
 Ձեռքին մեջ բյուր բաժակներ
 Ջախջախվեցան, և մարմարե ուսերեն,
 Արմունկներեն արփիացուլ հոսեցավ
 Ջըվարթ հեղուկն հակիթներու պես հալած.
 Թողուց որ գլուխը շոյե
 Լըրջադեմ Թուրքն և կամ Չերքեզն հաստահոն.
 Եվ Հըրեային և Հույնին
 Ճակատներուն վրա թոթվեց
 Սև անտառներն իր խընկաբույր մազերուն.
 Քըղանցքը վեր հանգրըճած՝
 Կանանչին վրա նըրբակոշիկ ոտքերով
 Կաքավեց ան, պարեց դա փ, դա փ, դա փ գարկավ.
 Խուլ գործիքին ձայնն աղոր,
 Քողեքներուն շառաչներն
 Ու դոփդոփյունը խոլայած մատերուն

Ժողովուրդին վրա նվագներ թափեցին
 Եվ ներդաշնակ կարծես անձրև մ'անձանոթ,
 Ու երբ քողն իր վեր նետեց
 Եվ ըսպիտակ ալիքներուն մեջ անոր
 Ճախրե ց, դարձա՛վ, դարձա՛վ, դարձա՛վ հապըշտապ՝
 Կարծես թե ան բուստ մըն էր
 Ամբոխներուն օվկիանին մեջ հարածուփ
 Եվ կամ Աստղիկն արբեցած
 Տիոնիսյան խորհրդակալան տոներուն:
 -Կեցցե՛ ըսին այն ժամանակ հոն բազմած
 Մարդերն ամեն ցեղերու,
 Կեցցե՛ Այրին գեղազանգուր՝ որ ահա
 Մեկ օրվան մեջ կը ձրգե քողը սուգի
 Եվ լաչակն իր մոխրահոտ.
 Թող Վոսփորն իր վիհերեն
 Ամուսնական բերե մատնի մ'ադամանդ,
 Այս իրիկվան մեջ զուգելու համար զայն
 Մեծ Ազգին հետ օսմանյան:
 Կեցցե՛ Մայրն այն սևազգեստ՝
 Որ գիշերվան մեջ հերոսներ կը թաղե,
 Առավոտուն կ'ըլլա հարս,
 Հա՛րս կ'ըլլա, հա՛րսը բոլորիս, հա՛րսն արբշիռ,
 Որ ծովուն քով և խրախճանքի սեղանին
 Վարդ կը նետե ամենուն,
 Եվ ավասիկ կ'համբուրե
 Իր գինիոտ բերանով
 Մարդերն ամեն ցեղերու:
 Կեցցե՛ . - Ըսին այն ժամանակ, բայց հեռուն
 Այս խրախճանքի ժրխորումեն արթընցած
 Գայլ Վահաններն, Դավիթ բեկերն ընձառյուծ,
 Հերոսներն հին՝ գաղափարին հինօրյա,
 Գինովությունը տեսան
 Օտարներու առջև պարող իրենց մոր.
 Եվ սարսափած, մոլեգնադող, պատռեցին
 Իրենց վրեժի պատանքներն
 Ու շարժելով շիրմաքարերն իրենց հաղթ,
 Մըրտմըտանքե, առջի անգամն ըլլալով
 Արտասովեցին ու մութին մեջ կանչեցին
 Դեպ իրենց Մոր. - «Օլիաբա , Մալումե ...»: